

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ԱՎԵՏԻՔ ԶԱՍԼԵՏԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
 իրավաբանական գիտությունների թեկնածու,
 դոցենտ

Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Անվտանգության խորհրդի աշխատանքների ապահովման բաժնի վարիչ, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հիմնադիր նախագահ, Արցախի պետական և Մեսրոպ Մաշտոց համալսարանների դասախոս:

30-ից ավելի գիտական աշխատանքների հեղինակ:
 Մասնակցել է Արցախում, Հայաստանում և նրա սահմաններից դուրս կազմակերպված երեք տասնյակից ավելի գիտաժողովների, համաժողովների և սեմինարների: Նրա նախաձեռնությամբ Արցախում կազմակերպվել են մեկ տասնյակից ավելի գիտակրթական միջոցառումներ, այդ թվում՝ միջազգային գիտաժողովներ:
 Ամուսնացած է, ունի երկու որդի:



ՍԻՐԱՆՈՒՇ ԳԱՌՆԻԿԻ ՊԵՏԻԿՅԱՆ
 իրավաբանական գիտությունների թեկնածու

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հիմնադիր, Մեսրոպ Մաշտոց համալսարանի դասախոս, Գրիգոր Նարեկացի համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ:



30-ից ավելի գիտական աշխատանքների հեղինակ:
 Ամուսնացած է, ունի երկու որդի:



ԼՈՒՍԻՆԵ ԿԱՄՈՅԻ ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի առաջին կարգի մասնագետ, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ:
 7 գիտական աշխատանքների հեղինակ:

ԱՎԵՏԻՔ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍԻՐԱՆՈՒՇ ՊԵՏԻԿՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ



ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ
ՅԻՄՆԱԽՆԴԻՐՆ
ԱՐՅԱԽԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍԻՐԱՆՈՒՇ ՊԵՏԻԿՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

**ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2018
ԴԻՋԱԿ ՊԼՅՈՒՄ

ՅՏԴ 340:37
ԳՄԴ 67+74.00
Յ 422

Նվիրվում է Արցախյան շարժման 30-ամյակին

*Տպագրվում է Արցախի գիտական կենտրոնի
գիտական խորհրդի երաշխավորությամբ*

Չետագոտությունն իրականացվել է Արցախի Չանրապետության ԿԳՄՆ կողմից տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 15.10-002 գիտական թեմայի շրջանակներում

Գիտական խմբագիր՝

Ա.Յ.Խաչատրյան – ՅՅ Սահմանադրական դատարանի դատավոր,
ի.գ.դ., պրոֆեսոր

Գրախոսներ՝

Ա.Ա.Մանասյան – ՅՅ արդարադատության ակադեմիայի՝ գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր, ի.գ.թ., դոցենտ

Տ.Վ.Սիմոնյան – ԵՊՅ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբոնի դոցենտ, ի.գ.թ.

Ա.Յարությունյան, Ա.Պետիկյան, Լ.Բարխուդարյան

Յ 422 Իրավագիտակցության հիմնախնդիրն Արցախի Չանրապետության հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում/
Ա.Յարությունյան, Ա.Պետիկյան, Լ.Բարխուդարյան. - Ստեփանակերտ:
«Դիզակ պլուս» հրատ., 2018. - 160 էջ+8 էջ ներդիր:

Աշխատանքը նվիրված է Արցախի Չանրապետության ուսումնական հաստատությունների սովորողների իրավագիտակցության հիմնախնդիրին, որի շրջանակներում ուսումնասիրվել են վերջիններիս իրավագիտակցության մակարդակը, ներկայացվել դրա բարձրացման հիմնական ուղիները, հետազոտվել անչափահասների հանցավորության մակարդակը, երիտասարդության իրավագիտակցության ձևավորման, բուհերում իրավաբանական կրթության, ուսանողների իրավական ակտիվության, ինչպես նաև իրավագիտակցության ձևախեղման հիմնախնդիրները և վերջինիս հաղթահարման ուղիները:

Աշխատանքում ներկայացված են առաջարկություններ, որոնք կարող են որոշ չափով նպաստել բարձրացված հիմնախնդիրների լուծմանը:

Նախատեսված է «Չասարակագիտություն» ամսականի ուսուցիչների, պետության և իրավունքի տեսության, իրավունքի փիլիսոփայության, իրավունքի սոցիոլոգիայի և իրավագիտակցության հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

ՅՏԴ 340:37
ԳՄԴ 67+74.00

ISBN 978-9939-1-0742-4

© Ա.Յարությունյան, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

§ 1. Ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության ձևավորման հիմնախնդիրը 9

§ 2. Ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացման հիմնական ուղիները 33

§ 3. Աշակերտների իրավագիտակցության բարձրացումը որպես անչափահասների հանցագործությունների կանխման միջոց 41

ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ)

§ 1. Արցախի Հանրապետությունում երիտասարդության իրավագիտակցության ձևավորման հիմնախնդիրը 57

§ 2. Իրավաբանական կրթության հիմնախնդիրն Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում 66

§ 3. Ուսանողների իրավական ակտիվությունը որպես իրավագիտակցության ձևավորման կարևոր նախադրյալ 82

§ 4. Իրավական ժխտողականության հիմնախնդիրն ու դրա հաղթահարման ուղիներն Արցախի Հանրապետության երիտասարդության շրջանում 94

ՎԵՐՋԱԲԱՆ 105

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1. Արցախի Հանրապետության քաղաքացիների իրավական իրազեկվածության, իրավական գրագիտության և իրավագիտակցության մակարդակի բարձրացման հայեցակարգ	111
Հավելված N 2. Արցախի Հանրապետության դպրոցների ավագ դասարանների աշակերտների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման հարցաթերթի նմուշ	128
Հավելված N 3. Արցախի Հանրապետության երիտասարդության շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման հարցաշարի նմուշ	134
Հավելված N 4. 2016-2017 ուստարվա «Սահմանադրություն և իրավունք» դպրոցականների հանրապետական 1-ին օլիմպիադայի կազմակերպման և անցկացման ընթացակարգ	139
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	141

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Արցախյան իրավական իրականության մեջ ընդհանրապես իրավագիտակցության և մասնավորապես սովորողների իրավագիտակցության հիմնախնդիրը դուրս է մնացել գիտնականների և մասնագետների ուշադրությունից, այնինչ պետության նորմալ կենսագործունեությունը որոշ չափով կապված է երիտասարդության իրավագիտակցության հետ:

Պետականության կերտման երրորդ տասնամյակը թևակոխած Արցախի Յանրապետությունում մեծանում է մի սերունդ, որն իր վրա պետք է վերցնի ոչ միայն ավագ սերնդի կատարած աշխատանքի տրամաբանական ու հետևողական իրականացումը, այլև իր առջև դնի ավելի բարձր նշանո՞ղ՝ ապահովելու պետության անվտանգությունն ու բնականոն իրավական զարգացումը: Այս համատեքստում տեղին է հիշատակել Գարեգին Նժդեհի հետևյալ արժեքավոր խոսքը. «Ուզու՞մ ես տեսնել ժողովրդի ապագան, նայիր նրա երիտասարդությանը», իսկ երիտասարդությունը կարող է երկրին երաշխավորել տեսանելի ու հիմնավոր ապագա՝ օժտված լինելով նաև իրավագիտակցության բավարար մակարդակով և պատրաստակամություն ցուցաբերելով կառուցելու Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետություն:

Արցախի Յանրապետությունում քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի բարձրացման ու իրավական դաստիարակության միջոցով օրինապահ քաղաքացիներ ունենալն ավելի նախընտրելի է, քան անազատության մեջ հայտնված մարդկանց օրենքի տառն ու ոգին բացատրելը, այսինքն՝ նախազգուշացնելն առավել նախընտրելի է, քան ուղղելը: Դրանից զատ, քաղաքացիների իրավագիտակցության բարձր մակարդակը ոչ միայն նպաստում է իրավական պետության կառուցմանը, այլև նրանց հնարավորություն է ընձեռում իրենց առօրյա կյանքը կազմակերպել ավելի գրագետ ձևով, ինչը կա-

րող է գերծ պահել մի շարք իրավախախտումներից և դրանց հետևանքները վերացնելուց:

Դպրոցական և ուսանողական նստարանից սկսած անհրաժեշտ է աշակերտի ու ուսանողի մեջ սերմանել օրենքը հարգելու և դրան հետևելու հիմքերը, ուստի ուսումնական հաստատությունների առջև ծառայած առաջնահերթ խնդիրն է աշակերտների և ուսանողների մոտ ձևավորել իրավագիտակցության ու իրավական գրագիտության պատշաճ մակարդակ:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ սույն հետազոտության շրջանակներում սոցիոլոգիական հարցման եղանակով ուսումնասիրվել են Արցախի Յանրապետության դպրոցների ավագ դասարանների աշակերտների և երիտասարդների իրավագիտակցության մակարդակը, ներկայացվել վերջինիս բարձրացման հիմնական ուղիները, հետազոտվել անչափահասների հանցավորության մակարդակը, երիտասարդության իրավագիտակցության ձևավորման, բուհերում իրավաբանական կրթության, ուսանողների իրավական ակտիվության, ինչպես նաև երիտասարդների իրավագիտակցության ձևախեղման հիմնախնդիրները և վերջինիս հաղթահարման ուղիներն Արցախի Յանրապետությունում:

Տեսական նյութը գործնական դարձնելու նպատակով կազմակերպվել են կոնկրետ միջոցառումներ (իրավունքի թեմայով աշակերտական օլիմպիադա, երիտասարդների համար ուսուցողական դասընթացներ), որոնք պետք է կրեն շարունակական բնույթ:

Աշխատանքում ներկայացված է նաև մեր կողմից մշակված **«Արցախի Յանրապետության քաղաքացիների իրավական իրազեկվածության, իրավական գրագիտության և իրավագիտակցության մակարդակի բարձրացման»** հայեցակարգը, որը կարող է հիմք հանդիսանալ տվյալ ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրագործման համար:

Հետազոտության շրջանակներում թեմայի ղեկավարն ու կատարողները մասնակցել են Արցախի Յանրապետությունում և Ռուսաս-

տանի Դաշնությունում կայացած թվով 5 գիտաժողովների, տպագրել 7 գիտական հոդվածներ, որոնցից 2-ը՝ արտերկրի գիտական պարբերականներում:

Աշխատանքի վերջում ներկայացվել են կոնկրետ ու Արցախի Յանրապետության իրականությանը համապատասխան առաջարկություններ, որոնք կարող են որոշ չափով նպաստել բարձրացված հիմնախնդիրների լուծմանը:

Իրավագիտակցությունն օրենսդրության զարգացման, իրավակարգի կայունացման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրական լինելու կարևոր գործոն է: Կատարյալ իրավագիտակցությունը վկայում է անհատի բարձր և ընդհանուր իրավական մշակույթի մասին, նրան դարձնում տարբեր իրավահարաբերությունների լիարժեք մասնակից: Իրավագիտակցությունը որպես երևույթ և հիմնախնդիր ընդգրկում է հետազոտության մեծ մասշտաբներ, այդ իսկ պատճառով նյութն ավելի խորությամբ ուսումնասիրելու համար որոշվել է այն իրականացնել միայն աշակերտների և ուսանողների (երիտասարդների) շրջանում:

Սույն հետազոտությունը չի հավակնում դառնալ Արցախի Յանրապետության դպրոցների ավագ դասարանների աշակերտների և երիտասարդների իրավագիտակցության հիմնախնդրին նվիրված համալիր աշխատանք, այլ առաջին փորձն է, որի վերաբերյալ ընթերցողների հայտնած կարծիքներն ու առաջարկները շատ ենք կարևորում:

Կարծում ենք՝ նման հետազոտություն կարելի է կատարել նաև հասարակության մյուս շերտերում, որպեսզի պատկերն ավելի ամբողջական լինի, իսկ տվյալ ոլորտում պետական քաղաքականությունը՝ կոնկրետ ու նպատակաուղղված:

Վերջում ուզում ենք շնորհակալական խոսք հղել այն անհատներին, որոնք չեն խնայել իրենց ժամանակը, ընթերցել են աշխատանքն ու իրենց առաջարկությունների շնորհիվ այն դարձրել ավելի լավը:

Աշխատանքի շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքներն ամփոփել և ընթերցողի ուշադրությանն է

ներկայացրել Գերմանիայի Լայպցիգի համալսարանի ասպիրանտ, սոցիոլոգ Յակոբ Մաթևոսյանը, որին էլ խմբի անունից հայտնում ենք խորին շնորհակալություն: Շնորհակալություն ենք հայտնում նաև Արցախի Յանրապետության ոստիկանությանը՝ տրամադրված տեղեկատվության և համագործակցելու պատրաստակամության համար:

Յետազոտության վերաբերյալ հայտնած արժեքավոր խորհուրդների և նկատառումների համար առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում աշխատության գիտական խմբագիր, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ի.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանին և աշխատության գրախոսներ, ի.գ.թ., դոցենտ Անահիտ Մանասյանին և ի.գ.թ. Տարոն Սիմոնյանին:

*Գիտական թեմայի ղեկավար,
ի.գ.թ., դոցենտ Ավետիք Յարությունյան*

ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

§ 1. Ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության ձևավորման հիմնախնդիրը

Արցախի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական ու իրավական պետության կառուցման կարևորագույն նախադրյալներից է քաղաքացիների իրավական մշակույթի պատշաճ մակարդակի ձևավորումը: Վերջինս, ըստ պրոֆեսոր Ե.Պևցովայի, «կանխորոշվում է հասարակության անդամների իրավագիտակցությամբ, ժողովրդավարական ինստիտուտների զարգացվածությամբ, ինչը ենթադրում է քաղաքացիների սոցիալ-իրավական ակտիվություն»¹:

Ա.Ազրիլիյանի խմբագրությամբ իրավաբանական բառարանի համաձայն՝ «իրավական մշակույթը հասարակության իրավական կյանքի որակն է ու պետության և հասարակության կողմից մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորվածության աստիճանը, ինչպես նաև հասարակության ամեն մի անդամի կողմից իրավունքի իմացությունը, ըմբռնումը և հետևումը: Իրավական մշակույթը բնորոշվում է բնակչության իրավագիտակցության զարգացվածության աստիճանով, իրավական գործունեության զարգացման մակարդակով, իրավական ակտերի ամբողջ համակարգի կատարելության աստիճանով»²:

Այսպիսով, իրավագիտակցությունը, լինելով իրավական մշա-

¹ Певцова Е. Формирование правового сознания школьной молодежи: состояние, проблемы и перспективы, Государство и право, 2005, N 4, էջ 28-36.

² Юридический словарь / Под. ред. А.Н.Азриляна, М., 2007, էջ 316.

կույթի հիմնական բաղադրիչը, կարևոր դեր է խաղում ժամանակակից պետության կառուցման գործում: Քաղաքացիների մոտ իրավագիտակցության պատշաճ մակարդակի ձևավորումը բարդ գործընթաց է, որը դրական արդյունք կունենա այն դեպքում, երբ հասարակության բոլոր շերտերում իրականացվի մշտապես, համակարգային ձևով ու լինի պետական և շահագրգիռ այլ սուբյեկտների ուշադրության ու վերահսկողության ներքո:

Մեր կարծիքով՝ մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականությունն ավելի արդյունավետ կլինի, եթե հաշվի առնվեն տարբեր սոցիալական խմբերի, առաջին հերթին՝ երեխաների և երիտասարդության առանձնահատկությունները: Հենց այդ խմբերը տարբեր պատճառներով (իրավական նորմերի իմացության ցածր աստիճան, կյանքի փորձի պակաս և այլն) համարվում են սոցիալապես խոցելի և պահանջում են մեծ ուշադրություն: «Երեխաների, պատանիների ու երիտասարդների իրավական պաշտպանվածության մակարդակով կարելի է դատել իրավական պետության ու քաղաքացիական հասարակության զարգացվածության մասին, քանի որ այդ սոցիալական խմբերը ոչ միայն ապագան են, ... այլև՝ ներկան»³:

Ելնելով այն գաղափարից, որ այսօրվա երիտասարդը վաղվա օրվա պետության պատասխանատուն է, պետք է հստակ գիտակցել, որ ինչպիսին դաստիարակենք նրան, այնպիսին էլ նա կլինի տարիներ անց՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ հասարակական դիրք կզբաղեցնի: Տվյալ պարագայում հարցը վերաբերում է իրավական դաստիարակությանն ու իրավական գիտելիքների ձևավորմանը, որը պետք է սկսել հնարավորինս վաղ տարիքից:

Սակայն այստեղ հարց է առաջանում, թե արդյո՞ք հնարավոր է

³ Антипов А.Г., Антипова К.А. Старшеклассники о своих правах (по материалам социологического исследования), Вестник Пермского университета, 2011, 3 (13), էջ 8-9.

բացահայտել քաղաքացիների, տվյալ պարագայում՝ աշակերտների իրավագիտակցության մակարդակը: Ա.Անտիպակը և Կ.Անտիպևան նշում են, որ «իրավագիտակցության ուսումնասիրման հիմնախնդրի դժվարությունը որոշվում է ամենից առաջ նրա անթերի բնությամբ, այնպիսին, ինչպիսին մարդու գիտակցության բնությունն է, որը մինչև օրս մնում է որպես հանելուկ նույնիսկ ժամանակակից գիտության համար: Իրավագիտակցության ուսումնասիրման դժվարությունը պայմանավորված է նրանով, որ այն օրգանապես ձուլված է մարդու գիտակցության հետ, սերտորեն միահյուսված է քաղաքական, բարոյական, կրոնական գիտակցության հետ: Իրավագիտակցությունը որակապես տարբեր է իրավաբան-պրակտիկների, իրավաբան-գիտնականների, իրավախախտների և օրինապահ քաղաքացիների մոտ: Այս կապակցությամբ ոչ ազգային, ոչ միջազգային մասշտաբով մինչ օրս ոչ մեկին չի հաջողվել ստեղծել իրավագիտակցության ուսումնասիրման միասնական մեթոդաբանություն»⁴: Շարունակելով միտքը՝ նույն հեղինակները կարծում են, որ իրավագիտակցության մակարդակը կարելի է բացահայտել հարցման միջոցով, որոնցում կլինեն ինչպես իրավական առաջադրանքներ, այնպես էլ իրավական նորմերի իմացության վերաբերյալ հարցեր: Դրանք թույլ կտան բացահայտել իրավական հարաբերությունների առանձին ոլորտների կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության մակարդակը:

Որպես հասարակական իրավագիտակցության ձևավորման սկզբնական օղակ՝ մենք ուսումնասիրել ենք Արցախի Չանրապետության ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության հիմնախնդիրը: Չարկ է նկատել, որ, 2008 թվականից սկսած, Արցախի Չանրապետության հանրակրթական դպրոցներում դա-

⁴ Бочкова А.А., Сухарев А.А., Янч В.В. Проблемы формирования правовой культуры учащейся молодежи: теория и практика, Ученые записки УО «ВГУ им. П.М.Машерова», Том 7, 2008, էջ 76.

սավանդվում է «Չասարակագիտություն» առարկան, որի շրջանակներում աշակերտները ստանում են իրավական գիտելիքներ, ընդ որում, «Չասարակագիտություն» ինտեգրված առարկայի «իրավագիտություն» բաժինը դասավանդվում է 11-րդ դասարանի առաջին կիսամյակում՝ շաբաթական առավելագույնը 2 ժամ ժամաքանակով:

2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Իրավագիտակցության հիմնախնդիրը ԼՂՀ հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում» ծրագրի շրջանակներում Արցախի Չանրապետության 35 դպրոցների ավագ (10-12-րդ) դասարանների 475 աշակերտների շրջանում հարցաթերթերի միջոցով անց է կացվել սոցիոլոգիական հարցում: Այն նպատակ էր հետապնդում բացահայտել ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության մակարդակը, ինչպես նաև առկա հիմնախնդիրների վերհանման միջոցով նախանշել վերջինիս բարձրացման հիմնական ուղիները: Չարցումն անց է կացվել 11 քաղաքային⁵ և 23 գյուղական⁶ բնակավայրերի դպրոցներում:

Իրավագիտակցության հետազոտությունը, հետևաբար՝ աշակերտների իրավական գիտելիքների մակարդակի որոշումը, իրավունքի գնահատումը, արժեքային կողմնորոշիչները պահանջել են

⁵ Քաղաքային բնակավայրերն ընդգրկում են Ստեփանակերտի (երկու դպրոց), Ասկերանի, Բերձորի, Չադրուֆի, Կովսականի, Ճարտարի, Մարտակերտի, Մարտունու, Միջնավանի, Շուշիի և Քարվաճառի դպրոցները:

⁶ Գյուղական բնակավայրերն ընդգրկում են. **Ասկերանի շրջան**՝ Շոշի, Նորագյուղի և Խնձրիստանի դպրոցներ, **Չադրուֆի շրջան**՝ Ազոխի, Դրախտիկի և Տողի դպրոցներ, **Մարտակերտի շրջան**՝ Գետավանի, Ներքին Յոռաթաղի և Նոր Մարաղայի դպրոցներ, **Մարտունու շրջան**՝ Կարմիր Շուկայի և Սոսի դպրոցներ, **Շահումյանի շրջան**՝ Դադիվանքի, Նոր Վերինշենի և Չարեքտարի դպրոցներ, **Շուշիի շրջան**՝ Քարին տակի դպրոց, **Քաջաթաղի շրջան**՝ Ալաշկերտի, Այգեհովիտի, Գետամեջի, Իշխանաձորի, Մարտունաշենի, Սարատակի, Տիգրանավանի և Ուռեկանի դպրոցներ:

ամենայն պատասխանատվությամբ մոտենալ հարցաթերթի կազմմանը, ինչին մասնակցել են հետազոտական խմբի իրավաբան անդամները և սոցիոլոգը: Հարցաթերթը ներառել է այնպիսի հարցեր, որոնք նպատակ էին հետապնդում բացահայտել աշակերտների իրավական իրազեկվածության (իրավունքի իմացության), վարքագծային (իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու), գնահատողական մակարդակներն ու իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու (իրավական գիտելիքներն ավելացնելու) պատրաստակամությունը: Հետազոտության տվյալները մշակվել են SPSS վիճակագրական փաթեթի օգնությամբ:

Հետազոտության շրջանակներում առաջ է քաշվել այն հիպոթեզը, որ աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացման արդյունավետ կառուցակարգերի մշակումն ու իրականացումը կարող է հիմք հանդիսանալ հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի կատարելագործման համար, ինչպես նաև դրականորեն ազդել օրինականության և իրավակարգի վիճակի վրա: Վերջիններս էլ իրենց արտացոլումը կգտնեն իրավաստեղծ գործունեության և իրավական վարքագծի վրա:

Հետազոտության նպատակի ու դրանից ենթադրվող խնդիրների լուծմանը համապատասխան, ստորև ներկայացվում է արդյունքների վերլուծությունը՝ ըստ հարցաթերթի կառուցվածքային բաժինների:

Ի սկզբանե նշենք, որ 475 հարցվողների սեռային բաշխումն ունի հետևյալ պատկերը. իգական՝ 61,9% կամ 294 հոգի, արական՝ 38,1% կամ 181 հոգի: Ընդ որում, հարցվողների 39,6%-ը եղել են 10-րդ, 26,9%-ը՝ 11-րդ, իսկ 33,5%-ը՝ 12-րդ դասարանի աշակերտներ:

Աշակերտների իրավական իրազեկվածության (իրավունքի իմացության) մակարդակը

Սույն բաժնի հարցերը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբերի. հարցեր, որոնց միջոցով բացահայտվում են աշակերտների իրավական գիտելիքները, դրանց աղբյուրը, ինչպես նաև սեփական իրավունքների ու պարտականությունների իմացությունը (պատասխանները լրացվել են ինքնուրույն):

Հարցվողների կեսից ավելին (63,4%) **«Ասացեք, խնդրեմ, նրբ է ընդունվել «ԼՂՀ հռչակման մասին» հռչակագիրը»** հարցին տվել է ճիշտ պատասխան, այն է՝ **1991թ. սեպտեմբերի 2:** Համանման ձևով, հարցվողների 69,7%-ն է **«Ե՞րբ է ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը»** հարցին տվել ճիշտ պատասխան՝ **2006թ. դեկտեմբերի 10:**

Հատկանշական է, որ հարցվողների 52%-ը ճիշտ է պատասխանել միաժամանակ առաջին և երկրորդ հարցերին: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ հարցվողների 8,6%-ը առաջին և երկրորդ հարցերի դեպքում ընտրել է **«1991թ. սեպտեմբերի 2»** պատասխանը, իսկ 9,9%-ը՝ **«1991թ. դեկտեմբերի 10»** տարբերակը, այսինքն՝ նրանք շփոթում են այդ երկու պատմական իրադարձությունների տարբերվելը՝ սխալմամբ կարծելով, որ դրանք տեղի են ունեցել նույն օրը:

«ԼՂՀ-ում իշխանությունը քանի՞ ժյուղերի է բաժանված» հարցին 73,1%-ը ճիշտ է պատասխանել՝ նշելով **«Օրենսդիր, գործադիր և դատական»** տարբերակը: 16,6%-ը կարծում է, որ իշխանությունը բաժանված է նախագահի, օրենսդրի և դատականի միջև, 4,6%-ը՝ գործադիրի և դատականի միջև, իսկ 5,7%-ը դժվարացել է պատասխանել:

Ամփոփելով առաջին խմբի հարցերը (հիմք ընդունելով ճիշտ պատասխանները՝ 1-ին հարց՝ 63,4%, 2-րդ հարց՝ 69,7%, 3-րդ

հարց՝ 73,1%)՝ կարող ենք ասել, որ աշակերտներն ունեն իրավա-
կան գրագիտության հարաբերականորեն բարձր մակարդակ:

Եթե առաջին երեք հարցերին հարցվողների կեսից ավելին
ձիշտ է պատասխանել, ապա հաջորդ երկու հարցերի պարագա-
յում պատկերն այլ է: Այսպես, **«Ասացեք, խնդրեմ, զ՞ր տարիքից
է սկսվում վարչական պատասխանատվությունը»** հարցին
հարցվողների ընդամենը 31,3%-ն է ձիշտ պատասխանել՝ ընտրե-
լով **«16 տարեկանից»** պատասխանը: 48,1%-ը կարծում է, որ
վարչական պատասխանատվությունը սկսվում է 18 տարեկանից,
20,6%-ը՝ 14 տարեկանից:

**«Ասացեք խնդրեմ, զ՞ր տարիքից է սկսվում քրեական պա-
տասխանատվությունը»** հարցին հարցվողների 34,2%-ն է ձիշտ
պատասխանել հարցին՝ ընտրելով **«16 տարեկանից, բայց որոշ
հանցագործությունների համար սկսած 14 տարեկանից»**
պատասխանը: 56,6%-ը կարծում է, որ քրեական պատասխա-
նատվությունը սկսվում է 18 տարեկանից, բայց որոշ հանցագոր-
ծությունների համար սկսած 16 տարեկանից, 9,2%-ի կարծիքով՝
14 տարեկանից, բայց որոշ հանցագործությունների համար
սկսած 12 տարեկանից:

Վերոհիշյալ երկու հարցերի ամփոփումը թույլ է տալիս եզրա-
կացնել, որ աշակերտները նվազ գիտելիքներ ունեն այն մասին,
թե որ տարիքից է սկսվում քրեական և վարչական պատասխա-
նատվությունը: Դա բացասական միտում է այն իմաստով, որ նշ-
ված պատասխանատվության ձևերը կիրառելի են նրանց տարի-
քից սկսած, այսինքն՝ 16 տարեկանից, սակայն աշակերտները հս-
տակ պատկերացում չունեն դրա մասին: Ընդսմին, հարցվողների
48,1%-ի կարծիքով՝ վարչական պատասխանատվությունը սկս-
վում է 18 տարեկանից, իսկ 56,6%-ն էլ կարծում է, որ քրեական
պատասխանատվությունն է սկսվում այդ նույն տարիքից: Այս
ամենով հանդերձ հակված ենք կարծելու, որ աշակերտներն իրենց

հակաօրինական գործողությունների համար ենթադրում են պատասխանատվության ավելի ուշ տարիք: Արդյունքում ստացվում է, որ վերոհիշյալ երկու հարցերի դեպքում հարցվողների 1/3-ն է տվել ճիշտ պատասխան:

Երկրորդ խմբի հարցերը հարցաթերթում ներառելը նպատակ էր հետապնդում բացահայտելու, թե աշակերտները որտեղից են ստանում իրավական գիտելիքներ և որքանով են դրանք արժանահավատ: Այս խմբի հարցերից առաջինը հետևյալն է՝ **«Որքանով եք ծանոթ ԼՂՀ Սահմանադրությանը»**: Այս հարցին դրական պատասխան է տվել 68,5%-ը, բացասական՝ 31,5%-ը (*Գծապատկեր 1*):

«Սովորաբար որտեղից եք տեղեկանում Ձեր իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին» հարցի պատասխաններից (*Գծապատկեր 3*) պարզ է դառնում, որ աշակերտների 35,2%-ը որպես իրավական գիտելիքների հիմնական աղբյուր դիտարկում է ծնողներին և ընկերներին, այնուհետև՝ ուսուցիչներին (30,2%), ինչպես նաև համացանցում փնտրելու եղանակը (25,7%): Հետաքրքրական է, որ բավականին փոքր տոկոս է կազմում իրավաբանի օգնությանը դիմելու (4,1%) կամ հասարակագիտության և այլ դասագրքերից (3,5%) իրավական տեղեկատվություն ստանալու տարբերակները:

Երրորդ խմբի մեջ ներառված երկու հարցերից առաջինի դեպքում աշակերտները պետք է թվարկեին առավելագույնը չորս իրավունք, իսկ երկրորդի դեպքում՝ չորս պարտականություն:

«Թվարկեք, խնդրեմ, Ձեր իրավունքներից մի քանիսը» հարցին պատասխանել է 312 աշակերտ կամ 65,7%-ը, որոնցից 58-ը նշել է մեկ իրավունք, 84-ը՝ երկու, 67-ը՝ երեք, իսկ 103 հարցվող չորս իրավունք: Տվյալ հարցին դժվարացել է պատասխանել 163 աշակերտ, որը կազմում է հարցվողների 34,3%-ը: Վերլուծությունն իրականացվել է բազմակի ընտրության մեթոդաբանու-

թյամբ, որի արդյունքում նշվել է 121 իրավունք և 839 պատասխան, ինչն էլ կազմում է 268,9 տոկոս: Մեկնաբանությունը տալիս ենք ըստ յուրաքանչյուր պատասխանի:

Այսպես, հարցվողների 63,5%-ը նշել է խոսքի (մտքի կամ կարծիք արտահայտելու) ազատություն, 35,6%-ը՝ կրթության (կամ սովորելու) իրավունք, 14,4%-ը՝ ընտրելու, 13,5%-ը՝ կյանքի, 10,6%-ը՝ ազատ տեղաշարժվելու, 10,3%-ը՝ ազատության (չնշելով, թե կոնկրետ որ ազատության), 9,9%-ը՝ իրավունքները պաշտպանելու, 9,6%-ը՝ դպրոց հաճախելու, 9,6%-ը՝ աշխատանքի, 6,7%-ը՝ տարբեր միջոցառումների մասնակցելու, 4,8%-ը՝ խմբակներ հաճախելու, 4,8%-ը՝ օլիմպիադաների և մրցույթների մասնակցելու, 4,5%-ը՝ սեփականության, 3,8%-ը՝ քաղաքացիության, 3,5%-ը՝ մասնագիտության ընտրության, 2,6%-ը՝ բուժօգնություն ստանալու: Մյուս պատասխանները կազմել են ավելի փոքր տոկոս: Պատասխանների մեջ եղել են այնպիսիք, որոնք չունեն իրավական բնույթ (ուտելու, շփվելու, երաժշտություն լսելու, ծխելու, երգելու, քնելու և այլ) կամ էլ պարտականություններ են (ենթարկվել օրենքներին, ծառայել հայրենիքին, չխախտել մարդու իրավունքները և այլն):

«Թվարկեք, խնդրեմ, Ձեր պարտականություններից մի քանիսը» հարցին պատասխանել է 340 աշակերտ կամ 71,6%-ը, որոնցից 54-ը նշել է մեկ պարտականություն, 94-ը՝ երկու, 83-ը՝ երեք, իսկ 109 հարցվող չորս պարտականություն: Տվյալ հարցին դժվարացել է պատասխանել 135 աշակերտ, որը կազմում է հարցվողների 28,4%-ը: Հարցվողները նշել են 113 պարտականություն և 927 պատասխան, ինչն էլ կազմում է 272,6 տոկոս:

Հարցմանը մասնակցած աշակերտների 38,2%-ը որպես պարտականություն նշել է «չխախտել օրենքը (ենթարկվել օրենքներին)» տարբերակը, 35,3%-ը՝ սովորել, 25,9%-ը՝ հաճախել դպրոց, 17%-ը՝ հարգել մեծերին (ծնողներին), 15,3%-ը՝ ծառայել հայրենիքին, 15,3%-ը՝ լինել կարգապահ, 11,2%-ը՝ ենթարկվել ծնողներին,

9,7%-ը՝ լինել հանդուրժող, 7,9%-ը՝ պատրաստ ներկայանալ դասերին, 6,8%-ը՝ ենթարկվել ԼՂՀ Սահմանադրությանը, 5,6%-ը՝ կատարել տրված հանձնարարությունները, 5,3%-ը՝ օգնել ծնողներին, 5%-ը՝ ենթարկվել ուսուցիչներին, 4,1%-ը՝ պահպանել շրջակա միջավայրի մաքրությունը, 3,8%-ը՝ լինել հարգալից, 3,5%-ը՝ ենթարկվել դպրոցի կանոններին, 2,9%-ը՝ հետևել ճանապարհային երթևեկության կանոններին, իսկ 2,4%-ը՝ հանցագործություն չկատարել: Որպես պարտականություն ներկայացված մյուս պատասխանները կազմել են ավելի փոքր տոկոս: Պատասխանների մեջ եղել են այնպիսիք, որոնք չունեն իրավական բնույթ (ուտել, լինել բարի, լինել բարոյական, լինել հայրենասեր և այլ) կամ էլ իրավունքներ են (ընտրելու, կրթության, խոսքի ազատության, իրավունքները պաշտպանելու և այլն) կամ էլ Արցախին չեն վերաբերում (չխախտել ՀՀ օրենսգիրքը):

ԼՂՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 23-ի թիվ 755-Ն որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 128-րդ կետում նշված է, որ «սովորողի իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով», այսինքն «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածով, որի 2-րդ մասի համաձայն՝ սովորողն իրավունք ունի՝

- 1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն,
- 2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ,
- 3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից,

4) ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն,

5) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների,

6) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը,

7) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը,

8) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

9) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,

10) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված են սովորողի հետևյալ պարտականությունները՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները,

- 3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին,
- 4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Ամփոփելով սույն խմբի պատասխանները՝ կարող ենք նշել, որ աշակերտների **65,7%-ը** բավարար չափով ծանոթ է իրենց իրավունքներին, իսկ **71,6%-ը**՝ պարտականություններին, առավել ևս, որ նրանցից 103-ը նշել են չորս իրավունք, իսկ 109-ը՝ չորս պարտականություն, միևնույն ժամանակ պետք է փաստել, որ նրանցից 34,3%-ը չի նշել ոչ մի իրավունք, իսկ 28,4%-ը՝ ոչ մի պարտականություն: Ուշագրավ է այն, որ ավելի մեծ թվով (340) աշակերտներ նշել են պարտականություն, քան իրավունք (312 հարցվող): Այս առումով որպես հիմնախնդիր կարելի է արձանագրել այն, որ որոշ աշակերտներ նշել են ոչ իրավական բնույթ ունեցող իրավունքներ և պարտականություններ կամ շփոթել են իրավունքներն ու պարտականությունները:

Հարցման ժամանակ Արցախի Հանրապետության ոչ մի դպրոցում չի եղել իրավական անկյուն, հետևաբար՝ նաև առանձնացված ԼՂՀ Սահմանադրություն, «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք, կրթության ոլորտի օրենսդրություն, դպրոցի կանոնադրություն ու ներքին կարգապահական կանոններ: Կարծում ենք, որ Արցախի Հանրապետության բոլոր դպրոցներում իրավական անկյունների առկայությունը, դրանք ուսումնասիրելու համար ուսուցիչների ներկայացրած պահանջներն ու իրավական առումով ավելի գրագետ, հետևաբար՝ պաշտպանված լինելու ցանկությունն աշակերտներին հնարավորություն կընձեռի պարբերապար ուսումնասիրելու ինչպես երկրի Սահմանադրությունը, այպես էլ իրենց կարգավիճակից բխող օրենսդրությունը:

**Աշակերտների իրավագիտակցության վարքագծային
(իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու)
մակարդակը**

Աշակերտների իրավագիտակցության մակարդակը ենթադրում է ոչ միայն առկա իրավական գիտելիքների հանրագումար, այլև՝ նրանց կողմից իրավաչափ կամ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորում, որի բացահայտման համար հարցաթերթում առաջադրվել են հետևյալ հարցերը.

«Որպես հետիոտն՝ հետևում եք ճանապարհային երթևեկության կանոններին» հարցին 33,1%-ը պատասխանել է, որ մշտապես է հետևում, 62,2%-ը նշել է, որ հիմնականում հետևում է, այսինքն՝ հարցվողների 95,3%-ի սուբյեկտիվ գնահատականով իրենք հետևում են ճանապարհային երթևեկության կանոններին: Չարցմանը մասնակցած աշակերտների 3,9%-ը նշել է, որ հիմնականում չի հետևում, իսկ 0,9%-ը՝ ընդհանրապես չի հետևում ճանապարհային երթևեկության կանոններին:

«Եթե խախտվեն Ձեր իրավունքները, ինչպես կվարվեք» հարցի պատասխաններից (*Գծապատկեր 5*) ակնհայտ է դառնում, որ հարցվողների մոտ կեսը՝ 42,4%-ը, իրավունքների խախտման դեպքում կդիմի ծանոթ իրավաբանի օգնությանը: Չետաքրքիր է, որ հարցվողների մի զգալի մասը՝ 31,3%-ը, իրավունքների խախտման դեպքում ոչ մի տեղ չի դիմի, այլ հարցը կլուծի սեփական ուժերով: Չարցվողների 14,7%-ը նշել է, որ նման դեպքում կդիմի դատարան, 11,1%-ը՝ վերադաս պետական մարմիններ, իսկ 0,4%-ը՝ ծնողներին:

Գծապատկեր 7-ում ներկայացված **«Ձեր գործողությունները միշտ եք համաձայնեցնում օրենքի պահանջներին»** հարցին 15,2%-ը պատասխանել է, որ մշտապես համաձայնեցնում է, 68,8%-ը նշել է, որ հիմնականում համաձայնեցնում է, այսինքն՝

հարցվողների 84%-ն իրենց գործողությունները համաձայնեցնում են օրենքի պահանջներին: Չարցմանը մասնակցած աշակերտների 13,1%-ը նշել է, որ հիմնականում չի համաձայնեցնում, իսկ 2,9%-ը՝ ընդհանրապես չի համաձայնեցնում:

«Արդյո՞ք Դուք թույլ կտաք հակաիրավական գործողություն հանուն նյութական շահի» հարցին 83%-ը տվել է բացասական պատասխան, իսկ 4,4%-ը՝ դրական, այսինքն՝ թույլ կտա: Տվյալ հարցին դժվարացել է պատասխանել 12,6%-ը, որոնք էլ, ամենայն հավանականությամբ, չունենալով հստակ դիրքորոշում նշված հարցի վերաբերյալ, ընտրել է այն տարբերակը, որը, մեր կարծիքով, ավելի շատ ենթադրում է «այո», քան «ոչ»:

Այսպիսով, սույն բաժնի հարցերի ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ հարցվողների 95,3%-ը հետևում է ճանապարհային երթևեկության կանոններին, 84%-ն իր գործողությունները համաձայնեցնում է օրենքի պահանջներին, իսկ 83%-ը թույլ չի տա հակաիրավական գործողություն հանուն նյութական շահի: Միևնույն ժամանակ, կարևոր է այն հանգամանքը, որ իրավունքների խախտման դեպքում աշակերտների 42,4%-ը կդիմի ծանոթ իրավաբանի օգնությանը, այսինքն, նման իրավիճակներում նրանք լավ պատկերացում ունեն, թե ում միջոցով կարելի է հարցը լուծել արհեստավարժ եղանակով: Ուշագրավ է այն, որ ըստ հարցվողների 4,8%-ի՝ իրենք չեն հետևում ճանապարհային երթևեկության կանոններին, չնայած իրականում այդ տոկոսն ավելի մեծ է, 16%-ն իր գործողությունները չի համաձայնեցնում օրենքի պահանջներին, իսկ 17%-ը թույլ կտա հակաիրավական գործողություն հանուն նյութական շահի: Չամենայնդեպս, սա խոսում է աշակերտների մի մասի մոտ առկա ձևախեղված իրավագիտակցության մասին, որը «չբուժելու» և անհրաժեշտ հետևություններ չանելու դեպքում կարող է իր բացասական կնիքը թողնել անչափահասների հանցագործությունների թվի աճին:

**Աշակերտների իրավագիտակցության մակարդակը
բարձրացնելու (իրավական գիտելիքներն ավելացնելու)
պատրաստականությունը**

Աշակերտների շրջանում սոցիոլոգիական հարցման անցկացումը նպատակ ուներ նաև բացահայտելու, թե արդյո՞ք աշակերտների մոտ կա ցանկություն ավելացնելու սեփական իրավական գիտելիքները, հետևաբար նաև՝ բարձրացնելու իրավագիտակցության մակարդակը: Արցախի Հանրապետությունում գործող Արցախի հանրային հեռուստատեսությամբ եթեր է հեռարձակվում «Իմ իրավունքը» իրավական բնույթի միակ հաղորդումը, ինչի կապակցությամբ էլ առաջադրվել է հետևյալ հարցը. **«Որքան հաճախ եք դիտում «Իմ իրավունքը» հաղորդումն Արցախի հանրային հեռուստաալիքով»**, ինչին հարցվողները տվել են հետևյալ պատասխանները. հարցվողների համարյա կեսը՝ 42,1%-ը, նշել է, որ ընդհանրապես չի դիտում, 38,3%-ն ընտրել է «հազվադեպ եմ դիտում» տարբերակը, 10,5%-ը՝ պարբերաբար է դիտում, 2,7%-ը՝ մշտապես է դիտում, իսկ հարցվողների 6,4%-ը նշել է, որ Քաշաթաղի շրջանում չի հեռարձակվում⁷:

«Որքան հաճախ են Ձեր ծնողներն իրավական թեմաներով զրուցում Ձեզ հետ» հարցին 45,8%-ը պատասխանել է, որ պարբերաբար են զրուցում, 12,2%-ը՝ մշտապես են զրուցում, 37,1%-ը՝ հազվադեպ են զրուցում, իսկ 4,9%-ը՝ ընդհանրապես չեն զրուցում:

«Ի՞նչ միջոցներով կցանկանայիք բարձրացնել Ձեր իրավագիտակցության մակարդակը» հարցին (*Գծապատկեր 9*), որի դեպքում հարցվողները պետք է նշեին բոլոր հնարավոր տարբերակները, տրվել են հետևյալ պատասխանները. աշակերտների

⁷ Խոսքը Քաշաթաղի շրջանի հարավային թևի մասին է:

40%-ը նշել է «մասնակցել իրավական թեմաներով արտաժամյա դասընթացների» տարբերակը, 38,7%-ը՝ «մասնակցել իրավական թեմաներով ինտելեկտուալ խաղերի» տարբերակը, 20,2%-ը ցանկանում է սեփական իրավագիտակցության մակարդակը բարձրացնել իրավական թեմաներով մրցույթների մասնակցելու միջոցով, իսկ 14,5%-ը՝ ՁԼՄ-ների միջոցով իրավական քարոզչությունն ուժեղացնելով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի Հանրապետությունում երբեք իրավունքի թեմայով օլիմպիադա չի անցկացվել, աշակերտների հակումները բացահայտելու համար հարցաթերթում առաջադրվել է հետևյալ հարցը. **«Ասացեք, խնդրեմ, կցանկանայի՞ք մասնակցել իրավունքի թեմայով օլիմպիադայի»**, որին 52,2%-ը պատասխանել է դրական, այսինքն՝ կցանկանա մասնակցել, իսկ 47,8%-ը՝ բացասական: Ստացված արդյունքների հիման վրա, նպատակ ունենալով խթանել աշակերտների իրավագիտակցության բարձրացումը, գրություն է ներկայացվել ԱՀ ԿԳՍ նախարար Ս.Ասրյանին և դրական պատասխան ստանալուց հետո, 2017թ. փետրվարի 28-ին Արցախի Հանրապետությունում կազմակերպվել է «Սահմանադրություն և իրավունք» դպրոցականների հանրապետական առաջին օլիմպիադան⁸, իսկ մարտի 10-ին՝ հաղթողների ու բարձր արդյունքներ ցուցաբերած աշակերտների պարգևատրման հանդիսավոր արարողությունն Արցա-

⁸ Ավելի մանրամասն տե՛ս Արցախում կայացել է իրավունքի թեմայով առաջին օլիմպիադան - <http://aegmm.org/archives/970> - 28.02.2017թ., Արցախում անց է կացվել «Սահմանադրություն և իրավունք» խորագրով դպրոցական հանրապետական օլիմպիադա - <http://artsakhpress.am/arm/news/62797/arcakhum-anc-e-kacvel-sahmanadrutyun-ev-iravunq-khoragrov-dprocakan-hanrapetakan---olimpiada.html> - 28.02.2017թ., Այսօր կայացել է «Սահմանադրություն և իրավունք» դպրոցականների հանրապետական օլիմպիադա - <https://www.youtube.com/watch?v=ni9gxaHsYC4> - 28.02.2017թ.:

խի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունում⁹: Դպրոցական օլիմպիադային մայրաքաղաք Ստեփանակերտից և շրջկենտրոններից մասնակցել է 55 աշակերտ:

Այսպիսով, հարցվողների ընդամենը 13,2%-ը նշել է, որ մշտապես կամ պարբերաբար է դիտում «Իմ իրավունքը» հաղորդումը, ինչը ցածր ցուցանիշ է՝ հաշվի առնելով, որ այդ հաղորդման շրջակայքներում քննարկվում են տարաբնույթ իրավական հիմնախնդիրներ: Հարցվողների 58%-ը նշել է, որ մշտապես կամ պարբերաբար ծնողներն իրենց հետ զրուցում են իրավական թեմաներով: Աշակերտների 89,1%-ը ցանկություն է հայտնել նշված եղանակներից առնվազն մեկով բարձրացնել սեփական իրավագիտակցության մակարդակը, ինչը նշանակում է, որ ապագայում կարող ենք ունենալ իրավական առումով ավելի գրագետ հասարակություն, որտեղ, ենթադրվում է, որ կլինի հանցավորության ցածր մակարդակ: Ինչ վերաբերում է իրավունքի թեմայով օլիմպիադային, որին մասնակցելու ցանկություն էր հայտնել հարցվողների 52,2%-ը, ապա այն արդեն կայացած իրողությունն է և, ըստ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածության, այն համատեղ ուժերով դարձվելու է ամենամյա:

⁹ Կայացել է «Սահմանադրություն և իրավունք» օլիմպիադայի հաղթողների պարգևատրման արարողությունը - <http://aegmm.org/archives/992> - 10.03.2017թ., Ամփոփվել են «Սահմանադրություն և իրավունք» խորագրով դպրոցականների հանրապետական օլիմպիադայի արդյունքները - <http://artsakhpress.am/arm/news/63351/ampopvel-en-sahmanadrutyun-ev-iravunq-khor-agrov-dprocakanneri-hanrapetakan---olimpiadayi-ardyunqneri.html> - 10.03.2017թ., Իմ իրավունքը - <https://www.youtube.com/watch?v=8CF1MJezDa0&t=1s> - 10.03.2017թ.:

Աշակերտների իրավագիտակցության գնահատողական մակարդակը

Սույն բաժնում առաջադրված հարցերի միջոցով նպատակ ենք հետապնդել բացահայտել հարցվողների կարծիքներն իրավական նորմերն արհամարհելու պատճառների և սեփական իրավագիտակցության մակարդակը գնահատելու վերաբերյալ: Այսպիսով, **«Ձեր կարծիքով՝ ո՞րն է սահմանված իրավական նորմերն արհամարհելու հիմնական պատճառը»** հարցին (*Գծապատկեր 11*) 40,4%-ը պատասխանել է, որ իրավական գրագիտության պակասը, 20,1%-ը՝ անպատժելիությունը, 15,8%-ը՝ ինքնավստահությունը, 13,9%-ը՝ ծայրահեղ իրավիճակը, 8,4%-ը՝ ընտրված կենսակերպը, իսկ 1,2%-ը տվել են այլ պատասխաններ:

Աշակերտների մոտ առկա իրավական գիտելիքների և դրանց հանդեպ ունեցած սուբյեկտիվ գնահատականի միջև ներդաշնակությունն ու անկեղծությունը բացահայտելու համար առաջադրվել է հետևյալ հարցը. **«1-10 բալանոց սանդղակով ինչպե՞ս կգնահատեք Ձեր իրավագիտակցության մակարդակը, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 10-ը՝ ամենաբարձր»:** Չարցվողների 10,6%-ն իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատել են ցածր՝ 1-4 բալ, 72,1%-ը՝ միջին՝ 5-7 բալ, իսկ 17,3%-ը՝ բարձր՝ 8-10 բալ (*Գծապատկեր 13*):

Վերոհիշյալ հարցերից առաջինի դեպքում աշակերտները ներկայացրել են իրենց կարծիքն այն մասին, թե որն է սահմանված իրավական նորմերն արհամարհելու հիմնական պատճառը: Չարցվողներն առաջին երեք պատճառների շարքին են դասել իրավական գրագիտության պակասը (40,4%), անպատժելիությունը (20,1%) և ինքնավստահությունը (15,8%): Նկատի ունենալով այն հանգամանքները, որ աշակերտները, իրենց տարիքային առանձնահատկություններից ելնելով, ազատորեն արտահայտում

են իրենց կարծիքը¹⁰, ունեն ձկուն մտածելակերպ, ու հարցումն անանուն էր՝ կարելի է ենթադրել, որ նրանց կարծիքը մոտ է իրականությանը և անհրաժեշտ է համալիր մոտեցում նշված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Քանի որ երկրորդ հարցի պատասխանի դեպքում առկա է սուբյեկտիվ գործոն, հարցվողների կողմից իրենց իրավագիտակցության մակարդակին տրված գնահատականը համեմատել ենք հարցաթերթի ստուգողական վեց հարցերին տրված ձիշտ պատասխանների հետ և ստացել հետևյալ արդյունքը.

«Ասացեք, ինդրեմ, երբ է ընդունվել «ԼՂ հռչակման մասին» հռչակագիրը» հարցին ձիշտ է պատասխանել 301 հարցվող (63,4%), որոնցից 29-ն (11,7%) իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատել են ցածր, 181-ը (73%)՝ միջին, իսկ 38-ը (15,3%)՝ բարձր¹¹: Յետաքրքրական է, որ 53 հարցվող, որոնք դժվարացել են գնահատել իրենց իրավագիտակցության մակարդակը, նույնպես ձիշտ են պատասխանել այս հարցին: Դրան զուգահեռ, թվով 92 և 27 հարցվողներ սխալ են պատասխանել հարցին՝ իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատելով համապատասխանաբար միջին և բարձր:

«Իսկ երբ է ընդունվել Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Սահմանադրությունը» հարցին 331 (69,7%) ձիշտ պատասխանողներից 31-ն (11,2%) իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատել են ցածր, 198-ը (71,2%)՝ միջին, 49-ը

¹⁰ Նշված եզրահանգման համար հիմք է հանդիսացել նաև այն, որ սույն սոցիալոգիական շրջանակներում հարցվողների 63,5%-ը որպես իրավունք նշել է խոսքի (մտքի կամ կարծիք արտահայտելու) ազատությունը:

¹¹ Այս և հաջորդ հինգ հարցերի տոկոսային հարաբերակցության մեջ ներառված չեն այն ձիշտ պատասխանները, որոնց դեպքում հարցվողները դժվարացել են գնահատել իրենց իրավագիտակցության մակարդակը: Տվյալ հարցի դեպքում 100%-ը կազմում է 248 պատասխան (301-53=248):

(17,6%)` բարձր: Նշված հարցին ճիշտ են պատասխանել ևս 53 աշակերտ, սակայն դժվարացել են գնահատել սեփական իրավագիտակցության մակարդակը: Դրան զուգահեռ, թվով 71 և 18 հարցվողներ սխալ են պատասխանել հարցին` իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատելով համապատասխանաբար միջին և բարձր:

«Որքանով եք ծանոթ ԼՂՀ Սահմանադրությանը» հարցին դրական պատասխան տված 311 (68,5%) հարցվողներից 11-ն (4,3%) իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատել են ցածր, 191-ը (75,2%)` միջին, 52-ը (20,5%)` բարձր: Միևնույն ժամանակ 57 աշակերտ նշել է, որ ծանոթ է ԼՂՀ Սահմանադրությանը, սակայն դժվարացել է գնահատել սեփական իրավագիտակցության մակարդակը: Զարմանալի է, որ թվով 82 աշակերտ նշել է, որ ծանոթ չէ ԼՂՀ Սահմանադրությանը, սակայն իր իրավագիտակցության մակարդակը գնահատել է միջին, իսկ 10 աշակերտ` բարձր:

«ԼՂՀ-ում իշխանությունը քանի՞ ձյուղերի է բաժանված» հարցին տրվել է 347 (73,1%) ճիշտ պատասխան: Հարցվողներից 30-ն (10,4%) իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատել են ցածր, 204-ը (70,8%)` միջին, իսկ 54-ը (18,8%)` բարձր: Չնայած 59 աշակերտ դժվարացել են գնահատել իրենց իրավագիտակցության մակարդակը, սակայն ճիշտ են պատասխանել այս հարցին: Դրան զուգահեռ, թվով 62 և 11 հարցվողներ սխալ են պատասխանել հարցին` իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատելով համապատասխանաբար միջին և բարձր:

Վերոհիշյալ հարցերին ճիշտ պատասխանած աշակերտների թիվը տատանվում է **63,4%-73,1%-ի**, իրենց իրավագիտակցության մակարդակը ցածր գնահատած աշակերտներինը` **4,3%-11,7%-ի**, միջին գնահատածներինը` **70,8%-75,2%**, իսկ բարձր գնահատածներինը` **15,3%-20,5%** միջակայքում:

Եթե նախորդ չորս հարցերի դեպքում աշակերտների ինքնագնահատականն ու տված պատասխանները հիմնականում համապատասխանում են իրար, ապա հաջորդ երկու հարցերի պարագայում պատկերը փոխվում է: Այսպես, **«Ասացեք, խնդրեմ, դժվար է սկսում վարչական պատասխանատվությունը»** հարցին տրվել է ընդամենը 141 (31,3%) ճիշտ պատասխան, որոնցից 10-ն (8,7%) իր իրավագիտակցության մակարդակը գնահատել է ցածր, 90-ը (78,3%)՝ միջին, իսկ 15-ը (13%)՝ բարձր: Բացի այդ, ևս 26 հոգի ճիշտ է պատասխանել այս հարցին, սակայն դժվարացել է գնահատել սեփական իրավագիտակցության մակարդակը: Տարօրինակն այն է, որ ավելի մեծ թվով հարցվողներ (184 աշակերտ) իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատել են միջին, իսկ 51-ը՝ բարձր, սակայն սխալ են պատասխանել հարցին:

«Ասացեք խնդրեմ, դժվար է սկսվում քրեական պատասխանատվությունը» հարցին տրվել է ընդամենը 159 (34,2%) ճիշտ պատասխան, որոնցից 16-ն (11,8%) իր իրավագիտակցության մակարդակը գնահատել է ցածր, 96-ը (70,6%)՝ միջին, իսկ 24-ը (17,6%)՝ բարձր: Հարցվողներից ևս 23-ը ճիշտ է պատասխանել այս հարցին, սակայն դժվարացել է գնահատել սեփական իրավագիտակցության մակարդակը: Դրանից զատ, մտահոգիչ է այն իրողությունը, որ ավելի մեծ թվով 181 հարցվող, իր իրավագիտակցության մակարդակը գնահատել է միջին, իսկ 43-ը՝ բարձր, սակայն սխալ է պատասխանել հարցին:

Նախորդ երկու հարցերին ճիշտ պատասխանած աշակերտների թիվը տատանվում է **31,3%-34,2%-ի**, իրենց իրավագիտակցության մակարդակը ցածր գնահատած աշակերտներինը՝ **8,7%-11,8%-ի**, միջին գնահատածներինը՝ **70,6%-78,3%**, իսկ բարձր գնահատածներինը՝ **13%-17,6%** միջակայքում: Համեմատության համար նշենք, որ սոցիոլոգիական հարցմանը մասնակցած աշա-

կերտների 10,6%-ն իրենց իրավագիտակցության մակարդակը գնահատել է ցածր, 72,1%-ը՝ միջին, իսկ 17,3%-ը՝ բարձր, որը վերոհիշյալ արդյունքների հետ համեմատելիս տալիս է աննշան շեղում: Այստեղից էլ կարելի է եզրահանգել, որ աշակերտների փաստացի իրավական գիտելիքներն ու նրանց կողմից սեփական իրավագիտակցության մակարդակին տրված գնահատականը հիմնականում համընկնում է, այսինքն՝ անկեղծության աստիճանը շատ բարձր է: Ճիշտ է, որոշ դեպքերում նկատվում է սեփական իրավագիտակցության մակարդակի վերաբերյալ ավելի բարձր կամ ցածր գնահատական, սակայն դրանք մեծ տոկոս չեն կազմում:

Այսպիսով, վերլուծելով հետազոտության արդյունքները, կարելի է ասել, որ Արցախի Յանրապետության ավագ դասարանների աշակերտներն ունեն միջինից բարձր իրավագիտակցության մակարդակ: Իհարկե, հաշվի առնելով երկրի ներկայիս կարգավիճակը և դրանից բխող մի շարք խնդիրներ, նման արդյունքը դրական է, սակայն ոչ բավարար, ինչի կապակցությամբ ստորև և հաջորդ ենթագլխում ներկայացվում են մի շարք առաջարկություններ.

- որպես առաջին քայլ ցանկալի է «Յասարակագիտություն» առարկայի 11-րդ դասարանի դասագիրքը դարձնել ավելի մատչելի¹², դրան զուգահեռ քայլեր ձեռնարկել ավագ դասարաններում առանձին իրավական առարկա (օրինակ՝ «Պե-

¹² Մ.Վենգրժանովիչը, Ա.Մանուկյանը և Լ.Ստեփանյանը կարծում են, որ ավագ դպրոցում «Յասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում առաջանում են մի շարք խնդիրներ՝ կապված դասագրքի նյութի ներկայացման դժվար ընկալելիության հետ, իսկ պատճառները հետևյալն են. դասագրքի լեզուն ակադեմիական է, աղքատ մեթոդական ու գործնական աշխատանքների բաժիններից, հասկացությունների սահմանումները դժվար են, իսկ ձևակերպումներն անհասկանալի ու խճճված: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Յասարակագիտություն առարկայի դասավանդման խնդիրները բուհերում և դպրոցներում հանրապետական գիտաժողովի (25.03.2016թ., ք.Երևան) նյութերի ժողովածու, Եր., 2016, էջ 111, 123-124, 141:

տության և իրավունքի հիմունքներ»¹³) մտցնելու ուղղությամբ,

- նշված դասագրքերում ավելացնել նաև Արցախի Հանրապետության իրավական կյանքին վերաբերող նյութեր¹⁴, առավել ևս, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունն ունեն կառավարման տարբեր համակարգեր,
- պարբերաբար վերապատրաստել «Հասարակագիտություն» առարկա դասավանդող ուսուցիչներին,
- աստիճանական անցում կատարել տվյալ առարկան իրավագետ-մանկավարժի կողմից դասավանդմանը,
- մշակել և կիրառել նշված առարկայի դասավանդման նորարարական, այդ թվում՝ ինտերակտիվ մեթոդներ,
- ծնողների համար պատրաստել ձեռնարկներ՝ իրենց երեխաների հետ իրավական թեմաներով զրույցներ ունենալու նպատակով, ներառելով նաև այնպիսիք, որոնք կվերաբերվեն ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութի բացասական հետևանքներին,
- Արցախի Հանրապետության ոստիկանության անչափահասների գործերով տեսուչները, որոնք այցելում են դպրոցներ, պետք է պարբերաբար վերապատրաստվեն, կատարելագործեն սեփական գիտելիքներն ու մոտեցումները, իսկ

¹³ Համեմատության համար նշենք, որ նախքան «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը, ՀՀ-ի և ԼՂՀ-ի դպրոցների 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում դասավանդվում էր համապատասխանաբար «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» առարկաները:


¹⁴ Խոսքը, առաջին հերթին, վերաբերում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, պետության կազմավորման իրավական հիմքերին, կառուցվածքին, պետական իշխանության գործունեությանը և այլն:

աշակերտների հետ հանդիպումների ժամանակ քննարկեն արդիական ու պետության համար կենսական նշանակություն ունեցող հարցեր,


- Արցախի Չանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում և բոլոր շրջկենտրոններում ստեղծել մանկապատանեկան իրավական դպրոցներ, ուր աշակերտները կարող են հաճախել փոքր տարիքից ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված մեթոդներով ստանալ իրավական գիտելիքներ:

Անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները վկայում են, որ Արցախի Չանրապետության Սահմանադրության արժեհամակարգի ընկալունակության աստիճանը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է պատրաստել Չիմնական օրենքի մեկնաբանությունների վերաբերյալ գիտահանրամատչելի աշխատություն, որից կօգտվեն ինչպես ուսուցիչները, այնպես էլ՝ աշակերտները:


Գծապատկեր 1 (աշակերտներ)




Գծապատկեր 2 (երիտասարդներ)




Գծապատկեր 3 (աշակերտներ)




Գծապատկեր 4 (երիտասարդներ)




Գծապատկեր 5 (աշակերտներ)




Գծապատկեր 6 (երիտասարդներ)




Գծապատկեր 7 (աշակերտներ)




Գծապատկեր 8 (երիտասարդներ)




Գծապատկեր 9 (աշակերտներ)




Գծապատկեր 10 (երիտասարդներ)




Գծապատկեր 11 (աշակերտներ)




Գծապատկեր 12 (երիտասարդներ)




Գծապատկեր 13 (աշակերտներ)




Գծապատկեր 14 (երիտասարդներ)



Գծապատկեր 15



Գծապատկեր 16



§ 2. Ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացման հիմնական ուղիները

Արցախի Չանրապետության Սահմանադրության համաձայն՝ Արցախի Չանրապետությունն իրավական պետություն է, ինչի բաղադրիչներից մեկը քաղաքացիների իրավական մշակույթն է: «Անձի իրավական մշակույթն արտահայտվում է իրավական գիտելիքների յուրացմամբ, օրենքի և իրավունքի հանդեպ հարգանքով, իրավունքի նորմերի գիտակցական հետևմամբ, սոցիալական, իրավաբանական պատասխանատվության հասկացմամբ, իրավախախտումների նկատմամբ անհաշտությամբ և դրանց դեմ պայքարով»¹⁵: Չասարակության իրավական մշակույթը կախված է բնակչության իրավագիտակցության մակարդակից, ինչը ենթադրում է մարդու իրավունքների և ազատությունների արժեքի իմացություն, իրավական իրազեկվածություն, օրենքի, դատարանի, բոլոր իրավապահ մարմինների նկատմամբ հարգալից վերաբերմունք, իրավունքի պահանջները կատարելու պատրաստակամություն և այլն:

Իրավագիտակցությունը¹⁶ դիտարկելով որպես բազմաշերտ երևույթ և նրա սկզբնական օղակը համարելով աշակերտներին՝ 2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին մեր կողմից Արցախի Չանրապետության դպրոցների ավագ դասարանների 475 աշա-

¹⁵ Хабардина А. Пути повышения правосознания у граждан Российской Федерации // Вестник Восточно-Сибирского института МВД России, 2009, №1 (48), էջ 27-30.

¹⁶ Cassidy Wanda (2000). “Law-Related Education: Promoting Awareness, Participation, and Action”, 297–98, in Weaving Connections: Educating for Peace, Social and Environmental Justice (Tara Goldstein & David Selby, eds.).

կերտների շրջանում իրականացվել է սոցիոլոգիական հարցում¹⁷ նպատակ ունենալով բացահայտել վերջիններիս իրավական գրագիտության մակարդակը, ինչպես նաև առկա հիմնախնդիրների վերհանման միջոցով նախանշել վերջինիս բարձրացման հիմնական ուղիները: Այս համատեքստում պետք է ընդունել այն անվերապահ իրողությունը, որ «երիտասարդության իրավագիտակցությունը որոշում է հասարակության ու պետության, ինչպես նաև սեփական իրավունքների և պարտականությունների պաշտպանվածության գործում վստահ անձի զարգացման հեռանկարները»¹⁸:

Կատարված սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախի Չանրապետության ավագ դասարանների աշակերտներն ունեն միջինից բարձր իրավագիտակցության մակարդակ, ինչը գոհացուցիչ չէ երկրի ներկայիս կարգավիճակի, դրանից բխող մի շարք խնդիրների առկայության ու դրանց լուծման հրատապության պարագայում: Այս հանգամանքի հաշվառմամբ՝ մեր կողմից առաջ են քաշվում մի շարք գործուն միջոցներ, որոնք կնպաստեն ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը: Այս նպատակով անհրաժեշտ է բարձրացնել իրավաբանական կրթության որակը, որը, լինելով բարդ ու համալիր երևույթ, ենթադրում է ուսուցիչների բարձր պատրաստվածություն, մատչելի ու հետաքրքիր դասագրքերի առկայություն, դասավանդման նոր մեթոդիկա, ինչպես նաև իրավական գիտելիքներ, փորձ ու հմտություններ ստանալը խթանող միջոցառումների կազմակերպում:

¹⁷ Չարությունյան Ա., Պետիկյան Ս., Մաթևոսյան Յ., Բարխուդարյան Լ. Արցախի Չանրապետության ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության ձևավորման հիմնախնդիրը, Մարդ և հասարակություն, №2, 2017, էջ 11-33:

¹⁸ Кондратьева Е. Юридическое образование как фактор повышения правосознания молодежи // Вестник ТГУ, 2011, №7, էջ 186.

Դասագրքերի վերանայում

Սա, թերևս, առաջին ու կարևոր քայլն է աշակերտների կողմից անհրաժեշտ, մատչելի ու շիտակ իրավական գիտելիքներ ստանալու առումով: Մի շարք դպրոցների՝ «Չասարակագիտություն» դասավանդող ուսուցիչների և աշակերտների հետ հանդիպման ժամանակ նրանց կողմից բարձրացվել է դասագրքերի մատչելիության հետ կապված հարցը, ինչի հետ համամիտ ենք նաև մենք ու առաջարկվում է գործնական քայլեր իրականացնել այս ուղղությամբ: Դրանից զատ, անհրաժեշտ ենք համարում ավագ դասարաններում մտցնել առանձին իրավական առարկա (օրինակ, «Պետության և իրավունքի հիմունքներ»), որն աշակերտներին հնարավորություն կտա նշված տարիքում ունենալ ավելի խորը պատկերացում իրավունքի ու իրավական երևույթների նկատմամբ, ինչն էլ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվող քաղաքացու ձևավորման կարևոր նախադրյալներից մեկն է:

Դասագրքերի հետ կապված հաջորդ խնդիրը վերաբերում է Արցախի Չանրապետության իրավական իրականության մասին տեղեկատվության բացակայությանը, որը մատուցելու պարտականությունը, թերևս, դրված է ուսուցիչների վրա: Սակայն ոչ բոլոր ուսուցիչները կարող են խորապես տիրապետել իրավական նյութերին ու դրանք ներկայացնել աշակերտներին, առավել ևս, որ Չայաստանի Չանրապետությունն ու Արցախի Չանրապետությունն ունեն կառավարման տարբեր համակարգեր: Դրա մասին է վկայում այն, որ սոցիալարցման ժամանակ որոշ աշակերտներ որպես Արցախի Սահմանադրության ընդունման օր նշել են ՀՀ Սահմանադրության օրը՝ հուլիսի 5-ը:

Ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում

Կատարված հետազոտության արդյունքում պարզվել է, որ «Չասարակագիտություն» առարկա դասավանդող ուսուցիչները չեն վերապատրաստվում: Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ նշված առարկան դասավանդողները հիմնականում պատմության, աշխարհագրության կամ այլ մասնագիտության ուսուցիչներն են, որոնք իրենց մասնագիտական ուղղվածությանը համապատասխան պարտավոր չեն տիրապետել իրավագիտության ամեն մի նրբությանը և օրենսդրության փոփոխությանը զուգահեռ այն մատուցել աշակերտներին: Այս հիմնախնդրի կարևորությունը հաշվի առնելով՝ առաջարկվում է, որ «Չասարակագիտություն» առարկա դասավանդող ուսուցիչները նույնպես ամեն տարի վերապատրաստվեն: Դա բավարար հիմք կհանդիսանա նրանց կողմից սահմանադրաիրավական զարգացումների և օրենսդրության փոփոխության հետ կապված նյութերին տիրապետելու համար: Այս աշխատանքին զուգահեռ անհրաժեշտ ենք համարում աստիճանական անցում կատարել տվյալ առարկան իրավագետ-մանկավարժի կողմից դասավանդմանը, որը սկզբնական փուլում կարելի է կազմակերպել հետևյալ կերպ. Արցախի պետական, Գրիգոր Նարեկացի և Մեսրոպ Մաշտոց համալսարանների պատմության բաժինն ավարտած մասնագետները մագիստրատուրայում սովորելու ընթացքում խորապես ուսումնասիրեն նաև իրավունքը, որը նրանց հնարավորություն կտա բավարար իրավական գիտելիքներով դպրոցներում դասավանդել «Չասարակագիտություն» առարկան:

Դասավանդման մեթոդիկայի կատարելագործում

Իրավագիտակցության կարևոր նախադրյալներից մեկն իրավական ուսուցումն է¹⁹, որի միջոցով էլ տեղի է ունենում մատաղ սերնդի մոտ անհրաժեշտ իրավական-արժեքային կողմնորոշիչների ձևավորումը: Իրավական ուսուցման առանցքը նորարարական ու արդյունավետ մեթոդների կիրառումն է²⁰: Գրականության մեջ, ըստ գիտելիքի ստացման աղբյուրի, մեթոդները դասակարգվում են՝

- խոսքայինի,
- դիտողականի,
- կիրառականի²¹:

Որպես խոսքային մեթոդի տարատեսակ կարող է կիրառվել պատմությունը, բացատրությունը, զրույցը, քննարկումը, դասախոսությունը, ինչպես նաև գրքով աշխատանքը:

Իրավական ուսուցման դիտողական մեթոդների դեպքում ուսումնական նյութի յուրացումն էական կախվածության մեջ է ուսուցման գործընթացում կիրառվող դիտողական ձեռնարկներից և տեխնիկական միջոցներից: Այս մեթոդները կիրառվում են միայն մյուս երկու մեթոդների հետ միասին: Դիտողական մեթոդները պայմանականորեն կարելի է բաժանել պատկերազարդման (իլյուստրացիայի) և ցուցադրման (դեմոնստրացիայի) մեթոդների:

Պատկերազարդման մեթոդը ենթադրում է պաստառների, աղ-

¹⁹ Legal awareness, <http://www.basicknowledge101.com/pdf/literacy/Legal%20awareness.pdf>, էջ 1-8.

²⁰ McDonald Susan (1998). Public Legal Education in Ontario Legal Clinics (PDF). pp. 1-124, http://www.nlc-bnc.ca/obj/s4/f2/dsk1/tape10/PQDD_0002/MQ40664.pdf.

²¹ Кропанева Е. Теория и методика обучения праву: учебное пособие, Екатеринбург: Изд-во Рос. гос. проф.-пед. ун-та, 2012, էջ 105-112.

յուսակների, գծապատկերների ցույց տալը, իսկ ցուցադրման մեթոդի դեպքում օգտագործում են ֆիլմեր, պրեզենտացիաներ և այլն:

Կիրառական մեթոդների շարքին են դասվում վարժությունների կատարումը և իրավական տեղեկատվության աղբյուրների հետ աշխատանքը:

Վերը թվարկված մեթոդների համալիրը, թերևս, այն կարևոր միջոցներն են, որոնց շնորհիվ հնարավոր է իրավական նյութը մատուցել աշակերտին՝ դրանով իսկ ստեղծելով հետաքրքիր մթնոլորտ: Գնահատելով լսարանի պահանջարկը՝ ցանկալի է որոշ դեպքերում կիրառել նաև ոչ ֆորմալ կրթության մեթոդներ և զերծ մնալ նույնիսկ ամենաարդյունավետ ու հաջողված մեթոդը հաճախ կիրառելուց:

Արցախի Հանրապետության դպրոցներում «Հասարակագիտություն» առարկա դասավանդող մի շարք ուսուցիչների հետ հանդիպման ընթացքում պարզվել է, որ ոչ միշտ են նրանք աշակերտներին հանձնարարում, որպես տնային աշխատանք, ուսումնասիրել իրենց իրավունքներն ու պարտականությունները, երկրի կառուցվածքը, դատական համակարգը և այլն: Այս առումով առաջարկվում է որպես ինքնուրույն աշխատանքի թեմա հանձնարարել մարդու կենսագործունեության իրավական կողմին առնչվող ու կիրառական նշանակություն ունեցող թեմաներ, որոնք աշակերտները պետք է ներկայացնեն սլայդների տեսքով:

Իրավունքի թեմայով օլիմպիադայի կազմակերպում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի Հանրապետությունում երբեք իրավունքի թեմայով օլիմպիադա չի անցկացվել, աշակերտների հակումները բացահայտելու համար անցկացված սոցհարցման հարցաթերթում առաջադրվել է հետևյալ հարցը. **«Ասացեք, խնդրեմ, կցանկանայի՞ք մասնակցել իրավունքի**

Թեմայով օլիմպիադայի», որին դրական պատասխան է տվել 52,2%-ը: Ստացված արդյունքների հիման վրա, նպատակ ունենալով խթանել աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացումը և հարգանք սերմանել իրավական երևույթների հանդեպ, մեր կողմից 2017թ. փետրվարի 28-ին Արցախի Յանրապետությունում կազմակերպվել է «Սահմանադրություն և իրավունք» դպրոցականների հանրապետական առաջին օլիմպիադան, իսկ մարտի 10-ին՝ հաղթողների ու բարձր արդյունքներ ցուցաբերած աշակերտների պարգևատրման արարողությունը: Դպրոցական օլիմպիադային մայրաքաղաք Ստեփանակերտից և շրջկենտրոններից մասնակցել է 55 աշակերտ: Արցախի Յանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ արդեն ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ սույն նախաձեռնությունը դարձնել ամենամյա ու աստիճանաբար ընդգրկել առավել մեծ թվով աշակերտներ:

Իրավական բնույթի այլ միջոցառումների կազմակերպում

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացման նպատակով պետք է կիրառել նաև ոչ ստանդարտ ու շահագրգռող գործիքակազմ, որոնք ներկայացվում են ստորև.

- կազմակերպել իրավական թեմաներով օլիմպիադաներ, արտաժամյա դասընթացներ, մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, ինչպես նաև ՋԼՄ-ներով ուժեղացնել իրավական քարոզչությունը, մասնավորապես՝ հեռուստատեսությամբ հեռարձակվող իրավական բնույթի հաղորդումները դարձնել ավելի հետաքրքիր ու կիրառական, իսկ Արցախի Յանրապետությունում լույս տեսնող թերթերի էջերում ստեղծել իրավական անկյուններ և հարց ու պատասխանի միջոցով ներկայացնել քաղաքացիներին հուզող իրավական հարցե-

րի լուծման ուղիները: Ընդ որում, օլիմպիադայում առաջին մրցանակային տեղ զբաղեցրած աշակերտին կարելի է անվճար հիմունքներով ընդունել Արցախի Յանրապետությունում գործող համալսարան՝ վերջինիս ընտրությամբ,

- կազմակերպել իրավական թեմաներով հեռուստատեսային բանավեճեր և դրանց մասնակից դարձնել հատկապես ավագ դասարանների աշակերտներին,
- բոլոր դպրոցներում ստեղծել իրավական անկյուններ, պատրաստել իրավական թեմաներով պատի թերթեր, ինչպես նաև օրենքը հարգելու և նրա պահանջները կատարելու վերաբերյալ պաստառներ,
- տեսական գիտելիքները գործնականում ամրապնդելու և պետական մարմինների գործունեությանը ծանոթանալու նպատակով ցանկալի է որոշակի պարբերականությամբ այցեր կազմակերպել պետական իշխանության, մասնավորապես՝ իրավապահ մարմիններ:

§ 3. Աշակերտների իրավագիտակցության բարձրացումը որպես անչափահասների հանցագործությունների կանխման միջոց

Անչափահասների հանցավորության հիմնախնդիրը մտահոգում է աշխարհի բոլոր երկրներին: Ընդհանուր կանոնից բացառություն չէ Արցախի Յանրապետությունը, որտեղ լուրջ աշխատանքներ են տարվում վտանգավոր այս երևույթի պատճառները բացահայտելու և այն արմատախիլ անելու նպատակով արդյունավետ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ: Սույն ենթագլխում անդրադարձ է կատարվելու աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝ այն դիտարկելով որպես անչափահասների հանցավորության կանխման կարևորագույն միջոց:

Հանցավորության կանխումը ներկայումս հանդիսանում է հասարակության առջև ծառայած ամենաբարդ խնդիրներից մեկը:

Հանցավորության կանխում ասելով, ընդհանուր առմամբ, հասկացվում է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, քաղաքացիների կողմից իրականացվող միջոցների, միջոցառումների բազմաստիճան համակարգ՝ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող պայմանների և պահանջների հաղթահարմանը, նվազեցմանը և չեզոքացմանը²²: Հատկանշական է, որ այս խնդիրը բազմիցս քննարկվել է միջազգային հարթակներում: Մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության՝ հանցավորության կանխման և իրավախախտների հետ վարվելակերպի 10-րդ կոնգրեսում նշվել է, որ հանցավորության

²² Мальцева Л.В. Преступность среди несовершеннолетних и ее предупреждение Общество, Политика, Экономика, Право, 2011, № 4, էջ 102.

կանխման և անվտանգության ապահովման գործունեությունը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով ժողովրդավարական արժեքները և գործընթացները: Իրավապահ մարմինները և հանրային վարչական մարմինները պետք է հավատ ներշնչեն բնակչությանը և համագործակցեն հանցավորության կանխման գործընթացի արդյունավետության ապահովման գործում: Հանցավորության կանխման հետ կապված գործունեությունը հանդիսանում է «ինչպես կառավարության քաղաքացիական պարտքը, այնպես էլ քաղաքական պարտականությունը»²³:

Անչափահասների հանցավորությունը հանցավորության ինքնուրույն տեսակ է՝ պայմանավորված նրա բովանդակության և զարգացման որակական և քանակական ցուցանիշներով, ինչպես նաև հանցագործի անհատականությամբ, որի վարքագծի հիմքում ընկած են եսակենտրոն մղումները և անկայուն միտքը: Անչափահասների հանցավորության խնդիրը միշտ էլ ուշադրության կենտրոնում է, ինչը պայմանավորված է նրանով, որ մատաղ սերունդը հանդիսանում է սոցիալական զարգացման բնական պայմանը, իսկ նրանց կողմից քրեական օրենսդրության խախտումը վկայում է ոչ միայն դաստիարակության բացթողումների մասին, այլև՝ դիտարկվում է որպես հանցավորության կանխատեսող բնութագրիչ²⁴:

Անչափահասների հանցավորության կանխումը հանցավորության կանխման հիմնախնդրի բաղկացուցիչ մասն է, որն իրականացվում է անչափահասների կողմից հանցագործությունների կատարմանը նպաստող գործոնների նվազեցմանն ուղղված փոխ-

²³ X Конгресс Организации Объединенных Наций по предупреждению преступности и обращению с правонарушителями: сб. документов / сост. А.Г.Волеводз, М, 2001, էջ 390-391.

²⁴ Демидова-Петрова Е.В. Современная криминологическая характеристика преступности несовершеннолетних как одного из видов преступности // Административное и муниципальное право, 2014, № 5, էջ 457.

կապակցված կանխարգելիչ երկարաժամկետ միջոցների համակարգի միջոցով: Այն մասնագիտացված և ոչ մասնագիտացված սուբյեկտների գործունեություն է:

Անչափահասների հանցավորությունը բարդ սոցիալ-իրավական երևույթ է: Անչափահաս հանցագործների առանձնահատկություններն են.

1. **տարիքը.** դեռահասության տարիքում տեղի է ունենում մարդու անհատակազմավորման գործընթացը,

2. **կրթությունը.** անչափահաս հանցագործների կրթության մակարդակն ավելի ցածր է, քան նրանց հասակակիցներինը,

3. **անչափահասների փոխազդեցությունը.** անչափահաս հանցագործները բացասական ազդեցություն են թողնում մնացած անչափահասների վրա, ինչը նպաստում է հանցավորության աճին,

4. **յուրահատուկ իրավագիտակցությունը.** յուրահատուկ իրավագիտակցությունը, որում առկա են բացթողումներ: Անչափահասները բացասական վերաբերմունք են ցուցաբերում սոցիալական նորմերի, մասնավորապես՝ իրավական, բարոյական նորմերի նկատմամբ, ըստ այդմ՝ նրանք հրաժարվում են այդ նորմերը կատարելուց:

Հանցագործությունը, իրավախախտումները և, ընդհանրապես, վարքագծի կանոններից շեղումը ոչ միայն հասարակության մեջ, այլև՝ ընտանիքում հանդիսանում է անչափահասների հանցավորության առաջացման հիմնական պատճառներից մեկը:

Բարոյահոգեբանական տեսանկյունից անչափահաս հանցագործի անհատականությունը բնութագրվում է մի շարք յուրահատուկ հատկանիշներով: Նրանց հակաիրավական վարքագծի վրա, նախևառաջ, ազդում են տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են մնացածներին նմանակելը, երիտասարդական բացասականությունը, կենսական կարգադրությունների և ուղենիշների բացակայությունը: Անչափահասների մի

խմբի մոտ բացակայում է հետաքրքրվածությունը կրթության և աշխատանքի նկատմամբ: Նրանց, որպես կանոն, հետաքրքրում է հանգստի ոլորտը: Որոշ հեղինակների կարծիքով՝ «անչափահասների հանցավորությունը բացատրվում է անչափահասների կողմից իրադարձությունների ոչ ճիշտ գնահատման ու ինքնահաստատման բնագավառում կենսափորձի բացակայության պատճառով հակահասարակական վարքագծի ընտրությամբ»²⁵:

Անչափահասների հանցավորության կանխման միջոցների շարքին են դասվում.

1. անչափահասների իրավագիտակցության մակարդակի բարձրացումը,

2. պետական քաղաքականության շրջանակներում սոցիալական քաղաքականության զարգացումը,

3. անչափահասների հանցավորության կանխման գործառույթն իրականացնող պետական մարմինների կատարելագործումը,

4. անչափահաս հանցագործների վրա ազդեցություն ունենալու գործընթացում պետական և հասարակական կազմակերպությունների ջանքերի համատեղումը,

5. անչափահասների իրավական և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպումը,

6. սպորտի զարգացումն ու մարզական հաստատությունների բացումը, անչափահասներին ֆիզիկական կուլտուրային և սպորտին ներգրավելը,

7. մշակութային օբյեկտների վերակառուցումը, դրանցում հանգստի կազմակերպումը և այլն:

Անչափահասների հանցավորության կանխման ամենաարդյունավետ միջոցներից է իրավագիտակցության մակարդակի բարձ-

²⁵ Кононенко Н.Н. Обзор причин преступлений несовершеннолетних // Научный вестник — 2010. URL.: <http://kraspubl.ru/content/view/67/36/> (դիմելու ամսաթիվը՝ 16.11.2017).

րացումը: Ընդ որում, այս հիմնախնդիրն արդիական է ոչ միայն Արցախի Չանրապետությունում, այլև՝ ամբողջ աշխարհում: Ներկայումս չկա հաստատված որևէ կառուցակարգ՝ այս հիմնախնդրի արդյունավետ լուծման համար:

Իրավագիտակցությունն ամենաընդհանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում իրավական նորմերի անհրաժեշտության գիտակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու ու գործելու, դրանք հարգելու ու պաշտպանելու պատրաստակամություն²⁶:

Աշակերտների իրավագիտակցությունն իրավադաստիարակչական նպատակաուղղված գործունեության տեսակ է, ինչի արդյունքում անչափահասները յուրացնում են իրավական արժեքները, գիտելիքները, իրավունքի բնագավառի վարքագծի նորմերը²⁷: Այն հասարակական գիտակցության և իրավական մշակույթի բաղադրիչներից է և արտահայտում է աշակերտների վերաբերմունքը հասարակական կյանքի իրավական երևույթների նկատմամբ:

Իրավական գիտելիքները նպաստում են աշակերտների կողմից հասարակական երևույթների ճիշտ ընկալմանը, աջակցում են նրանց սոցիալական ակտիվության զարգացմանը, հնարավորություն են ընձեռում ճիշտ կողմնորոշվելու կյանքում, հստակեցնել թույլատրելի ու արգելվածի միջև սահմանները, իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար ընտրելու օրինական ճանապարհները: Աշակերտների իրավագիտակցության բարձրացումը նպատակ է հետապնդում նպաստել աշակերտների կողմից ստացված իրավական գիտելիք-

²⁶ Չայաստանի Չանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Չարությունյանի, Ա.Վաղարշյանի, Եր., Իրավունք, 2010, էջ 15:

²⁷ Певцова Е.А. Проблемы формирования правового сознания учащейся молодежи: дис. ... д-ра юрид. наук: 12.00.01. М., 2006, էջ 12.

ներն առօրյա կյանքում կիրառելուն:

Մեր կողմից Արցախի Յանրապետության դպրոցներում իրականացված հետազոտությունները²⁸ ցույց են տվել, որ աշակերտների իրավագիտակցության բարձրացման գործընթացը պետք է սկսել դեռևս տարրական դասարաններում: Ժամանակակից պայմաններում աշակերտները որոշակի պատկերացումներ ունեն իրենց հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին, միաժամանակ, այդ պատկերացումները կարող են լինել հակասական: Այսպես, օրինակ, աշակերտներից շատ հաճախ կարելի է լսել հետևյալ արտահայտությունները՝ «Դա իմ իրավունքն է», «Դուք խախտում եք իմ իրավունքները», «Ո՞վ է Ձեզ տվել այդ իրավունքը», ինչն ինքնին խոսում է իրավական որոշակի գիտելիքների առկայության մասին: Այս ամենի հետ մեկտեղ աշակերտները շատ հաճախ մոռանում են իրենց ծնողների, ուսուցիչների, դասընկերների իրավունքների մասին:

Այսպիսով՝ աշակերտների իրավագիտակցության բարձրացմանը խոչընդոտող հանգամանքներից է աշակերտների՝ որպես ուսումնական գործընթացի սուբյեկտների կողմից իրենց պարտականությունների չկատարումը կամ ոչ լիարժեք կատարումը:

Անչափահասների իրավագիտակցության և իրավական վարքագծի վրա մեծ ազդեցություն են ունենում սոցիալական միջավայրը, անձը՝ իր անհատական հատկանիշներով ու առանձնահատկություններով, որոշակի գիտելիքների, արժեքների ամբողջությունը, որը հասարակությունը կամ սոցիալական խումբը ձգտում է փոխանցել իր անդամներին: Այս ամենը ձևավորում են առավելապես դրական իրավագիտակցություն: Ընդ որում, սոցիա-

²⁸ Յարությունյան Ա., Պետիկյան Ս., Մաթևոսյան Յ., Բարխուդարյան Լ. Արցախի Յանրապետության ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության ձևավորման հիմնախնդիրը, Մարդ և հասարակություն, №2, 2017, էջ 11-33:

լական միջավայրի մի շարք բաղադրատարրեր կարող են նպաստել նաև հակահասարակական իրավագիտակցության արմատավորմանը²⁹: Իրավագիտակցության ձևավորման գործընթացը որոշվում է աշակերտներին անմիջապես շրջապատող հասարակական կարգի ու միկրոմիջավայրի մի շարք գործոններով³⁰:

Անչափահասների իրավագիտակցության բարձրացման նպատակով իրականացվող միջոցառումների շրջանակներում կարևոր նշանակություն պետք է տրվի Արցախի Հանրապետության Սահմանադրության, ինչպես նաև իրավունքի մի շարք ճյուղերի ուսումնասիրմանը, որոնք առավել կարևոր նշանակություն և կիրառություն ունեն աշակերտների կյանքում (վարչական, աշխատանքային, ընտանեկան, քրեական և այլն): Օրենսդրական ակտերից բացի կան նաև ենթաօրենսդրական ակտեր, որոնց ևս պետք է ծանոթանան աշակերտները: Այդպիսիք են, մասնավորապես, դպրոցի կանոնադրությունը, աշակերտների վարքագծի կանոնները, ճանապարհային երթևեկության կանոնները:

Աշակերտների իրավագիտակցության բարձրացման համար կարող են օգտագործվել նաև հետևյալ միջոցները.

1. իրավական թեմաներով արտաժամյա պարապմունքներ,
2. էքսկուրսիաներ, որոնց ընթացքում տեսական գիտելիքները համադրվում են իրավական իրականության երևույթների հետ,
3. այցելություն իրավապահ մարմիններ,
4. իրավական թեմաներով հեռուստատեսային հաղորդումների դիտում,
5. իրավական տարաբնույթ խնդիրների վերաբերյալ բանավեճերի կազմակերպում,
6. տեսանելի քարոզչություն (թեմատիկ պատի թերթի պատ-

²⁹ Башкатов И.П. Психология неформальных подростково-молодежных групп, М., Юрист, 2000, էջ 18.

³⁰ Беличева С.А. Основы превентивной психологии, М., Просвещение, 1993, էջ 35.

րաստում, թերթերից, գրքերից, իրավական տարբեր թեմաներով ներկայացված հոդվածների քաղվածքներով թղթապանակների պատրաստում) և այլն:

Աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացման կարևորագույն միջոցներից է իրավական գիտելիքներ պարունակող տարբեր դասընթացների վարումը, որոնց նպատակը պետք է լինի իրավական գիտելիքների սերմանումը, իրավական ոլորտում գործունեություն ծավալելու միջոցների և մեթոդների վերաբերյալ համապատասխան գիտելիքների տրամադրումը, ինչպես նաև իրավունքի՝ որպես սոցիալական արժեքի նկատմամբ համապատասխան վարվելակերպի սահմանումը³¹:

Աշակերտի անհատական իրավագիտակցության նպատակամիտված ձևավորման ժամանակ կարևոր նշանակություն է տրվում իրավական դաստիարակությանը: Այն, միաժամանակ, հանդիսանում է աշակերտների հակաիրավական վարքագծի կանխարգելման միջոց:

Իրավական դաստիարակությունն իրավագիտակցության, իրավական վարքագծի դրսևորման համար անհրաժեշտ գիտելիքների, ունակությունների ձևավորմանն ուղղված կազմակերպչական, համակարգված և նպատակաուղղված գործունեություն է:

Աշակերտների իրավական դաստիարակության նպատակը նրանց իրավագիտակցության ձևավորումն է և դրա հիման վրա գիտակցված ու ակտիվ իրավաչափ վարքագիծը: Իրավական դաստիարակության նպատակներին հասնելու միջոցներից են.

1. աշակերտների կողմից իրավական նորմերի վերաբերյալ որոշակի գիտելիքներ ունենալը,
2. կազմակերպչաիրավական դաստիարակությունն արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում,

³¹ Крoпанeвa E.М. Тeория и мeтoдика oбучeния пpаву: учeб. пoсoбиe. Eкaтepинбург: Изд-вo Poc. гoc. пpof. пeд. ун-тa, 2010, էջ 25.

3. դպրոցում և ըստ բնակության վայրի՝ ակտիվ մասնակցությունն իրավապահ գործունեությանը,

4. ծնողների և ուսուցիչների իրավական մշակույթի արմատավորումը:

Ժամանակակից պայմաններում իրավական դաստիարակությունն անհրաժեշտ է անչափահասների շրջանում անվտանգ կյանքը քարոզելու համար: Գաղտնիք չէ, որ հակաիրավական վարքագիծ դրսևորող անչափահասները, մասնավորապես՝ աշակերտները, բավականին մեծ վտանգ են ներկայացնում հասարակության համար, քանի որ նմանատիպ վարքագիծը մշտապես խոչընդոտում է հասարակության բնականոն զարգացմանը: Իրավական դաստիարակությունը նախապայմաններ է ստեղծում անձի անհատական զարգացման համար: Ընդ որում, ընտանիքն ու դպրոցն անձի առաջնային սոցիալականացման ինստիտուտներն են հանդիսանում:

Չարկ է նշել, որ տարբեր երկրներում աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներին տարբեր կառույցներ են ներգրավվում: Այսպես, մի շարք երկրներում գործում են հասարակական կազմակերպություններ, որոնց նպատակն է երիտասարդության շրջանում բարոյական վարքագծի արմատավորումը, անչափահասների շրջանում հարձակունակ վարքագծի բացառումը կամ այն նվազագույնի հասցնելը, իրավական անգրագիտության բացառումը, հանցավոր մտածելակերպն արմատախիլ անելը: Վերոթվագրյալ նպատակներին հասնելու նպատակով այդ կազմակերպությունները համագործակցում են ուսումնական հաստատությունների հետ, համատեղ անցկացնում են դասընթացներ՝ արդյունքում արձանագրելով հանցավոր վարքագծի և հանցագործությունների նվազեցում:

Չայտնի է, որ անչափահասների իրավակազմավորման գործընթացում կարևորագույն դերակատարությունը պատկանում է դպրոցին: Չենց դպրոցում է հնարավոր բացահայտել անչափա-

հասների անհատակազմավորման շեղումները, ինչպես նաև նրանց շրջապատում գտնվող քրեածին գործոնները: Բնականաբար, դաստիարակչական ու կանխարգելիչ գործունեությունը հնարավոր է իրականացնել բացառապես դպրոցի հիման վրա³²:

Հարկ է նկատել, որ 2008 թվականից սկսած՝ Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցներում դասավանդվում է «Հասարակագիտություն» առարկան, որի շրջանակներում աշակերտները ստանում են իրավական գիտելիքներ, ընդ որում, «Հասարակագիտություն» ինտեգրված առարկայի «իրավագիտություն» բաժինը դասավանդվում է 11-րդ դասարանի առաջին կիսամյակում՝ շաբաթական առավելագույնը 2 ժամ ժամաքանակով³³: Նշված դասընթացի շրջանակներում աշակերտները ծանոթանում են Սահմանադրությանը՝ ուսումնասիրելով, նախևառաջ, անձի իրավական կարգավիճակի հիմունքների վերաբերյալ հիմնադրույթները, պատկերացում են կազմում պետության, նրա գործառույթների, կառավարման ձևերի մասին, գիտելիքներ են ձեռք բերում իրավունքի աղբյուրների և նորմերի, իրավակարգի և իրավահարաբերությունների, իրավախախտումների և իրավաբանական պատասխանատվության, վարչական, քաղաքացիական, աշխատանքային, քրեական իրավունքների հիմունքների, վեժերն իրավական միջոցներով լուծելու մասին:

Բացի այդ, Արցախի Հանրապետության իշխանությունները մշտապես ուշադրության կենտրոնում են պահում երեխաների հետ կապված հարցերը: Արցախի Հանրապետության կառավարության կողմից ընդունվում է երեխայի իրավունքների պաշտպանու-

³² Иванова А.А. Педагогическая профилактика в системе предупреждения преступлений: автореф. дис. ... канд. юрид. наук, Н.Новгород, 2006, էջ 4.

³³ Հարությունյան Ա., Պետիկյան Ս., Մաթևոսյան Հ., Բարխուդարյան Լ. Արցախի Հանրապետության ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության ձևավորման հիմնախնդիրը, Մարդ և հասարակություն, №2, 2017, էջ 14:

թյան տարեկան ծրագիրը և հաստատվում ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկը:

Արցախի Հանրապետության ոստիկանության անչափահասների գծով տեսուչները, համագործակցելով ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների հետ, միջոցներ են ձեռնարկում անչափահասների հանցավորությունը կանխելու նպատակով (*գծապատկեր 15-ում, 16-ում և Աղյուսակ 1-ում ու 2-ում ներկայացված են անչափահասների հանցավորության վիճակն Արցախի Հանրապետությունում*): Այդ միջոցներից են անչափահասների շրջանում իրականացվող կանխարգելիչ աշխատանքները, որոնց, ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներից բացի, մասնակցում են նաև առողջապահության, արդարադատության, կրթության, գիտության և սպորտի նախարարությունների աշխատակիցները: Կանխարգելիչ աշխատանքների շրջանակներում մասնագետները ներկայացնում են իրենց ոլորտի՝ երեխաների իմացության համար անհրաժեշտ թեմաներ: Ուշագրավ է այն փաստը, որ երեխաները համակ ուշադրությամբ լսում են մասնագետներից յուրաքանչյուրին և բարձրաձայնում իրենց հուզող հարցերը: Հեղինակներն անձամբ ներկա են գտնվել 2016 և 2017 թվականներին Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից կազմակերպված կանխարգելիչ աշխատանքներին՝ ներկայացնելով ամուսնաընտանեկան հարաբերությունների հետ կապված հարցերը: Նախնառաջ, ներկայացվել են Արցախի Հանրապետության Սահմանադրության մեջ առկա նորամուծությունները՝ կապված ծնողների և երեխաների իրավունքների ու պարտականությունների հետ, անդրադարձ է կատարվել ամուսնաընտանեկան հարաբերությունների իրավական պաշտպանության դրույթներին, պատասխանել աշակերտներին հուզող հարցերին, կոչ արել աշակերտներին՝ ցանկացած պարագայում գիտակցված որոշումներ կայացնել, ցանկացած արարք կատարելուց առաջ մտածել դրա

ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական հետևանքների մասին:

Աշակերտների հետ անմիջական շփումից հետո ևս մեկ անգամ հավաստիացել ենք նրանում, որ մատաղ սերունդը սպունգի նման կլանում է ստացված տեղեկատվությունը՝ անկախ ստացման եղանակից: Ուստի՝ հանրակրթական ուսումնական հաստատությունները պետք է ջանք չխնայեն աշակերտներին հավաստի տեղեկատվություն տրամադրելու համար: Վերջինս կարող է իրականացվել աշակերտների՝ իրավասու կառույցների մասնագետների հետ պարբերական հանդիպումներ կազմակերպելու միջոցով: Նմանատիպ հանդիպումները հնարավորություն կընձեռեն աշակերտներին՝ առանց վարանելու առաջադրելու իրենց մտահոգող հարցերը և համապատասխան մասնագետների կողմից ստանալու այդ հարցերի պատասխանները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ անչափահասների հանցավորության կանխումը բազմակողմանի և ծավալուն աշխատանք է: Ընդ որում, անչափահասների շրջանում հանցավորության կանխման յուրաքանչյուր միջոց, մասնավորապես, իրավագիտակցության մակարդակի բարձրացումը, կարող է դրական արդյունք ունենալ միայն այն դեպքում, երբ դրանք իրականացվում են պետական մարմինների և հասարակական համապատասխան կառույցների (ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների) փոխհամաձայնեցված, փոխկապակցված և նպատակամիտված գործողություններով՝ դրանով իսկ նպաստելով հանցավոր վարքագծի վերացմանը, և հարթակ հանդիսանալով անձի անհատական զարգացման համար:

**ԱՆՉԱՓԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՈՎ***

Աղյուսակ 1. Անչափահասների հանցավորության մասնաբաժինն ընդհանուր հանցավորության կառուցվածքում 2007-2017 թվականներին

Թվական	Մասնաբաժին
2007	7,66 %
2008	7,7 %
2009	2,96 %
2010	3,86 %
2011	1,9 %
2012	3,82 %
2013	3,4 %
2014	2,86 %
2015	4,96 %
2016	5,54 %
2017	5.87 %

* Տեղեկատվությունը տրամադրել է Արցախի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնը:

Աղյուսակ 2. Անչափահասների հանցավորության կառուցվածքային հիմնական բաղադրիչները 2007-2017 թվականներին՝ բացարձակ թվերով

Դանց. տեսակը	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
գորություն	28	32	10	18	4	13	10	9	6	24	13
թմրամիջոցի շրջանառություն	-	2	-	-	-	-	-	1	-	-	-
խուլիգանություն	-	5	1	-	-	1	-	-	-	-	-
թեթև մարմնական վնասվածք հասցնելը	-	2	-	-	-	-	-	-	-	2	3
գրպարտություն	1	-	-	-	-	-	-	-	-	-	-
թաղման վայրն անարգել	1	-	-	-	-	-	-	-	-	-	-
ավտոմեքենային ապօրինի տիրանալ	2	-	-	-	-	-	-	-	-	-	-
միջին ծանրության մարմնական վնասվածք հասցնելը	2	-	1	-	-	-	-	-	-	1	1
սեքսուալ բնույթի գործողություն	1	-	-	-	-	-	-	-	-	-	1
ծեծ	1	-	-	-	-	-	-	-	-	8	19
կեղծ փող պատրաստել	-	-	1	-	-	-	-	-	-	-	-

Հանց. տեսակը	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ջրային կենդանիներ արդյունահանել սպանություն	-	1	1	-	-		1		1		
Ծանր մարմնական վնասվածք հասցնելը	-			1			1		1	1	
անտառահատում	-			1							
խարդախություն	-				1					1	
հոգեկան հուզված վիճակում սպանություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-
իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնության գործարդում	-	-	-	-	-	-	1	1		-	-
կոլդպուտ								5		-	-
սուտ մատնություն	-	-	-	-	-	-	-	1		-	-
կռիվազենքի օգտագործում	-	-	-	-	-	-	-	-	1	-	-
ապօրինի ոլորտ									1	-	-
զենքի հատիչտակում	-	-	-	-	-	-	-	-	-	1	-

Ֆանգ. տեսակը	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
ապօրինի գենք պահել	-	-	-	-	-	-	-	-	-	1	-
ապօրինի բնակարան մուտք գործել	-	-	-	-	-	-	-	-	-	1	-
փաստաթուղթ կեղծել	-	-	-	-	-	-	-	-	-	1	-
դիտավորյալ գույքի ոչնչացում	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
անգաղափարային միջին ծանրության մարմնական վնասվածք հասցնել	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
անգաղափարային ծանր մարմնական վնասվածք հասցնել	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
ավտոմեքենային ապօրինի տիրանալը	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Ընդամենը	36	41	15	20	6	14	13	17	10	41	41

**ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ)**

**§ 1. Արցախի Յանրապետությունում երիտասարդության
իրավագիտակցության ձևավորման հիմնախնդիրը**

Սույն աշխատության 1-ին գլխի 1-ին ենթագլխում անդրադարձել ենք Արցախի Յանրապետության դպրոցների ավագ դասարանների աշակերտների իրավագիտակցության հիմնախնդրին, որը բացահայտել ենք սոցիոլոգիական հարցման եղանակով:

Որպես կատարված աշխատանքի տրամաբանական շարունակություն՝ 2017թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մեր կողմից Արցախի Յանրապետության երիտասարդության շրջանում անց է կացվել է առցանց սոցիոլոգիական հարցում, որին մասնակցել են ինչպես համալսարանների ուսանողներ, երիտասարդական հասարակական կազմակերպությունների անդամներ, այնպես էլ երիտասարդության տարբեր հատվածների ներկայացուցիչներ:

Հարցումը նպատակ էր հետապնդում բացահայտել երիտասարդների ստացած իրավական գիտելիքների աստիճանը, վարքագծային դրսևորումները, իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու ցանկությունը և սեփական իրավական գիտելիքների նկատմամբ ունեցած գնահատականը:

Հարցմանը մասնակցել են 18-35 տարեկան 239 երիտասարդներ, որոնց սեռային բաշխումն ունի հետևյալ պատկերը. իգական՝ 82% կամ 196 հոգի, արական՝ 18% կամ 43 հոգի: Ընդ որում, հարցվողների 2,5%-ն ունի միջնակարգ կամ միջին մասնագիտական, 27,2%-ը՝ թերի բարձրագույն (սովորում են), իսկ մոտ երեք չորրորդը՝ 70,3%-ը, բարձրագույն կրթություն:

Չարցվողների տարիքային բաշխումը հետևյալն է. 18-24 տարեկան՝ 53,6%, 25-30 տարեկան՝ 25,9% և 31-35 տարեկան՝ 20,5%:

Չարցմանը մասնակցած երիտասարդության 41,1%-ը պետական ոլորտում աշխատող է, 30,1%-ը՝ ուսանող, 13,1%-ը՝ մասնավոր ոլորտում աշխատող, 4,7%-ը՝ ինքնագրաված, 2,1%-ը՝ գործազուրկ, 1,7%-ը՝ տնային տնտեսուհի/տնտեսավար, 1,7%-ը՝ ՉԿ-ում աշխատող, 1,3%-ը՝ մասնավոր ոլորտում գործատու, 0,4%-ը՝ գյուղատնտեսությամբ զբաղվող, իսկ 3,8%-ը՝ այլ:

Չարցաշարը պայմանականորեն բաժանել ենք հետևյալ 4 մասերի (մակարդակների).

1. երիտասարդների իրավական իրազեկվածության (իրավունքի իմացության) մակարդակ,

2. երիտասարդների իրավագիտակցության վարքագծային (իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու) մակարդակ,

3. երիտասարդների իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու (իրավական գիտելիքներն ավելացնելու) պատրաստակամություն,

4. երիտասարդների իրավագիտակցության գնահատողական մակարդակ:

Երիտասարդների իրավական իրազեկվածության (իրավունքի իմացության) մակարդակը

Այսպես, հարցաշարի «Ստանում/ստացել ե՞ք անհրաժեշտ ու բավարար իրավական գիտելիքներ բուհում սովորելու ընթացքում» հարցին հարցվողների 35,8%-ը պատասխանել է, որ «այո, ստացել եմ բավարար իրավական գիտելիքներ», 47,4%-ը նշել է, որ «ստացած իրավական գիտելիքները բավարար չեն», 15,1 %-ն ընտրել է «ոչ, չեմ ստացել», իսկ 1,7%-ը՝ «բուհում չեմ սովորել» պատասխանը:

«Որքանով եք ծանոթ Արցախի Չանրապետության 2017թ. Սահմանադրությանը» հարցին հարցվողների 21,6%-ը պա-

տասխանել է «լիովին ծանոթ եմ», 57,8%-ը՝ «հիմնականում ծանոթ եմ», 14,7%-ը նշել է, որ «հիմնականում ծանոթ չեմ», իսկ 6%-ն ընտրել է «ընդհանրապես ծանոթ չեմ» պատասխանը (*Գծապատկեր 2*):

Ուսումնասիրելով «Սովորաբար որտեղից եք տեղեկանում Ձեր իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին» հարցին տրված պատասխանները՝ պարզ է դառնում, որ հարցվողների կեսից ավելին՝ 55,1%-ը, փնտրում է համացանցում, 12%-ը դիմում է իրավաբանի օգնությանը, 8,5%-ը հարցնում է դասախոսներին, 8,1%-ը հարցնում է ընկերներին/գործընկերներին, իսկ 6%-ը՝ ծնողներին: Հարցաթերթում եղել է նաև սեփական պատասխանը գրելու հնարավորություն և հարցվողների 2,1%-ը նշել է, որ իրավաբան է, 1,7%-ը տեղեկանում է Արցախի Հանրապետության Սահմանադրությունից, իսկ ահա 6,4%-ը նշել է ոչ միատեսակ պատասխաններ (*Գծապատկեր 4*):

Եթե ընդհանրացնելու լինենք վերոգրյալը, ապա ստացվում է, որ հարցվողների գրեթե 2/3-ը կամ 62,5%-ը բավարարված չէ բուհում ստացած իրավական գիտելիքներից այն դեպքում, երբ վերջիններիս միայն 30%-ն է ուսանող, իսկ մյուս մասն արդեն ավարտել է բուհը:

Այս առումով պետք է հաշվի առնել, որ հարցմանը մասնակցել են ինչպես իրավաբանական, այնպես էլ ոչ իրավաբանական կրթություն ունեցող անձինք: Ուստի, եթե իրավաբանական կրթությունը ենթադրում է հատուկ մոտեցում և նեղ մասնագիտական առարկաների ուսումնասիրություն, ապա ոչ իրավաբանները պետք է բուհում ստանան այն նվազագույն գիտելիքները, որոնց միջոցով նրանք կկարողանան ճիշտ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում և կայացնել օրենքին համապատասխան որոշում: Կարծում ենք, որ բուհերում անհրաժեշտ է վերանայել և ուսումնական պլանները, և դասավանդման մեթոդաբանությունը: Սրանում կարելի է համոզվել՝ ուսումնասիրելով սույն ենթագլխի 3-րդ մասի

1-ին հարցի պատասխանները:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների 79,4%-ը ծանոթ է Արցախի Հանրապետության 2017թ. Սահմանադրությանը, իսկ մնացած մասը հիմնականում (կամ՝ ընդհանրապես) ծանոթ չէ երկրի Հիմնական օրենքին: Սահմանադրության հետ ծանոթ լինելու լավագույն տարբերակներն են ինչպես վերջինիս գրավոր տարբերակը քաղաքացիներին անվճար բաժանելը, ինչպես դա արել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության շրջանակներում ուսուցողական դասընթացների կազմակերպումը, որի մասնակիցները կարող են լինել Սահմանադրության յուրօրինակ կրողներ ու տարածողներ:

Իրավական ճիշտ վարքագիծ դրսևորելու համար անչափ կարևոր է հավաստի իրավական աղբյուրներին տիրապետելը: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների կեսից ավելին կամ 55,1%-ն իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին տեղեկանում է համացանցից: Ներկա իրողություններում սա, իհարկե, նորմալ երևույթ է, քանի որ երիտասարդությունը շատ է օգտվում համացանցից, ուղղակի այստեղ կարևոր է այն հանգամանքը, թե ո՞ր կայքերն են իրավական գիտելիքներ ստանալու աղբյուր: Օրինակ, Արցախի Հանրապետության իրավական տեղեկատվական համակարգից կարելի է օգտվել՝ այցելելով www.arlexis.am կայքը և որոնելով անհրաժեշտ իրավական ակտերը: Ի դեպ, կայքում տեղադրվում են բոլոր նորմատիվ իրավական ակտերը, և պարբերաբար թարմացվում է:

Միևնույն ժամանակ, հարցվողների ընդամենը 1,7%-ն է նշել, որ իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին տեղեկանում է Արցախի Հանրապետության Սահմանադրությունից, որն այդքան էլ լավ արդյունք չէ, քանզի հենց Հիմնական օրենքում են տեղ գտել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:

**Երիտասարդների իրավագիտակցության վարքագծային
(իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու)
մակարդակը**

«Ի՞նչ պարբերականությամբ եք խախտում ճանապարհային երթևեկության կանոնները» հարցին տրված պատասխաններն ունեն հետևյալ պատկերը. հաճախ՝ 1,3%, երբեմն՝ 22,7%, հազվադեպ՝ 36,9%, չեմ խախտում՝ 39,1%:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցվողների 39%-ն իրենց սուբյեկտիվ կարծիքով ընդհանրապես չեն խախտում ճանապարհային երթևեկության կանոնները, իսկ մյուս մասը որոշակի պարբերականությամբ թույլ է տալիս խախտում: Մոտ երկու տարի տևած մեր մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ Ստեփանակերտում հետիոտների գրեթե 80%-ը չի հետևում ճանապարհային նշաններին, այսինքն՝ ճանապարհը հիմնականում հատում են ոչ հետիոտնային անցումներով կամ էլ լուսացույցի դեղին ու կարմիր ազդանշանի դեպքում՝ մոռանալով սեփական անվտանգության և հետիոտնի պարտականության մասին:

«Եթե խախտվեն Ձեր իրավունքները, ինչպե՞ս կվարվեք» հարցի պատասխաններից ակնհայտ է դառնում, որ հարցվողների 29,8%-ն իրավունքների խախտման դեպքում կդիմի ծանոթ իրավաբանի օգնությանը: Հետաքրքիր է, որ հարցվողների մի զգալի մասը՝ 27,9%-ը, իրավունքների խախտման դեպքում ոչ մի տեղ չի դիմի, այլ հարցը կլուծի սեփական ուժերով: Հարցվողների 24,7%-ը նշել է, որ նման դեպքում կդիմի դատարան, 14,9%-ը՝ վերադաս պետական մարմիններ: Հարցվողների 2,8%-ն ընտրել է այլ պատասխան (*Գծապատկեր 6*):

«Ձեր գործողությունները միշտ եք համաձայնեցնում օրենքի պահանջներին» հարցին 23,3%-ը պատասխանել է, որ մշտապես համաձայնեցնում է, 70,3%-ը նշել է, որ հիմնականում համաձայնեցնում է, այսինքն՝ հարցվողների 93,6%-ն իրենց գործողու-

թյունները համաձայնեցնում են օրենքի պահանջներին: Հարցվողների 3%-ը նշել է, որ հիմնականում չի համաձայնեցնում, իսկ 3,4%-ը՝ ընդհանրապես չի համաձայնեցնում (*Գծապատկեր 8*):

«Արդյո՞ք Դուք թույլ կտաք հակաիրավական գործողություն հանուն նյութական շահի» հարցին 95%-ը տվել է բացասական պատասխան, իսկ 5%-ը՝ դրական, այսինքն՝ թույլ կտա հակաիրավական գործողություն:

Երիտասարդների իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու (իրավական գիտելիքներն ավելացնելու) պատրաստակամությունը

Իրավական պետության կառուցման ու ամրապնդման կարևոր բաղադրիչներից կարելի է համարել այն, որ հասարակության անդամները՝ տվյալ պարագայում երիտասարդությունը, հետևողականորեն բարձրացնում է սեփական իրավական գիտելիքների մակարդակը, այսինքն՝ տեղյակ է երկրի օրենսդրության գոնե կարևորագույն փոփոխություններին և հետևում է դրանց իրականացմանը: Այս իմաստով, մեր կողմից առաջադրվել են նաև այնպիսի հարցեր, որոնք նպատակ են հետապնդում բացահայտել հարցվողների հենց նշված ցանկությունները:

Այսպես, **«Կցանկանայի՞ք, որպեսզի բուհում ավելացվեր «իրավագիտություն» առարկայի դասաժամերը»** հարցին տրված պատասխաններից ակնհայտ է դառնում, որ հարցվողների մեկ քառորդից ավելին կամ 82,6%-ն ունի նման ցանկություն, իսկ 17,4%-ը՝ ոչ: Սա էլ այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք հարցվողները բավարարված են բուհի կողմից տրված իրավական գիտելիքներով:

Նշենք, որ 2016թ. մարտ-ապրիլ ամիսներին մեր նախաձեռնությամբ կազմակերպվել է երիտասարդների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված ուսուցողական դասընթացների շարք,

որին մասնակցել են 18-30 տարեկան շուրջ 30 երիտասարդներ, ինչի շրջանակներում տպագրվել է «Իրավագիտակից երիտասարդ» տեղեկատվական գրքույկը:

Բացահայտելու համար արդյո՞ք ներկայումս նման ցանկություն կա երիտասարդների շրջանում, մենք առաջադրել ենք հետևյալ հարցը. **«Կցանկանայի՞ք մասնակցել Արցախում կազմակերպվող և երիտասարդների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված ուսուցողական դասընթացների (թրեյնինգների)»**, որին հարցվողների 93,5%-ը դրական է պատասխանել, այսինքն՝ ունեն նման ցանկություն, իսկ բացասական պատասխան տվողները կազմում են ընդամենը 6,5%-ը: Այս արդյունքները լավ հնարավորություն կարող են հանդիսանալ, որպեսզի Արցախում գործող բուհերի հետ համատեղ կազմակերպվեն նմանատիպ ուսուցողական դասընթացներ:

«Ի՞նչ միջոցներով կցանկանայիք բարձրացնել Ձեր իրավագիտակցության մակարդակը (նշել բոլոր հնարավոր տարբերակները)» հարցին տրվել են հետևյալ պատասխանները. հարցվողների 35,3%-ը նշել է «մասնակցել իրավական թեմաներով արտաժամյա դասընթացների» տարբերակը, 27,7%-ը ՁԼՄ-ների միջոցով իրավական քարոզչությունն ուժեղացնելով, 19,9%-ը՝ «մասնակցել իրավական թեմաներով ինտելեկտուալ խաղերի» տարբերակը, 10,9%-ը ցանկանում է սեփական իրավագիտակցության մակարդակը բարձրացնել իրավական թեմաներով մրցույթների, իսկ 5%-ն իրավական թեմայով ուսանողական օլիմպիադաների մասնակցելու միջոցով: Նշված հարցին այլ պատասխան է նշել հարցվողների 1,1%-ը: Նշված հարցին տրված պատասխանները ևս կարող են կողմնորոշիչ լինել ուսանողների իրավական գրագիտության մակարդակը բարձրացնելու գործիքակազմ ընտրելու ժամանակ (*Գծապատկեր 10*):

Երիտասարդների իրավագիտակցության գնահատողական մակարդակը

«Ձեր կարծիքով՝ դրն է սահմանված իրավական նորմերին չհետևելու հիմնական պատճառը» հարցին տրված պատասխաններից ակնհայտ է դառնում է, որ որպես այդպիսի հիմնական պատճառ դիտարկվում է իրավական գրագիտության պակասը՝ 47,1%, այնուհետև անպատժելիությունը՝ 28,4%, ընտրված կենսակերպը՝ 11,6%, ծայրահեղ իրավիճակը՝ 5,8% և ինքնավստահությունը՝ 5,3%, իսկ 1,8%-ը տվել են այլ պատասխաններ (Գծապատկեր 12):

Պատասխանելով **«1-10 բալանոց սանդղակով ինչպես կգնահատեք Ձեր իրավագիտակցության մակարդակը, որտեղ 1-ն ամենացածր միավորն է, իսկ 10-ը՝ ամենաբարձր»** հարցին՝ հարցվողների 7,5%-ն սեփական իրավագիտակցության մակարդակը գնահատել է ցածր՝ 1-4 բալ, 43,9%-ը՝ միջին՝ 5-7 բալ, իսկ 48,7%-ը՝ բարձր՝ 8-10 բալ (Գծապատկեր 14):

Այսպիսով, վերլուծության ենթարկելով Արցախի Յանրապետության երիտասարդության իրավագիտակցության մակարդակի բացահայտման նպատակով անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները, կարելի է եզրահանգել, որ՝

1. Երիտասարդների մոտ առկա է ընդգծված ցանկություն դեպի «իրավագիտություն» առարկան, ինչի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել գործնական քայլեր ինչպես դասաժամերի ավելացման, այնպես էլ՝ դասավանդման մեթոդաբանության կատարելագործման միջոցով,

2. քանի որ հարցվողներն ունեն սեփական իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու տրամադրվածություն, ցանկալի է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, փաստաբանական պալատի և նման ուղղվածությամբ այլ կառույցների հետ համատեղ կազմակերպել ուսուցողական դասընթացներ և արտա-

ժամյա պարապմունքներ ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությանը, որը կնպաստի, որպեսզի երիտասարդներն ավելի խորությամբ ու նորովի ընկալեն ինչպես երկրի իրավական համակարգը, այնպես էլ տարբեր կառույցների կենսագործունեության հետ կապված նրբությունները,

3. սեփական իրավագիտակցության մակարդակի վերաբերյալ երիտասարդներն ունեն մի փոքր չափազանցված կարծիք, քանի որ հարցվողների 48,7%-ն այն գնահատել է բարձր, իսկ 43,9%-ը՝ միջին, այսինքն՝ ստացվում է, որ հարցվողների 92,6%-ն ունի ամնվազն միջին ու բարձր իրավագիտակցության մակարդակ, ինչի հետ համամիտ չենք այն հիմնավորմամբ, որ որոշ դեպքերում նույնիսկ իրավաբանական բաժնի բակալավրիատի կամ մագիստրատուրայի ուսանողը հստակ պատկերացում չունի, թե Արցախի Չանրապետությունում կառավարման ինչ մոդել է, որո՞նք են իշխանության ճյուղներն ու նրանց լիազորությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, տեղական ինքնակառավարման դերն ու խնդիրները և այլն:

§ 2. Իրավաբանական կրթության հիմնախնդիրն Արցախի Յանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում

Իրավաբանական կրթությունն անձի՝ հիմնարար (խորը, գիտական, համակարգված) իրավաբանական գիտելիքներ ստանալուն նպատակաուղղված գործընթաց է, որը համապատասխանում է իրավաբանական տեսության և պրակտիկայի զարգացման ժամանակակից մակարդակին³⁴: Չնայած այն հանգամանքին, որ պարբերաբար խոսվում է իրավաբանի մասնագիտացում ունեցող շրջանավարտների մեծաթվության և աշխատաշուկայում առկա պահանջարկից ավելի շատ իրավաբաններ «թողարկելու» մասին, այնուամենայնիվ, հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների մի մասը շարունակում է ընտրել հենց այդ մասնագիտությունը:

Մեր կարծիքով՝ պահանջվածից շատ իրավաբաններ «թողարկելը», կամ, ինչպես հաճախ ասում են, իրավաբանների գերարտադրությունը բացասական երևույթ չէ, քանի որ ոչ մասնագիտությամբ աշխատող իրավաբանները ևս կարող են նպաստել քաղաքացիական հասարակության և իրավական պետության կառուցման գործընթացին: Այստեղ մեծագույն խնդիրը թողարկվող իրավաբանների մասնագիտական պատրաստականության մակարդակն է, որի ոչ բարձր լինելը կարող է ունենալ հակառակ արդյունքը: Դրանից զատ, ոչ բարձրակարգ իրավաբանի գիտելիքներն ու կարողությունները հնարավոր է հասարակության այլ անդամների մոտ թյուր կարծիք ձևավորեն իրավաբանի մասնագիտության վերաբերյալ, ենթադրելով, նաև, որ իրավաբանական ֆակուլտետ ընդունվելն ու ավարտելը շատ հեշտ գործընթացներ են:

³⁴ Усанов Е.Е. Место юриспруденции в системе наук об образовании // Юридическое образование и наука, 2012, № 2, էջ 12-17.

Գաղտնիք չէ, որ աշխարհի գրեթե բոլոր երկրներում իրավաբանական կրթությունն զբաղեցնում է առաջատար տեղ, ունի ռազմավարական նշանակություն և սահմանադրական անվտանգության բաղադրատարր է: Իրավաբանական կրթության հիմնախնդիրը սահմանադրական անվտանգության նշանակություն ունի նաև միջազգային հանրության կողմից դեռևս չձանաչված Արցախի Յանրապետությունում: Ինչպես նշում է պրոֆեսոր Ն.Բոնդարը՝ «իրավաբանական կրթության՝ որպես սահմանադրական արժեքի ընկալումն այն է, որ իրավաբանական կադրերի պատրաստման որակը, վերջնարդյունքում սահմանադրական անվտանգության խնդիր է, ընդ որում՝ անվտանգությունն այս պարագայում հավասարապես վերաբերում է ինչպես հասարակությանն ու պետությանը, այնպես էլ յուրաքանչյուր կոնկրետ անձի»³⁵: Այստեղ սահմանադրական անվտանգություն ասելով՝ պետք է ընդունել այն անառարկելի ժշմարտությունը, որ հատկապես իրավաբանի մասնագիտություն ունեցող անձինք պետք է խստագույնս հետևեն Սահմանադրությանը և պարտավորություն զգան վերջինիս դրոյթների անշեղ կատարման, ինչպես նաև քաղաքացիներին նույն ձևով դաստիարակելու համար: Ընդհանրապես, մեր խորին համոզմամբ, իրավաբանի առաքելությունն այն է, որ ոչ թե ու ոչ միայն զբաղվի իրավական վեճերով, այլև նպաստի, որ երկրի ներսում ու արտաքին հարաբերություններում մեղմի ու նվազագույնի հասցնի այդ իրավական վեճերը:

Իրավաբանական կրթության հիմնախնդիրը կապված է նաև իրավաբանների արհեստավարժ իրավագիտակցության հետ, քանի որ հասարակության մեջ հենց նրանք են, աստվածաշնչյան լեզվով ասած, իրավական գիտելիքների «սերմնացանները»: Ընդ

³⁵ Бондарь Н.С. Российское юридическое образование как конституционная ценность: национальные традиции и космополитические иллюзии. Серия «Библиотечка судебного конституционализма», Вып. 3, 2-е изд., доп., М., Изд-во «Юрист», 2014, էջ 23.

որում՝ իրավաբանական կրթություն ստացած ու ձևախեղված իրավական գիտելիքներ ունեցող դիպլոմավորված իրավաբանը, որն աշխատանքի է անցնում պետական և մասնավոր հատվածներում, որոշ իմաստով, սպառնալիք է հանդիսանում պետականության ու իրավական համակարգի համար:

Այսպես՝ Արցախի Հանապետությունում իրավագետ մասնագետի որակավորում տրվում է Արցախի պետական համալսարանի³⁶ և երկու մասնավոր՝ «Մեսրոպ Մաշտոց»³⁷ և «Գրիգոր Նարեկացի» համալսարանների կողմից³⁸: Որոշակի պատճառներով պայմանավորված՝ առկա մասնագիտական պատրաստականության մակարդակը չի բավարարում ներկայիս պահանջներին, և այս ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել վիճակը բարելավող կոնկրետ քայլեր:

Այս կապակցությամբ ընդունելի է պրոֆեսոր Ա.Վաղարշյանի այն մոտեցումը, որ մեզ մոտ իրավաբանական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացման ընթացքում պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. 1. բարեփոխումները պետք է կապել տեղական առանձնահատկությունների հետ, 2. բարեփոխումներն իրականացնել ոչ թե այլ երկրների մոդելների ընդօրինակմամբ, այլ համաշխարհային մասշտաբով կրթության զարգացման միտումների հաշվառմամբ՝ չջարդելով հայկական համակարգը³⁹:

Ստորև ներկայացնում ենք Արցախի Հանրապետությունում

³⁶ Արցախի պետական համալսարանի կայքէջը՝ <http://www.asu.am/>:

³⁷ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի կայքէջը՝ <http://www.mashtots.am/>:

³⁸ «Գրիգոր Նարեկացի» համալսարանի կայքէջը՝ <http://grigornarekatsi.am/>:

³⁹ Վաղարշյան Ա. Արդի աշխարհի մանկավարժական համակարգերը և իրավաբանական կրթության հիմնահարցերը Հայաստանում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ, 2016, էջ 6-17:

իրավաբանական կրթության զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման վերաբերյալ որոշակի առաջարկություններ՝ ըստ առանձին բաժինների:

Իրավաբանական կրթության նկատմամբ մոտեցման վերանայում

Չաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխարհում գոյություն չունի իրավաբանական կրթության համընդգրկուն մոդել, անհրաժեշտ է Արցախի Չանրապետության առանձնահատկությունների հաշվառմամբ մշակել իրավաբանական կրթության զարգացման հայեցակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով պատրաստվող իրավաբանների որակին: Մեր կողմից իրականացված դիտարկումները ցույց են տալիս, որ երկրում իրավաբանների թվի աճն էականորեն չի նպաստում քաղաքացիների իրավական մշակույթի մակարդակի շոշափելի բարձրացմանը: Այս համատեքստում կա կարծիք, ըստ որի՝ «իրավաբանական կրթության հիմնական խնդիրը ոչ այնքան իրավաբանների պատրաստման մակարդակի նվազեցման մեջ է, որպես այդպիսին, այլ նրանում, որ մեր իրավաբանական կրթական միջավայրն իր հիմնարար տարրերով չի գտնում հասարակության սոցիալական զարգացման պահանջմունքներին համապատասխանող փոփոխության վեկտոր: Իրավաբանների պատրաստման ժամանակակից սոցիալական պրակտիկայի և ձևավորված մոդելի միջև առաջացել է հիմնաքային հակասություն»⁴⁰:

Վերոնշյալ հայեցակարգի մշակման ժամանակ պետք է հաշվի առնվեն հետևյալ սկզբունքային հարցերը.

- Իրավաբանական կրթության ամբողջ համալիրը կարելի է պատկերել տան տեսքով, որի հիմքը դրվում է դպրոցում, վերնա-

⁴⁰ Синюков В.Н., Синюкова Т.В. Концептуальные основы развития университетского и прикладного юридического образования в России, Юридическая техника, 2009, №3, էջ 293.

հարկը՝ բուհում, իսկ բովանդակություն հաղորդվում է փորձի միջոցով: Այդ իսկ պատճառով որակյալ իրավաբաններ պատրաստելու համար պետք է հավասարապես ուշադրություն դարձնել նշված բոլոր ասպեկտներին:

- Անհրաժեշտ է վերանայել ու կատարելագործել բուհի իրավաբանական ֆակուլտետ կամ բաժին ընդունվելու համար սահմանված պահանջները, մասնավորապես՝ դիմորդը պարտադիր կերպով պետք է հանձնի քննություն «Հասարակագիտություն» առարկայի իրավագիտության բաղադրիչից՝ դրանով իսկ բուհ ընդունվելուց առաջ ստուգելով նրա իրավական գիտելիքների մակարդակը:

- Ուսումնական պլաններում անհրաժեշտ է մտցնել հատկապես այնպիսի առարկաներ, որոնք կլինեն ոչ թե հերթական կրեդիտ հավաքելու պարտադիր պահանջ, այլ կյանքի տարբեր իրավիճակներում տեսական իրավական գիտելիքների հիման վրա ճիշտ կողմնորոշվելու և համարժեք որոշում կայացնելու հիմք: Այս առումով կարևոր ենք համարում բուհերում կամ ընտրային առարկաների ինստիտուտի ներդրումը, երբ ուսանողին հնարավորություն է տրվում մի քանի դասընթացներից ընտրելու որոշակի թվով առարկաներ, ինչպես ընդունված է արտասահմանյան շատ բուհերում:

- Ուսումնառության արդյունքում իրավաբանի մասնագիտությամբ շրջանավարտը պետք է տիրապետի ու ձեռք բերի որոշակի որակներ, կարողություններ և հմտություններ, որոնք պիտանի են ինչպես այդ, այնպես էլ այլ մասնագիտություններով աշխատելու համար. չէ՞ որ հեղինակավոր համարվելուց զատ՝ իրավաբանի մասնագիտությունը լավ հիմք է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու համար:

- Արցախի Հանրապետության բուհերում դասավանդման սեփական փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է խստացնել հեռա-

կա ուսուցման համակարգով իրավաբանական կրթության իրականացման պահանջները: Բակալավրիատում ուսումնառության այս ձևով ուսանողները սովորում և ավարտում են իրավաբանական բաժինը, ստանում դիպլոմ՝ այդպես էլ չունենալով բավարար իրավական գիտելիքներ, մտածողություն ու հմտություններ տվյալ մասնագիտությամբ աշխատելու համար: Այստեղ մեծ խնդիր է նաև այն, որ շատ հաճախ իրավաբանական բաժնի մագիստրատուրա են ընդունվում ոչ իրավաբանները ու տվյալ մակարդակի գիտելիքներ փոխանցելու և հիմնախնդիրներ քննարկելու փոխարեն դասախոսը ստիպված է լինում բացատրելու, թե ինչ է իրավունքը և պետությունը: Ամփոփելով՝ մեջբերենք Ս.Շախրայի այն ճիշտ դիտարկումը, որ «Չնարավոր չէ հեռավորության վրա իրավաբան դառնալ»⁴¹: Ուստի անհրաժեշտ է աստիճանաբար խստացնել, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վերացնել իրավաբանական բաժնում սովորելու հեռակա ուսուցման ձևը:

Դասախոսների հետևողական կատարելագործումը, դասավանդման մեթոդաբանությունն ու վարձատրությունը

Ինչպես արդարացիորեն նշում է Յու.Օվչիննիկովան՝ «իրավաբանական կրթության մակարդակը պայմանավորված է դասավանդող կադրերի որակով»⁴²: 2017թ. ՌԴ Նիժնի Նովգորոդ քաղաքում կայացած գիտաժողովի ժամանակ մենք կարծիք էինք հայտնել, որ «իրավաբանական կրթության որակի համար շատ կարևոր է դասախոսների պատրաստումը և որակավորման բարձ-

⁴¹ Шахрай С.М. Проблемы качества юридического образования // Интернет-конференция Шахрая Сергея Михайловича // URL: <http://www.garant.ru/action/conference/10208/> - 11.01.2018.

⁴² Овчинникова Ю.В. Актуальность повышения квалификации преподавателей права в направлении развития педагогической составляющей их профессиональной компетентности // Юридическое образование и наука, 2011, № 4, էջ 20-22.

րացումը, որոնք պարբերաբար պետք է զբաղվեն գիտական գործունեությամբ, զեկույցներով հանդես գան գիտաժողովներում, տեղի և արտասահմանյան պարբերականներում հրապարակեն գիտական հոդվածներ: Համալսարաններն իրենց հերթին դասախոսներին և ուսանողներին պետք է ապահովեն նոր գրականությամբ (մենագրություններ, դասագրքեր, ամսագրեր, միջազգային գիտաժողովների ժողովածուներ և այլն)»⁴³: Այստեղ հարկ է նշել մի հանգամանքի մասին, որ «երկրի չճանաչվածությունը որոշ դեպքերում խոչընդոտում է Արցախի և արտասահմանյան բուհերի միջև իրական համագործակցության հաստատմանը»⁴⁴:

Որակյալ կադրեր պատրաստելու համար դասախոսները պետք է մշտապես կատարելագործվեն, որը ենթադրում է հետևյալ բաղադրիչների համալիրը.

- Ցանկալի է, որ բուհերը համադրեն ինչպես գիտական աստիճան, այնպես էլ գործնական մասնագիտական հարուստ փորձ ունեցող դասախոսների կողմից դասավանդելու քաղաքականություն, և խրախուսեն նման մոտեցումը: Հանրահայտ է, որ ուսումնառության ժամանակ բուհի ուսանողները գրում են ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ և մագիստրոսական թեզեր, որոնք հիմնականում իրականացվում են դասախոսի ղեկավարությամբ: Եթե վերջինս, օրինակ, չի տիրապետում կամ ոչ պատշաճ ձևով է տիրապետում գիտական հետազոտություն կատարելու նրբություններին և չունի համապատասխան փորձ, ապա կարող է մտա-

⁴³ Арутюнян А.Г. Проблемы юридического образования в Республике Арцах, Сборник докладов международной научно-практической конференции «Трансформация человеческого потенциала в контексте столетия»/ Под общей редакцией проф. З.Х.Саралиевой: В 2 т. Т 2, Н.Новгород, Изд-во НИСОЦ, 2017, էջ 332.

⁴⁴ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Арутюнян А.Г., Петикян С.Г. Проблемы установления международных связей между вузами Нагорно-Карабахской Республики и Российской Федерации // Специфика профессиональной деятельности социальных работников / Под общей ред. проф. З.Х.Саралиевой, Н.Новгород, изд- во НИСОЦ, 2015, էջ 503-505.

հոգություն առաջանալ նրա ղեկավարությամբ կատարված աշխատանքի որակի և դրա արդյունքում կատարողի ստացած գիտելիքների առնչությամբ:

- Անկախ դասախոսի ունեցած փաստացի գիտելիքներից ու աշխարհայացքից, եթե նա գոնե տարին մեկ անգամ չի մասնակցում արտասահմանյան որևէ լուրջ գիտաժողովի և չի շփվում իր գործընկերների հետ, հաղորդակից չէ գիտության ոլորտում համաշխարհային զարգացումներին կամ գոնե հինգ տարին մեկ անգամ վերապատրաստման դասընթացների չի գործուղվում՝ ուսումնասիրելու արտասահմանյան առաջավոր փորձն ու Արցախի Չանրապետությունում այն ներդնելու եզրերը, ապա նրա մոտ լճացման գործընթաց է առաջանում, ինչն էլ բացասական ազդեցություն կունենա նրա մասնագիտական գործունեության իրականացման վրա:

- Անհրաժեշտ է առաջնորդվել դասախոսների նեղ մասնագիտական ուղղվածությամբ դասավանդման սկզբունքով, որի դեպքում պետք է բացառվի այն ընդունված պրակտիկան, որ, օրինակ, քաղաքացիական իրավունքի մասնագետը դասավանդի քրեական իրավունք կամ պետության և իրավունքի տեսության մասնագետը՝ միջազգային իրավունք կամ էլ՝ հակառակը:

- Առաջարկվում է բուհերում սահմանել կարգ, ըստ որի՝ յուրաքանչյուր հիմնական դասախոս պետք է տարեկան առնվազն 1 հոդված տպագրի ազդեցության գործակից ունեցող արտասահմանյան գիտական հանդեսներում, ինչի համար էլ կսահմանվի պարզևավձար, ինչպես ընդունված է արտասահմանյան շատ բուհերում⁴⁵: Դա նաև մրցակցային դաշտ կստեղծի հենց բուհի ներսում և ամբողջ Չանրապետությունում:

- Որակյալ իրավաբաններ պատրաստելու համար կարևոր նշա-

⁴⁵ Выплата вознаграждений за публикации статей в высокоцитируемых научных журналах - <https://mipt.ru/science/5top100/staff/publications/renumeration.php>, Стимулирование публикаций в зарубежных научных изданиях - <https://urfu.ru/ru/science/stimul-pablik/> - 08.01.2018.

նակություն ունի նաև ժամանակակից մասնագիտական գրականության առկայությունը: Այստեղ խոսքը վերաբերում է ինչպես հայրենական, այնպես էլ՝ արտասահմանյան նոր գրականության ձեռքբերմանը, քանի որ բուհերում շատ հաճախ հանդիպում ենք դասագրքերի կամ այլ օժանդակ նյութերի, որոնք վաղուց սպառել են իրենց արդիականությունն ու կիրառությունը, իսկ նորերը բացակայում են: Դրանից զատ, թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները պետք է հմտորեն օգտվեն ինչպես Արցախի Յանրապետության, այնպես էլ այլ երկրների իրավական տեղեկատվական համակարգերից և ուսանողական նստարանից ուսումնասիրեն ու տիրապետեն երկրի օրենսդրությանը:

21-րդ դարի դասախոսն իրավաբանական կրթության հետ կապված պետք է ունենա նորարար հայացքներ, պետք է դասավանդի նոր մեթոդաբանությամբ: Ակնհայտ է, որ դասավանդման նոր մեթոդների արմատավորումն անհատական կարգով այն անձանց շրջանակում, ովքեր այդ հայացքների, գաղափարների կրողներ չեն, անհնար է: Ուստի, ժամանակակից պայմաններում առաջացել է որակյալ մասնագետների պատրաստման անհրաժեշտություն, ինչը հնարավորություն է ընձեռնում մասնագիտական հիմնարար գիտելիքները մեկտեղել մտածողության պրակտիկ գործելակերպի նորարարության հետ և հետազոտական մոտեցումով լուծելու կոնկրետ խնդիրներ⁴⁶:

Մասնագետների մի մասը գտնում է, որ դասավանդման ակադեմիական մոտեցումից հրաժարվելը կարող է հիմք հանդիսանալ մագիստրանտների և ասպիրանտների թվաքանակի կրճատման համար⁴⁷: Այդուհանդերձ, մենք չենք կարող ամբողջությամբ հա-

⁴⁶ Сергеев И.В. Методика оценки уровня профессиональной подготовки выпускников вуза // Вестник Российской таможенной академии, 2012, № 4, էջ 66-71.

⁴⁷ Наумкина В.В. Двухуровневое юридическое образование и компетентностный подход: вопросы теории // Юридическое образование и наука, 2012, № 4, էջ 13-15.

մածայնել այդ գաղափարին, քանզի այլ մեթոդների կիրառումն էլ ավելի է հեշտացնում ապագայում գիտությամբ զբաղվելու ցանկություն և կարողություն ունեցող ուսանողների բացահայտումը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ նոր մեթոդները կոչված են նպաստելու իրավական մտածողության և իրավական աշխարհայացքի ձևավորմանն ու արմատավորմանը: Այս իմաստով անհրաժեշտ է վերանայել դասախոսների կողմից դասավանդման մեթոդաբանությունը՝ նախապատվությունը տալով ինտերակտիվ մեթոդներին (օր.՝ սլայդների միջոցով):

Վերջում հարկ է նշել, որ իրավաբանական կրթության բնագավառի խնդիրներից է հասարակության մեջ դասախոսի նշանակության և հեղինակության բարձրացումը, որի պատճառներից կարող է համարվել, օրինակ, ցածր աշխատավարձը⁴⁸: Դասախոսի աշխատանքը գրավիչ ու պատվաբեր դարձնելու համար անհրաժեշտ է ինչպես բարձրացնել վերջիններիս աշխատավարձը, այնպես էլ սահմանել լրացուցիչ արտոնություններ (օր.՝ հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու հնարավորություն, որը բացակայում է Արցախի Հանրապետությունում):

Ֆինանսական ապահովության ցածր մակարդակը որոշ դեպքերում հարուցում է կոռուպցիոն ռիսկեր, ինչն էլ իր բացասական հետևանքն է թողնում ապագա իրավաբանի մասնագիտական որակի ու գործելակերպի վրա:

⁴⁸ A. Kenneth Pye, Legal Education in an Era of Change: The Challenge, 1987 Duke Law Journal 191-203 (1987) - <https://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?referer=https://www.google.am/&httpsredir=1&article=2978&context=dlj>; Кондратьева Е.А. Отдельные проблемы качества юридического образования и пути их решения: взгляд преподавателя, Проблемы качества юридического образования в современной России: материалы международной научно-практической конференции, Нижний Новгород, 2011, էջ 84.

Տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ներդաշնակում

Իրավաբանական կրթության հիմնական խնդիրներից է ուսանողների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ներդաշնակության թույլ աստիճանը: Անձնական փորձը ցույց է տալիս, որ ուսումնառության ընթացքում հիմնական շեշտը դրված է տեսական գիտելիքներ փոխանցելու վրա: Ն.Սեմենովան իրավագիտորեն նշում է, որ «իրավաբանական կրթությունը պետք է լինի ոչ միայն տեսական, այլև՝ ուղղված լինի հետագա պրակտիկ գործունեությանը»⁴⁹:

Գործնական հմտությունների և ունակությունների ձևավորման անհրաժեշտությունը բխում է աշխատաշուկայի բավականին խիստ պահանջներից, մասնավորապես՝ մրցունակությունից, մասնագիտական շարժունակությունից և այլն:

Ներկայումս աշխատակիցներից պահանջվում է ոչ միայն իրականացնել գործատուի հրահանգները, այլև զբաղեցնելով այս կամ այն պաշտոնը, առաջարկել նորարար մտքեր՝ աշխատանքն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով: Այս պարագայում կարևորվում է աշխատակցի՝ մասնագիտական տարաբնույթ ունակությունների ու կարողությունների առկայությունը, դրանց հետագա զարգացումը, ինչպես նաև նորերի ձեռքբերումը⁵⁰:

Մեր կարծիքով՝ իրավաբանների արհեստավարժության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է, որ բուհերը

⁴⁹ Семенова Н.С. Пути совершенствования содержания юридического образования // Проблемы качества юридического образования в современной России: материалы международной научно-практической конференции, Нижний Новгород, 2011, էջ 191.

⁵⁰ Ильина Л.А. Формирование профессиональной компетентности как компонента подготовки менеджеров // Устойчивое развитие вуза на основе стратегии повышения качества образовательного процесса: монография / Г.П.Гагаринская, Л.А.Ильина [и др.], Самара, СамГТУ; Минск, БГУИР, 2007, էջ 295.

սերտ համագործակցեն պետական ու մասնավոր հատվածի գործատուների հետ և ապագա իրավաբաններին սովորեցնեն այն նվազագույն կարողություններն ու հմտությունները, որոնք պահանջված են ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ բնագավառներում կիրառելու համար:

Ուսումնառության տարիներին՝ հիմնականում բարձր կուրսերում, ուսանողներն անցնում են ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկա: Ըստ էության, ուսանողներն առավել կայուն գիտելիքներ ձեռք են բերում հենց արտադրական պրակտիկայի շրջանակներում, որտեղ նրանց հնարավորություն է ընձեռնվում իրենց զգալու իրավաբանի կարգավիճակում: Դրա համար անհրաժեշտ է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները սերտ կապ պահպանեն պրակտիկ իրավաբանների հետ, չէ որ նրանց հետ անմիջական շփման արդյունքում է ուսանողների մոտ առավել մեծ հետաքրքրություն առաջանում իրավաբանի մասնագիտության նկատմամբ: Միայն նման ճանապարհով հնարավոր կլինի տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Դրանից զատ՝ տեսական գիտելիքները գործնական հմտություններով ամրապնդելու նպատակով անհրաժեշտ է ուսանողների պրակտիկան սկսել հենց 1-ին կուրսից, ինչի շրջանակներում նրանք հնարավորություն կունենան ծանոթանալու ապագա աշխատանքի բնույթի և աշխատավայրի հետ: Ցանկալի է, որ 1-ին կուրսից սկսած ուսանողների համար կազմակերպվեն այցեր պետական իշխանության մարմիններ (Ազգային ժողով, Կառավարություն, դատախազություն, ոստիկանություն, կենտրոնական ընտրական հանձնաժողով և այլն), որտեղ նրանք կծանոթանան ամեն մի մարմնի գործունեության առանձնահատկություններին, այդ մարմինների որոշ ներկայացուցիչների էլ կարելի է առաջարկել դասախոսությամբ հանդես գալ համալսարաններում: Իսկ 2-րդ կուրսից սկսած՝ կարելի է ուսանողներին տանել դատարան՝ մաս-

նակցելու դատական նիստերին, քրեակատարողական հիմնարկ, որտեղ կծանոթանան ազատագրկման դատապարտվածների պատիժը կրելու պայմաններին, նաև որոշ ժամանակով կմնան խցում, կխոսեն իրավունքը հարգելու, պատժի ենթարկվելու, ապագայի և այլ հարցերի մասին:

Քննարկվող հիմնախնդրի լուծման ամենաարդյունավետ եղանակներից է նաև Արցախի Չանրապետության բոլոր բուհերում իրավաբանական կլինիկաների բացումը: Ժամանակին այս խնդրին մենք նույնպես անդրադարձել էինք⁵¹ և ուրախ ենք, որ Արցախի պետական համալսարանում արդեն գործում է այդպիսի կլինիկա⁵²: Ցանկալի է, որ մյուս համալսարանները ևս հետամուտ լինեն իրավաբանական կլինիկաների ստեղծմանը:

Իրավաբանական կլինիկայի առկայության պարագայում ուսանողներն արդեն իսկ առաջին կուրսից կարող են ներգրավվել իրավաբանական խնդիրների լուծմանը: Սկզբում դասախոսների ու պրակտիկ մասնագետների, իսկ այնուհետև՝ նաև ինքնուրույն, ուսանողները կկարողանան լիարժեք կիրառել տեսական գիտելիքները կյանքում, հասկանալ՝ արդյո՞ք պատրաստ են իրենց վրա վերցնելու այդ պատասխանատու մասնագիտությունից բխող պարտավորությունները:

Ներկայումս իրավաբան ուսանողը քննություն է հանձնում թեստային համակարգով, որը խանգարում է նրան ձեռք բերել իրավաբանին յուրահատուկ խոսքի և մտքի ձկունություն: Թեստերը նպաստում են ուսանողի կողմից տեսական գիտելիքների մեխա-

⁵¹ Арутюнян А.Г. Проблемы юридического образования в Республике Арцах, Сборник докладов международной научно-практической конференции «Трансформация человеческого потенциала в контексте столетия»/ Под общей редакцией проф. З.Х.Саралиевой: В 2 т. Т 2, Н.Новгород, Изд-во НИСОЦ, 2017, էջ 331-333.

⁵² Տեղի ունեցավ ԱրՊՅ իրավաբանական կլինիկայի բացման արարողությունը - http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=1141&Itemid=1&lang=am - 06.11.2017.

նիկորեն անգիր անելուն, և խոչընդոտում են մատուցվող նյութի բուն էության ու բովանդակության ընկալումը: Իսկ մոտեցումը պետք է լինի այնպիսին, որ ուսանողի մոտ զարգանա բանավոր խոսքը և ոչ կաղապարված մտածելակերպը: Այս համատեքստում անհրաժեշտ է վերանայել գիտելիքների գնահատման ներկայիս համակարգը և նախապատվությունը տալ ուսանողի կողմից ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելուն ու ստեղծարար մտածելակերպը զարգացնելուն:

Այս իմաստով կարևոր ենք համարում նաև վերանայել կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության մոտեցումը՝ նախապատվությունը տալով Արցախի իրավական հիմնախնդիրներին վերաբերող արդիական թեմաներին, ինչպես նաև ուսանողներին ու մագիստրանտներին ևս իրավունք պետք է տրվի անհրաժեշտության դեպքում առաջարկելու իրենց թեմաները: Դրան զուգահեռ, պետք է ցուցաբերել հետևողական վերաբերմունք, որ նույն բովանդակությամբ 3 տարուց վաղ աշխատանք չկատարվեն և բացառվեն գրագողության դեպքերը:

Իրավաբանական կրթության որակի բարձրացման և ուսանողների կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է կազմակերպել իրավունքի թեմայով ուսանողական օլիմպիադաներ, մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, ինչպես նաև իրավունքի տարբեր ճյուղերին առնչվող դատախաղեր և բանավեճեր: Անձնական փորձից ելնելով՝ վստահաբար կարող ենք ասել, որ բավականին արդյունավետ է իրավաբան և ոչ իրավաբան մասնագիտությամբ ուսանողների և մագիստրանտների համար իրավագիտակցության բարձրացմանն ուղղված ուսուցողական դասընթացների (թրեյնինգների) կազմակերպումը⁵³, որը կարելի է իրականացնել

⁵³ Ստեփանակերտում մեկնարկել է երիտասարդների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված քառօրյա դասընթացը, <http://aegmm.org/archives/639> - 24.03.2016:

ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելով:

Որպես նորարարություն՝ առաջարկվում է բուհերում ստեղծել ուսանողի իրավունքների պաշտպանի ինստիտուտ, որը կօգնի ուսանողին վերականգնելու բուհի և այլ կառույցների կողմից խախտված իրավունքները: Որպես տարբերակ՝ ուսանողի իրավունքների պաշտպան կարող է ընտրվել բարձր միավորներ ունեցող և ակտիվություն ցուցաբերող իրավաբան ուսանողը:

Իրավաբանի մասնագիտական օրվա նշում

Արցախի Հանրապետությունում քաղաքացիների մի որոշ մասը մասնագիտությամբ իրավաբան է: Նրանք աշխատում են ինչպես պետական (իրավապահ և այլ մարմիններում), այնպես էլ՝ մասնավոր հատվածում: Չնայած դրան՝ Հայկական երկու Հանրապետությունների տոնացույցներում չկա իրավաբանի օր: Որպես օրինակ՝ նշենք, որ Ռուսաստանում իրավաբանի օրը նշվում է դեկտեմբերի 3-ին, Բելառուսում՝ դեկտեմբերի առաջին կիրակի օրը, Ղրղզստանում՝ հունիսի վերջին կիրակի օրը, Մոլդովայում՝ հոկտեմբերի 19-ին, Ուկրաինայում՝ հոկտեմբերի 8-ին և այլն:

Ի դեպ, Արցախի Հանրապետությունում իրավաբանի մասնագիտություն ունեցող առանձին կատեգորիայի որոշ աշխատողներ ունեն իրենց մասնագիտական օրը: Այսպես՝ դատական համակարգի աշխատողի օրը նշվում է հունվարի 20-ին, դատախազության աշխատողներինը՝ նոյեմբերի 26-ին, իսկ ոստիկանության ծառայողի մասնագիտական օրը՝ նոյեմբերի 30-ին⁵⁴:

Քանի որ ոչ բոլոր իրավաբաններն են աշխատում վերը նշված

⁵⁴ Ազգային անվտանգության, փրկարար և դատական ակտերի հարկադիր ծառայությունները, որտեղ ևս աշխատում են իրավաբաններ, ունեն իրենց մասնագիտական օրը՝ համապատասխանաբար դեկտեմբերի 20-ը, սեպտեմբերի 4-ը և սեպտեմբերի 10-ը:

մարմիններում և, հաշվի առնելով հասարակությունում ու պետության կյանքում իրավաբանի մասնագիտությունը կարևորելու և գնահատելու անհրաժեշտությունը, առաջարկվում է Արցախի Չանրապետության տոնացույցում մտցնել իրավաբանի օր և այն նշել մայիսի 13-ին: Օրը պատահական չէ ընտրված. 488թ. մարտի ամսի 13-ին, որը, Ռ.Չամբարձումյանի «Չայկական տոմար» աշխատության համաձայն, համապատասխանում է ներկայիս տոմարով մայիսի 20-ին (մարտի ամիսը սկսվում է մայիսի 8-ին և ավարտվում՝ հունիսի 6-ին), Մեծ Չայքի Արցախ նահանգի Աղվեն կոչվող տեղամասում Վաչագան Բարեպաշտի կողմից հրավիրված ժողովի ընթացքում ընդունվել է հայ իրականության մեջ առաջին սահմանադրությունը՝ «Սահմանադրություն կանոնականը», որն իր ընդունման ձևաչափով ու մինչ օրս պահպանող արժեքով գտնվում է գիտնականների ուշադրության կենտրոնում:

Արցախի Չանրապետությունում իրավաբանի մասնագիտական օրը մայիսի 20-ին նշելը և այն հանրահռչակելը կարող է ունենալ նաև այն ենթատեքստը, որ 1530 տարի առաջ հենց Արցախի տարածքում է ընդունվել ժամանակակից սահմանադրությունների փիլիսոփայությանը մոտ իրավական փաստաթուղթը:

§ 3. Երիտասարդների իրավական ակտիվությունը որպես իրավագիտակցության ձևավորման կարևոր նախադրյալ

Արցախի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական ու իրավական պետության կառուցումն անհնար է առանց ակտիվ քաղաքացիների, մասնավորապես՝ առանց ակտիվ երիտասարդների: Մեր հասարակությունն ունի նախաձեռնող, իրենց իրավունքներն ակտիվ իրականացնող և պարտականությունները կատարող երիտասարդների կարիք:

Անհատի ակտիվությունը (լատիներեն «activus»՝ ակտիվ) մարդու ակտիվ վերաբերմունքն է կյանքին, որն արտահայտվում է մարդու ստեղծագործ գործունեության, կամային գործողությունների, շփումների մեջ:

Անհատի իրավական ակտիվությունը համակարգային անհատական որակ է, որում արտացոլվում է անհատի՝ հասարակության, իրավական համակարգի հետ փոխկապակցվածության խորությունն ու ամբողջականությունը, անհատի՝ իրավունքի սուբյեկտի վերածվելու կարողությունը:

«Երիտասարդների իրավական ակտիվություն» հասկացությունն իրավաբանական գիտության մեջ նորություն չէ, բայց կայնապես՝ քիչ է հետազոտված: Մինչ օրս չկա միասնական մոտեցում այս հասկացության նկատմամբ, բայց չէ որ հենց ակտիվ երիտասարդն է հանդիսանում քաղաքացիական հասարակության, իրավական պետության կառուցման և արդյունավետ գործունեության հենասյունը:

Իրավական ակտիվության բնույթի և սոցիալական ուղղվածության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ ձևավորվել է երկու մոտեցում: Առաջին մոտեցման կողմնակիցները (Ի.Պոկրովսկի, Ս.Կոժեվնիկով, Ն.Մատուզով և այլք) իրավական

ակտիվությունը մեկնաբանում են որպես սուբյեկտի՝ դրական, իրավաչափ, հասարակայնորեն օգտակար և պետության ու հասարակության կողմից հաստատված գործունեությունն իրավական ոլորտում⁵⁵: Երկրորդ մոտեցման համաձայն՝ իրավական ակտիվությունը կարող է լինել նաև բացասական, հակաիրավական (Մ.Օրզիկ⁵⁶, Յու.Օբորոտով⁵⁷, Վ.Ջատոնսկի⁵⁸): Մ.Օրզիկը, մասնավորապես, հավաստիացնում է, որ «իրավական ակտիվությունն իր մեջ ներառում է ոչ միայն իրավունքի պահանջների կենսագործմանն ուղղված գործողություններ, այլև՝ օրենքին չհամապատասխանող գործունեություն»⁵⁹:

Այսպիսով, ներկայումս «իրավական ակտիվություն» հասկացությունը դիտարկվում է երկու տեսանկյունից՝ որպես իրավաչափ վարքագծի ձև և տեսակ: Որպես իրավաչափ վարքագծի ձև իրավական ակտիվությունն «օգտագործում» հասկացության հոմանիշն է, իսկ որպես տեսակ՝ օգտագործման բովանդակությունն է՝ որպես իրավունքի կենսագործման ձև⁶⁰:

Իրավական ակտիվության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ծագում է իրավունքի դրական ազդեցության հիման վրա, և ուղղված է նրա անհատական և ստեղծագործ իրա-

⁵⁵ Покровский И.Ф. О правовой активности личности и формировании ее правосознания // Вестник, 1971, №17, էջ 143-147; Кожевников С.Н. Правовая активность: Понятие и сущность// Правоведение, 1979, №4, էջ 33-39; Матузов Н.И. Правовая система и личность, Саратов, 1986, էջ 6.

⁵⁶ Орзих М.Ф. Личность и право, М., 1975, էջ 26.

⁵⁷ Оборотов Ю.Н. Основные вопросы теории правовой активности личности социалистического общества: автореф. дис. ... канд. юр. наук, Киев, 1979, էջ 51.

⁵⁸ Затонский В.А. Сильное государство и активная личность: теоретико-правовой аспект, Саратов, 2005, էջ 216.

⁵⁹ Орзих М.Ф. Личность и право, М., 1975, էջ 26.

⁶⁰ Горовенко В.В. Методология правовой активности: К постановке проблемы, Юридическая наука и правоохранительная практика, 1 (19), 2012, էջ 12.

գործմանը: Չենց իրավական ակտիվության մեջ է արտահայտվում քաղաքացիական հասուն գիտակցությունը, իրավագիտակցության բարձր մակարդակը⁶¹:

Իրավական ակտիվությունն անհրաժեշտ է դիտարկել որպես երիտասարդների՝ իրավունքի ոլորտում ինտեսիվ գործունեություն, որն իր մեջ համակցում է ինչպես դրական (պետության և հասարակության կողմից ընդունված), այնպես էլ՝ բացասական (պետության և հասարակության կողմից բացասաբար ընկալվող) գործոններ:

Երիտասարդների իրավական ակտիվությունն առանձնանում է մի շարք հատկանիշներով.

1. երիտասարդների իրավական ակտիվությունն արտահայտվում է գործողություններով, այսինքն՝ ակտիվության էությունը կայանում է հենց գործողության, մարդու ակտիվ վարքագծի մեջ,

2. գործողություններն իրականացվում են ազատ անձանց կողմից: Ազատությունն այս պարագայում դիտարկվում է որպես «այն բանի երաշխիք, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է անել ինչ-որ բան առանց ուրիշների միջամտության՝ վերջիններիս կողմից արգելելու կամ հարկադրվելու»⁶²,

3. այս գործողությունները տեղի են ունենում իրավունքի ոլորտում, ուստի՝ կարող են կրել ինչպես իրավաչափ, այնպես էլ՝ հակաիրավական բնույթ: Չակաիրավական վարքագիծը ևս իրավական վարքագիծ է (բայց ոչ իրավաչափ), ուստի՝ հակաիրավական բնույթը նրա բաղադրիչներից է,

4. իրավական ակտիվությունն արտահայտում է անհատի՝ իրավունքի հետ հարաբերակցվելու հոգեբանական պատրաստվածությունը, ինչի շրջանակներում յուրաքանչյուրի մոտ պետք է առկա

⁶¹ Мечетина Т.А., Рыбаков В.А. О понятии и содержании социально - правовой и гражданско-правовой активности, էջ 97.

⁶² Арон Р. Эссе о свободах / пер. с фр. Н.А. Руткевич, М., 2005, էջ 162.

լինի իրավունքի բարձր նշանակության վերաբերյալ կայուն համոզմունք,

5. իրավական ակտիվությունն իր կենսագործունեության ողջ ընթացքում որպես ուղենիշ պիտի դիտարկի համամարդկային արժեքները և գործի ի շահ նրա սուբյեկտների: Իրավական ակտիվությունն անհնար է առանց սուբյեկտների. իրավական ակտիվությունը հնարավոր է այնտեղ, որտեղ առկա է անհատը և անհրաժեշտ պայմաններ:

Երիտասարդների իրավական ակտիվությունը դիտարկելով որպես երիտասարդների՝ պետության և հասարակության կողմից ինչպես դրական, այնպես էլ բացասական ընկալվող գործունեություն (կախված իրավական հետևանքներից)՝ անհրաժեշտ է առանձնացնել իրավական ակտիվության դրական և բացասական տեսակները:

Երիտասարդների դրական իրավական ակտիվությունն իրավունքի՝ առանց նրա խորն ու համակողմանի գիտակցման ենթակայությունը չէ, այլ՝ իրավունքի սուբյեկտի գիտակցական, նախաձեռնողական, իրավաչափ գործունեությունն է, որն ուղղված է իրավունքների արդյունավետ օգտագործմանը, պարտականությունների կատարմանը, օրենքով պաշտպանվող պետական, հասարակական և այլ անձնական շահերի կենսագործմանը:

Երիտասարդների իրավական ակտիվության ցուցանիշներից են նախաձեռնողականությունը, նպատակաուղղվածությունը, կազմակերպվածությունը, գործունեության արդյունավետությունը, ուժեղ, կայուն, այլ ոչ թե իրավիճակային ձգտումը՝ ազդելու սոցիալական գործընթացների ու հասարակական երևույթների վրա:

Երիտասարդների իրավական ակտիվությունը բարդ երևույթ է, որի բոլոր տարրերը սերտ փոխկապցված են և ձևավորում են մի ամբողջական միասնություն: Երիտասարդների իրավական ակտիվության տարրերից համակարգաստեղծ են հանդիսանում իրավական գիտելիքները (իրավական իրազեկվածություն), իրա-

վունքի նկատմամբ վերաբերմունքը (գնահատականներ, համոզմունքներ), իրավակարգավորումները և իրավական վարքագիծը:

Մարդու պահանջմունքների, շահերի, արժեքների վրա հիմնվում է իրավունքի ոլորտում նրա վարքագիծը, իսկ տեղեկատվական ու գնահատողական հատկանիշների հիման վրա կանխորոշվում է իրավագիտակցության կամային հատկանիշը:

Իրավագիտակցությունը սերտ փոխկապակցված է իրավական ակտիվության հետ: Իրավագիտակցությունն իրավական նորմերի կենսագործմանն ուղղված անհատի լիակատար ներքին պատրաստվածության աղբյուրն է⁶³:

Երիտասարդների իրավական ակտիվությունն իրավագիտակցության բարձր մակարդակի արդյունքն է, ինչի պատճառով մի շարք մասնագետներ այն դիտարկում են որպես երևույթ, որն «անցնում է օրենքի սովորական պահանջը»⁶⁴:

Երիտասարդների իրավական ակտիվությունն անհրաժեշտ է դիտարկել որպես կրթական, ինչպես նաև նրանց բարոյական հասունացման հետ կապված իրավահարաբերությունների ուսուցման բնագավառում իրավաչափ վարքագծի և գործունեության որոշակի մակարդակ:

Երիտասարդների իրավական ակտիվությունն արտահայտվում է իրավունքի բնագավառում պետության և հասարակության կողմից ընդունված դրական գործունեության մեջ: Դա, նախևառաջ, երիտասարդների նախաձեռնողական վարքագիծն է, ինչը պայմանավորված է նրանց իրավագիտակցության բարձր մակարդակով, իրավական համոզվածությամբ:

Երիտասարդների իրավական ակտիվության ձևավորման հե-

⁶³ Тепляшин И.В. Становление российской правовой государственности и правовая активность граждан // Журнал российского права, 2002, № 1, էջ 26-27.

⁶⁴ Современный воспитательный процесс: состояние и проблемы. Материалы круглого стола // Социологические исследования, 2005, № 4.

նասյունը իրավունքի բնագավառում ճանաչողական ակտիվությունն է: Վերջինս բխում է երիտասարդների «իրավական շահերից» և ստացված գիտելիքներից⁶⁵: Երիտասարդների ճանաչողական ակտիվությունը երիտասարդների իրավագիտակցության ձևավորման կարևորագույն նախադրյալներից է: Բայց ինչպիսի միջոցներ պիտի ձեռնարկվեն, որպեսզի երիտասարդների վարքագիծը լինի ոչ միայն իրավաչափ, այլև՝ ակտիվ: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել իրավունքի ճանաչման ներքին պահանջմունքների համակարգի և ակտիվ իրավական վարքագծի ձևավորման վրա:

Իրավունքի՝ որպես սոցիալական արժեքի գիտակցված պահանջարկը, դրսևորվում է որպես սուբյեկտիվ վիճակ, որը կարգավորում է երիտասարդների վարքագիծը, կանխորոշում է մտածելու ու կամքի ուղղությունը:

Պահանջարկը երիտասարդների վարքագծի սկզբնաղբյուրն է, ինչի պատճառով էլ այն ոչ միայն նախորդում է շահին, այլև՝ առաջացնում է այն, քանզի առանց պահանջարկի՝ շահ չի կարող առաջանալ, և հենց պահանջարկն է հիմնավորում շահի բովանդակությունը:

Շահը դիտարկվում է որպես «երիտասարդների գործունեության օբյեկտիվ հիմնավորվածության միասնություն և դրա արտացոլումը ձգտումներում ու արարքներում»⁶⁶:

Երիտասարդների իրավական ակտիվությունն իրավունքի ոլորտում նրանց կամավոր ստեղծագործ գործունեությունն է⁶⁷: Երիտասարդների իրավական ակտիվության համար հիմք կարող է

⁶⁵ Шукина Г.И. Активизация познавательной деятельности учащихся в учебном процессе, М., Просвещение, 1979.

⁶⁶ Покровский И.Ф. Формирование правосознания личности, Л., 1972.

⁶⁷ Батурин Ф.А Социальная активность трудящихся: сущность и управление, Новосибирск, Наука, 1986, էջ 64; Чефранов В.А. Правовое сознание как разновидность социального отражения, Киев, 1986, էջ 202.

հանդիսանալ իրավունքի արժեքի, սուբյեկտի օրինական շահերի պաշտպանության արդյունավետության՝ նրանց ներքին համոզմունքը:

Երիտասարդների իրավական ակտիվությունը նրանց իրավագիտակցության բարձր մակարդակի հետևանք է, ուստի՝ այն կարելի է դիտարկել որպես պրակտիկ գործունեության երիտասարդների պատրաստվածություն (օրինակ՝ սեփական շահերի պաշտպանությունը, սեփական կարծիքի արտահայտում, որը հաշվի է առնվում իրավակիրառ սուբյեկտի կողմից իրավական խնդիրների առաջացման դեպքում), որի արդյունքը իրավական փորձառությունն է⁶⁸: Ընդ որում, երիտասարդներն իրավական փորձառությունը ձեռք են բերում կրթական գործընթացի արդյունքում, ինչպես նաև տարաբնույթ իրավահարաբերությունների մասնակցելով:

Երիտասարդների իրավական ակտիվությունը դրսևորվում է նրանց գործունեության մեջ, դրանով իսկ դառնալով նրանց իրավական մշակույթի անքակտելի բաղադրիչը: Երիտասարդների իրավական ակտիվության սահմանները կանխորոշված են նրանց իրավասուբյեկտության սահմաններով:

Երիտասարդների գործունեության տիրապետող տեսակը իրավական բնույթ կրող կրթական գործունեությունն է, ինչն էլ համարվում է իրավական գործունեության տարատեսակ:

Իրավական գործունեությունը, իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումների համաձայն, «սուբյեկտիվ կազմով իրավաբանական գործունեությունից լայն է՝ ընդգրկելով ինչպես պետական իշխանություն իրականացնող սուբյեկտների, այնպես էլ ֆիզիկական անձանց գործողությունները», որոնց շարքին կա-

⁶⁸ Сабиненов С.И. О правовой активности личности при социализме // Актуальные проблемы теории социалистического государства и права, М., 1974.

րելի է դասել երիտասարդներին՝ որպես կրթական հարաբերությունների սուբյեկտ⁶⁹:

Երիտասարդները մասնակցում են իրավաբանական նշանակություն ունեցող տարաբնույթ գործունեությունների՝ դառնալով ընտանեկան, քաղաքացիական, վարչական, աշխատանքային և այլ իրավահարաբերությունների մասնակիցներ⁷⁰:

Երիտասարդների իրավական ակտիվության տարատեսակ է հանդիսանում տեղեկատվական-իրավական գործունեությունը, որին ակտիվ մասնակցում են երիտասարդները⁷¹:

Երիտասարդների իրավական ակտիվությունը սերտ կապված է իրավագիտակցության հետ, ինչն արտահայտվում է երիտասարդների կողմից սեփական վարքագիծը ծրագրավորելու գիտակցված հնարավորությամբ, ինչն էլ հիմք է հանդիսանում կայուն վարքագծի ձևավորման համար և սեփական վարքագիծը կառավարելու հնարավորություն է ընձեռնում:

Երիտասարդների իրավական վարքագիծը կարելի է դիտարկել որպես սուբյեկտի՝ իրավունքի նորմերի պահանջների գիտակց-

⁶⁹ Шагиев Б.В. Юридическая деятельность в современном российском обществе (теоретико-правовой аспект), М., 2002; Шагиева Р.В. Правовая деятельность и ее разновидности в современном российском обществе // Журнал российского права, 2004, №10, էջ 88-97; Петрова Л.В. О естественном и позитивном праве // Государство и право, 1995, №2, էջ 36; Вершинин А.П. Соотношение категорий «правовое поведение» и «правовая деятельность» // Юридическая деятельность: сущность, структура, виды, Ярославль, 1989, էջ 37-42.

⁷⁰ Իրավաբանական գրականության մեջ առանձնանում են իրավական գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են, նյութաիրավական, դատավարաիրավական, միջազգային-իրավական, հանրային-իրավական, մասնավոր իրավական. մասնավորապես՝ Шагиева Р.В. Правовая деятельность и ее разновидности в современном российском обществе // Журнал российского права, 2004, №10, էջ 93; Фаткуллин Ф.Н. Проблемы общей теории социалистической правовой надстройки, Казань, 1980, էջ 85-86:

⁷¹ Морозов А.В. Система правовой информатизации Минюста России, М., 1999.

ված կատարմանն ուղղված գործունեություն: Իրավունքի նորմը երիտասարդների վարքագծի արտաքին կարգավորիչներից է: Կամային ակտիվություն առաջացնելու համար այդ նորմը պետք է արտացոլվի նրա գիտակցության մեջ, վերածվի երիտասարդների կողմից իրենց գործողությունները գնահատելու ներքին չափանիշի, և հետո միայն արտահայտվի իրավական գործողություններում: Սեփական պահանջմունքները գիտակցելու, շահերը, նպատակները կոնկրետացնելու միջոցով երիտասարդներն իրենց գիտակցության մեջ նախանշում են ցանկալի և պարտադիր ապագա վարքագծի մոդելը: Այդ ծրագիր-մոդելները կարևոր նշանակություն ունեն ապագա վարքագծի համար:

Երիտասարդների իրավական ակտիվությունը վերջիններիս իրավական վարքագծի հատկանիշներից է, որը համապատասխանում է իրավունքի ոգուն և իմաստին, դիտարկվում է որպես իրավագիտակցության ձևավորման կարևորագույն նախադրյալ՝ հնարավորություն ընձեռելով ոչ միայն յուրացնելու իրավական տեղեկատվությունը, այլև՝ իրացնելու այն իրական կյանքում:

Ներկայումս օրենսդրության մեջ ամրագրված հավասարության, ժողովրդավարության, ընտրության ազատության սկզբունքները, որոնց իրացման շրջանակներում արտահայտվում է երիտասարդների իրավական ակտիվությունը, ցավոք սրտի, ոչ միշտ են կյանքի կոչվում վերջիններիս կողմից: Այս հանգամանքը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից ամենակարևորն այն է, որ այս պահի դրությամբ բացակայում է երիտասարդական միասնական պետական քաղաքականությունը, որի առաջնահերթ նպատակը պիտի լինի երիտասարդների ակտիվության, մասնավորապես՝ իրավական ակտիվության խթանումը: Մեր կարծիքով՝ առկա է համապատասխան օրենսդրական ակտերի ընդունման անհրաժեշտություն, ինչի շրջանակներում օրենսդրական ամրագրում կստանան այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «երիտասարդ», «իրավական ակտիվություն» հասկացություններ:

րը, հստակ իրավակարգավորում կստանան երիտասարդների հետ կապված հարաբերությունները, կամրագրվի երիտասարդների իրավական վիճակը (խոսքը, նախնառաջ, «Երիտասարդության մասին» օրենքի ընդունման անհրաժեշտության մասին է):

Օրենսդրության կատարելագործման առաջնային ուղղություններից պետք է լինի այնպիսի նորմերի մշակումը, որոնք ունակ կլինեն խթանելու երիտասարդների իրավական ակտիվությունը: Անհրաժեշտ է մշակել և կյանքի կոչել երիտասարդների իրավական ակտիվությունը խթանող համապատասխան հայեցակարգեր, ծրագրեր: Այս պարագայում, կարճ ժամկետում հաջողության հասնելու համար առավել նպատակահարմար է առկա հիմնախնդրի լուծման հնարավոր լուծումները վերածել «պիլոտային» ծրագրերի, փորձարկել դրանք Արցախի Յանրապետության քաղաքային և գյուղական համայնքներում, իրականացնել մշտադիտարկում, հետազոտել ծրագրի արդյունքները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ծրագրի մշակման ընթացքում չհաշվարկված երևույթների, այնուհետև առավել արդյունավետ ծրագիրը վերածել պետական քաղաքականության:

Ցավալի է, բայց այնպես՝ փաստ, որ ներկայումս երիտասարդությունը մեզանում բաժանվում է երկու խմբի՝ ակտիվ և պասիվ: Պասիվ երիտասարդությանն ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է շահագրգռել նրանց: Այս պարագայում որպես սկզբնական օղակ պետք է դիտարկվեն հանրակրթական ուսումնական հաստատությունները, այնուհետև՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Յանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսումնական տարվա ամբողջ ընթացքում պետք է կազմակերպվեն աշակերտների և ուսանողների ակտիվությունը խթանող միջոցառումներ, մասնավորապես, բրեյն-ռինգեր, օլիմպիադաներ, կլոր սեղաններ, տարաբնույթ թեմաներով ընթերցումներ: Երիտասարդներին ակտի-

վացնելու նպատակով կարելի է նրանց տալ համապատասխան միավորներ (օր.՝ բուհերում կան ակտիվության համար գնահատելու հնարավորություն), հիմնել պարգևատրման ֆոնդ, կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ: Չաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս թե՛ աշակերտները, թե՛ ուսանողներն օրվա ընթացքում նվազագույն երկու ժամ օգտվում են համացանցից, նպատակահարմար է ակտիվությունը դրսևորելու հարթակ ստեղծել նաև համացանցում: Կարելի է օգտագործել հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կայքէջերը, տարբեր առաջադրանքներ տեղադրել կայքէջերում, կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ և այլն:

Ինչ վերաբերում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա նրանք ևս պիտի շահագրգռված լինեն երիտասարդների իրավական ակտիվությամբ, չէ՛ որ երիտասարդներն են նախանշում և իրականացնում պետության քաղաքականությունը: Ընդ որում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների և իրավասությունների շրջանակներում պետք է իրականացնեն ինչպես ամբողջ պետության, այնպես էլ՝ իրենց համակարգում աշխատող երիտասարդների իրավական ակտիվությունը խթանող միջոցառումներ՝ հնարավորություն ընձեռնելով երիտասարդներին իրենց ստեղծագործ մտածելակերպով առաջադրելու ինչպես պետության, այնպես էլ համակարգի առջև դրված խնդիրների լուծումներ:

Այսպիսով՝ երիտասարդների իրավական ակտիվությունը երիտասարդների իրավաչափ, հասարակայնորեն օգտակար և պետության ու հասարակության կողմից հաստատված գործունեությունն է իրավական ոլորտում:

Երիտասարդների իրավական ակտիվությունն Արցախի Չանրապետության՝ որպես ժողովրդավարական ու իրավական պետության կառուցման և գործունեության անհրաժեշտ պայմաններից է:

Երիտասարդների իրավական ակտիվությունն իրավագիտակցության բարձր մակարդակի արդյունքն է, ինչն արտահայտվում է երիտասարդների կողմից սեփական վարքագիծը ծրագրավորելու գիտակցված հնարավորությամբ, ինչն էլ հիմք է հանդիսանում կայուն վարքագծի ձևավորման համար և սեփական վարքագիծը կառավարելու հնարավորություն է ընձեռնում:

§ 4. Իրավական ժխտողականության հիմնախնդիրն ու դրա հաղթահարման ուղիներն Արցախի Հանրապետության երիտասարդության շրջանում

Մեր օրերում կարելի է հանդիպել այնպիսի իրավիճակների, երբ օրենքները բացահայտ կերպով արհամարհվում են, խախտվում, չեն իրացվում, այսինքն՝ դրանք չեն գնահատվում և չեն հարգվում: Նման երևույթը կարելի է բնութագրել որպես անձի իրավական արժեհամակարգի կամ իրավագիտակցության ձևախեղում:

Իրավագիտակցության ձևախեղումը սոցիալական երևույթ է, որը բնութագրվում է նրա վիճակի փոփոխմամբ և որի դեպքում դրա կրողների մոտ ձևավորվում են որոշակի գաղափարներ, պատկերացումներ, հայացքներ, գիտելիքներ, զգացմունքներ, տրամադրություններ, ապրումներ և էմոցիաներ, որոնք աղավաղված ձևով արտացոլում են իրավաբանական իրականությունը և արտահայտում են բացասական վերաբերմունք՝ գործող իրավունքի, օրինականության և իրավակարգի նկատմամբ⁷²:

Ռ.Պետրովն առանձնացնում է իրավագիտակցության ձևախեղման հետևյալ տարածված ձևերը.

1. իրավական ինֆանտիլիզմ,
2. իրավական նիհիլիզմ (ժխտողականություն),
3. իրավական ֆետիշիզմ,
4. այլակերպված իրավագիտակցություն⁷³:

Կարծում ենք՝ այս շարքում որպես առանձին տեսակ կարելի է ավելացնել նաև իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող, իրավական ակտերի բացերին տիրապետող ու այդ բացերից օգտվող անձանց:

⁷² Петров В.Р. Деформация правосознания граждан России. Проблемы теории и практики, Н.Новгород, 2000, էջ 29.

⁷³ Նույն տեղում, էջ 44:

Սույն ենթագլխում մենք կանդրադառնանք միայն իրավական ժխտողականության հիմնախնդրին ու դրա հաղթահարման ուղիներին: Այսպես, «նիհիլիզմ» կամ «ժխտողականություն» տերմինն առաջացել է լատիներեն «nihil» բառից, որը թարգմանաբար նշանակում է «ոչինչ»:

Ակադեմիկոս Վ.Ներսեսյանցի կարծիքով՝ իրավական նիհիլիզմն իրավական մշակույթին հակընդդեմ (անտիպոդ) է՝ իր բազմաթիվ դրսևորումներով ու ձևերով, իրավունքը թերագնահատելուց և դրա նկատմամբ անհարգալից վերաբերմունքից մինչև իրավունքի լիակատար անտեսումն ու բացառումը: Իրավական նիհիլիզմը միշտ էլ պետական նիհիլիզմ է, քանի որ իրավունքի բացառումն իր մեջ, ըստ էության, ներառում է նաև պետության՝ որպես հանրային իշխանության իրավական կազմակերպության, բացառումը⁷⁴: Բերելով Ռուսաստանի օրինակը, նա նշում է, որ իրավական նիհիլիզմը լայն տարածում է գտել շատ երկրներում: Այն խոր արմատներ է նետել նաև ռուսական իրականության պայմաններում: Որպես իրավական նիհիլիզմի պատճառ նա տեսնում է բռնակալ կառավարիչների անսահմանափակ իշխանությունը և ժողովրդի իրավազրկության բազմադարյան ավանդույթները:

Իրավական ժխտողականությունը սոցիալական ժխտողականության տարատեսակներից է: Նրա էությունը, բացասական-բացառական է, արտահայտվում է իրավունքի, օրենքի, նորմատիվ կարգի նկատմամբ անհարգալից վերաբերմունքով, իսկ արմատական պատճառների տեսանկյունից՝ բնակչության մեծամասնության իրավաբանական անտեղյակությամբ, լճացմամբ, հետամնացությամբ, իրավական անդաստիարակությամբ: Նմանատիպ հակաիրավական դրույթներն ու կարծրատիպերը «հասարակական գիտակցության ու ազգային հոգեբանության տարր,

⁷⁴ Ներսեսյանց Վ. Իրավունքի և պետության տեսություն, Եր., Նաիրի, 2001, էջ 97:

բնորոշ գիծ, նաև մշակույթի, ավանդույթների, կենսակերպի առանձնահատուկ գծեր են⁷⁵:

Իրավական ժխտողականությունը սոցիալական երևույթ է, որին բնորոշ է անհատի խեղաթյուրված իրավագիտակցությունը, ինչն արտահայտվում է իրավունքի՝ որպես սոցիալական արժեքի հերքմամբ, նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունքով, արդարադատության և օրինականության նկատմամբ բացասական վերաբերմունքով, իրավական պահանջների և արգելքների խախտմամբ, ինչի արդյունքում վնաս է պատճառվում առանձին անհատների, հասարակությանը և պետությանը: Այս պարագայում իրավական ժխտողականությունը նշանակում է ոչ միայն հասարակության մեջ առկա իրավական համակարգի հերքում, իրավունքի, պետական իշխանության մարմինների, իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ անհարգալից վերաբերմունք, այլև՝ իրավունքի՝ սոցիալական երևույթի ժխտում:

Ըստ պրոֆեսոր Վ.Թումանովի՝ «իրավունքի նկատմամբ նիհիլիստական վերաբերմունքի հիմնական աղբյուրներն են՝ երկրի սոցիալ-տնտեսական վատթարագույն վիճակը, օրենքների չիմացությունը, իրավական ակտերի հռչակագրային, թղթային բնույթը, պետական ապարատի կոռուպցիան, օրենսդրության անկատարությունը, նրանում եղած հակասություններն ու բացերը, ոչ իրական արդարադատությունը, իրավապահ մարմինների հեղինակազրկումը և այլն: Այս բոլորը հող են պատրաստում հասարակությունում իրավական նիհիլիզմի ձևավորման ու զարգացման համար»⁷⁶:

Պրոֆեսոր Վ.Թումանովը խոսում է նիհիլիզմի պասիվ և ակտիվ ձևերի մասին: Պասիվ ձևին բնութագրական է անտարբեր վերա-

⁷⁵ Туманов В.А. О правовом нигилизме // Советское государство и право, 1989, № 10, էջ 20.

⁷⁶ Морозова Л.А. Теория государства и права, Учебник. 4-е изд., перераб. и доп., М., Российское юридическое образование, 2010, էջ 341-342.

բերմունքն իրավունքի նկատմամբ, իրավունքի դերի և նշանակության ակնհայտ թերագնահատումը: Ակտիվ իրավական նիհիլիզմին հատուկ է գիտակցական թշնամական վերաբերմունքն իրավունքի նկատմամբ: Այս ուղղության ներկայացուցիչները տեսնում են, թե ինչ կարևոր դեր է խաղում կամ կարող է խաղալ իրավունքը հասարակության կյանքում, դրա համար դեմ են արտահայտվում դրան:

Իրավական ժխտողականությունն արտահայտվում է երկու տարատեսակներով կամ ձևերով՝ տեսական և գործնական: Առաջին դեպքում խոսքը գնում է իրավական ժխտողականության տեսական, հայեցակարգային հիմնավորման մասին. խոսքն այն դեպքերի մասին է, երբ գիտնականները, փիլիսոփաները, քաղաքագետներն ապացուցում են, որ կան ավելի վեհ արժեքներ, քան իրավունքն է: Երկրորդ դեպքում տեղի է ունենում այս ամենի գործնական իրականացում կամ իրագործում:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացնում են իրավական ժխտողականության դրսևորման բազմաթիվ ձևեր, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալը.

1. Առաջին հերթին, դա օրենքների և այլ իրավական ակտերի դիտավորյալ խախտումն է: Այս խախտումները կազմում են քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ հանցագործությունների զգալի մասը: Իրավական նիհիլիզմի դրսևորման առավել վտանգավոր ձևը քրեական հանցագործություններն են, որոնք կարող են պատճառել ֆիզիկական, նյութական և բարոյական վնասներ: Չանցավորությունն իրավական նիհիլիզմի ուժեղ կատալիզատորներից է:

2. Իրավական ակտերի պահանջներին չհետևելը և դրանք չկատարելը, այսինքն՝ սուբյեկտները (քաղաքացիներ, պաշտոնատար անձինք, հասարակական կազմակերպություններ) չեն գործում իրավական նորմին համապատասխան, այլ ձգտում են ապրել ու գործել «իրենց օրենքներով»:

3. Հասարակության մեջ հակաիրավական հոգեբանության ձևավորում, այսինքն՝ այնպիսի նորմերի առկայություն, որոնք արդարացնում են մարդու հակաօրինական վարքագիծը, քարոզում դաժանություն և բռնություն կամ էլ օրենքներ ընդունում՝ ըստ իշխանության ներկայացուցիչների նպատակահարմարության: Այս առիթով Մոնտեսքյոն նշել է. «Առավել մեծ դաժանություն է այն, որը հանդես է գալիս օրինականության ստվերի և արդարության դրոշի ներքո»⁷⁷:

4. «Օրենքների հակամարտություն», այսինքն՝ այնպիսի իրավական համակարգի ձևավորում, որն օրենսդրության համակարգի զուգահեռական է, պետական իշխանության մարմինների կողմից այնպիսի նորմատիվ իրավական ակտերի ստեղծում և հրապարակում, որոնք իրենց բովանդակությամբ իրարամերժ են:

5. Խեղաթյուրված արդարադատություն,

6. Մարդու բնական և անօտարելի իրավունքների ու ազատությունների ոտնահարում, հետևաբար՝ թույլ իրավական պաշտպանվածություն, ինչի հետևանքով անհետանում է հավատն իրավունքի, պետական մարմինների կողմից պաշտպանության ապահովման նկատմամբ: Իրավունքի անզորությունն ինքնին չի կարող դրական վերաբերմունքի արժանանալ, այն, ընդհակառակը, դժգոհություն և բողոք է առաջացնում: Այսինքն՝ իրավունքն ինքն է իրավական ժխտողականության առաջացման պատճառ հանդիսանում. մարդիկ դադարում են հարգել իրավունքը և այն չեն դիտարկում որպես իրենց հուսալի երաշխավոր: Նմանատիպ դեպքերում նույնիսկ օրինապահ քաղաքացու մոտ է առաջանում իրավական ժխտողականություն, անվստահություն է առաջանում գործող ինստիտուտների նկատմամբ:

Ընդհանրապես, հանցավորության մակարդակը կարող է բացասական ազդեցություն ունենալ այն բանի վրա, որ քաղաքացի-

⁷⁷ Монтескье Ш. О духе законов, М., 1956, էջ 456.

ների որոշ մասն իրենց ապահովված չզգան երկրում, չհավատան իրավապահ մարմինների գործունեությանը: Այս առումով Արցախի Հանրապետությունն ունի մի առանձնահատկություն, որն առաջին հայացքից կարող է պարադոքսային թվալ. չնայած երկիրն ապրում է պատերազմական իրավիճակում, սակայն քաղաքացիներն իրենց ավելի անվտանգ ու ապահով են զգում, քան այլ երկրներում: Դրա վկայություններից մեկն այն է, որ հանցավորության մակարդակն Արցախում անհամեմատ ցածր է, եթե համեմատենք հարևան երկրների հետ:

Երիտասարդ իրավախախտները սպառնալիք են ներկայացնում ամբողջ հասարակության համար այն իմաստով, որ նրանցից ոմանք մեծանում են քրեածին ուղղվածությամբ, ինչն էլ ապագայում ավելի ծանր հանցագործությունների կատարման պատճառ կարող է հանդիսանալ: Բացի այդ, նման երիտասարդներն իրենց կենսակերպով բացասական օրինակ են հանդիսանում նաև լավ սովորող ու օրինապահ հասակակիցների համար:

Երիտասարդության իրավական ժխտողականության հիմնական պատճառներից են անբավարար իրավական դաստիարակությունն ընտանիքում, ընտանեկան ձգնաժամերը (ամուսնալուծությունների թվի աճը), տնտեսական անկայունությունը (ծնողների գործազրկությունը), կենսապայմանների անորոշությունը, իրավական համակարգի անկատարությունը (մասնավորապես՝ իրավական դաստիարակության և իրավական կրթության վերաբերյալ օրենսդրական հիմքերի բացակայությունը, օրինաստեղծության և իրավակիրառ բնագավառներում առկա խնդիրները), իրավական կրթության անբավարար մակարդակն ուսումնական հաստատություններում (դպրոցներում, տեխնիկումներում, քոլեջներում, արհեստագործական ուսումնարաններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում):

Իրավական ժխտողականության պատճառներից մեկը երիտասարդների կողմից գործող օրենսդրության չիմացությունը և (կամ)

դրա խախտումն է, ինչը բացատրվում է մի շարք պատճառներով: Այսպես, բնակչության մի մասը չի տիրապետում առկա նորմատիվ իրավական ակտերի բովանդակությանը, մի դեպքում՝ ընդհանրապես չիմանալով, թե որ հարաբերություններն ինչպիսի իրավական ակտերով են կարգավորվում, մյուս դեպքում՝ չեն էլ ձգտում իրավական տեղեկատվություն ստանալ՝ գործելով հակաիրավական եղանակներով: Այստեղ տեղին է հիշատակել Ի.Իլինի այն խոսքերը, որ «ժողովուրդը, որը չի իմանում իր երկրի օրենքները, վարում է հակաիրավական կյանք կամ բավարարվում է... իրավունքի անկայուն մնացորդներով... Ժողովուրդը պետք է իմանա օրենքները... Մարդը, որպես հոգևոր էակ, չի կարող երկրի վրա ապրել առանց իրավունքի: Որպես ազնիվ և օրինապահ՝ կարելի է ապրել սեփական որոշման հիման վրա: Առանց դրա չկա իրավագիտակցություն և հավատարմություն, և քաղաքացին դառնում է ոչ թե իրավակարգի հենարան, այլ՝ խոչընդոտ»⁷⁸:

Իրավական ժխտողականության հաղթահարումն իրենից ներկայացնում է բավականին բարդ գործընթաց, որը կապված է հասարակական կյանքի օբյեկտիվ պայմանների փոփոխման հետ: Դա նպատակաուղղված կազմակերպչական և գաղափարական աշխատանք է, որը ենթադրում է հատուկ իրավական միջոցառումների իրականացում:

Իրավական ժխտողականությունը, լինելով ժամանակակից հասարակության կայուն զարգացման խոչընդոտներից մեկը, «կաթվածահար է» անում հասարակությունը և թույլ չի տալիս, որ այն զարգանա: Երիտասարդության շրջանում առավել հեշտ և արդյունավետ է կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, քանի որ երիտասարդներից յուրաքանչյուրը ցանկանում է ապրել այնպիսի հասարակությունում, որտեղ առկա են բոլոր պայմանները կայուն զարգացման, ինչպես նաև առկա խնդիրը հրատապ լու-

⁷⁸ Ильин И.А. О сущности правосознания, М., 1993, էջ 23-24.

ծելու համար: Ուստի՝ պիտի գործուն միջոցներ ձեռնարկվեն երիտասարդներին մոտիվացնելու և նրանց գործունեությունը խրախուսելու համար:

Իրավական ժխտողականության դեմ պայքարը սովորական մեթոդներով անարդյունավետ է: Անհրաժեշտ է անել ամեն ինչ, որպեսզի «իրավունքը ժողովրդին մոտ լինի՝ զանգվածային իրավագիտակցությունն ամրապնդելու համար, որպեսզի ժողովուրդն իմանա և գիտակցի օրենքները, կրի պարտականություններ, ինչպես նաև՝ օգտվի համապատասխան արտոնություններից: Իրավունքը պետք է դառնա կյանքի գործոն, իրական վարքագծի չափ, ժողովրդական ոգու ուժ»⁷⁹:

Իրավական ժխտողականության հաղթահարման հիմնական ուղիներն են՝ քաղաքացիների ընդհանուր և իրավական մշակույթի, նրանց իրավական և բարոյական գիտակցության բարձրացումը, օրենսդրության կատարելագործումը և դրա մասին քաղաքացիներին իրազեկելը, հանցագործությունների կանխարգելումը, օրինակարգի և իրավակարգի ամրապնդումը, իրավունքի և արդարադատության նկատմամբ հարգանքի սերմանումը, անհատի իրավունքների պաշտպանությունը, բնակչության իրավական դաստիարակությունը, որակյալ իրավաբանների պատրաստումը և այլն:

Այդ միջոցառումները կոչված են ստեղծելու որակապես փոփոխված սոցիալ-իրավական միջավայր, վերականգնել և հաստատել մարդկանց հավատն իրավունքի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ իրավական ժխտողականությունն այնքան խորությամբ է մտել հասարակական կյանք, որ ամբողջությամբ դրա վերացումը մոտակա ժամանակներում անհնար է: Միայն հնարավոր է թուլացնել դրա դիրքերը:

Իրավական ժխտողականության առկայությունը երիտասար-

⁷⁹ Նույն տեղում, էջ 31:

դության շրջանում բացատրվում է նրանով, որ աշակերտներն ու ուսանողները ոչ միշտ ունեն իրավական տեղեկություններ ստանալու ցանկություն, ինչն էլ ունի իր դրդապատճառները:

Երիտասարդության շրջանում իրավական ժխտողականության հաղթահարման՝ որպես սոցիալական և ազգային անվտանգության ապահովման միջոցի, գործոններից են երիտասարդության իրավական կրթությունը և իրավական դաստիարակությունը: Վերջիններիս նպատակն օրենքի նկատմամբ հարգալից վերաբերմունքի սերմանումն է, իրավական ժխտողականության հաղթահարումը, իրավական նորմերի պահանջների կատարումը:

Պրոֆեսոր Ա. Վաղարշյանը որպես իրավական նիհիլիզմի հաղթահարման և իրավական բարձր մշակույթի ձևավորման ճանապարհ դիտարկում է իրավական դաստիարակությունը՝ պետության, նրա մարմինների, կրթական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ կորպորացիաների նպատակամղված, համակարգված գործունեությունը՝ ուղղված իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորմանը, ամրակայմանը, մակարդակի բարձրացմանը⁸⁰:

Երիտասարդության բազմաստիճան, անընդհատ իրավական կրթության և դաստիարակության մոդելը կարող է ունենալ հետևյալ տեսքը. մատաղ սերնդի իրավական սոցիալականացման, այսպես կոչված, զրոյական մակարդակը կազմում է ընտանիքը, առաջին մակարդակը՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններն են, երկրորդ մակարդակը՝ դպրոցն է, երրորդ մակարդակը՝ միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններն են, չորրորդ մակարդակը՝ բանակն է, իսկ հինգերորդ մակարդակը՝ զանգվածային լրատվական միջոցներն են:

⁸⁰ Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, ԵՊՀ, Եր., Յեղ. հրատ., 2017, էջ 229:

Իրավական ժխտողականության հաղթահարման համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ դրա խորության մասին, փորձել հնարավորինս արմատախիլ անել այն և այդ նպատակով մշակել գործունեության ծրագիր՝ դրա իրականացմանը ներգրավելով գիտակրթական և ուսումնական հաստատությունների, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլն: Չարկ է նշել, որ իրավական ժխտողականության հաղթահարման բոլոր ուղիները սերտ փոխկապակցված են և կոչված են հասարակությանը դուրս բերել սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգևոր, բարոյական ճգնաժամից:

Իրավական դաստիարակության և իրավական կրթության գործընթացում անգնահատելի է ընտանիքի դերակատարությունը: Պատճառը նրանում է, որ հենց ընտանիքում է կազմավորվում այն հիմքը, որի վրա էլ հետագայում կառուցվում է մարդու պատկերացումն իրավունքի, մշակույթի, կրթության մասին: Ընտանիքն անհատի առաջնային սոցիալականացման օղակն է:

Ընտանիքի հետ մեկտեղ կարևորվում է նաև ուսումնական հաստատությունների և աշխատանքային կոլեկտիվների դերակատարությունը: Նրանք ևս պետք է մասնակցեն իրավական ժխտողականության կանխարգելման աշխատանքներին:

Չաշվի առնելով իրավական ժխտողականության բացասական ազդեցությունը երկրի ու քաղաքացիների անվտանգության ապահովման վրա՝ առաջարկվում են կոնկրետ քայլեր, որոնք կնվազեցնեն հիշյալ հիմնախնդրի տարածվածության աստիճանը:

1. **կրթության ոլորտում՝** 5-12-րդ դասարաններում (միջին և ավագ դասարաններում) ուսումնասիրել առանձին իրավական առարկա և պարապմունքները կազմակերպել շաբաթական առնվազն 2 ժամ տևողությամբ: Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում «իրավագիտություն» առարկան դասավանդել բոլոր ֆակուլտետներում՝ շաբաթական

առնվազն 2 ժամ տևողությամբ: Իրավունքը պետք է դառնա «ազգի ուժը»:

2. գործնական բնագավառում` ուսումնական հաստատություններում ստացած գիտելիքները գործնական կիրառության մեջ տեսնելու նպատակով նրանց տանել մասնակցելու Ազգային ժողովի նիստերին, 16 տարեկանը լրանալուց հետո` նաև դատավարություններին, այցելել ազատագրկման վայրեր, որտեղ իրենց պատիժն են կրում օրինախախտ քաղաքացիները (հանցագործները):

3. իրավական-տեղեկատվական ոլորտում` ՋԼՄ-ներով իրավական հարցերի լայն լուսաբանում, իրավական թեմաներով հանրային դասախոսությունների կազմակերպում, հերթական տարիներից մեկը «Երիտասարդության իրավական դաստիարակության տարի» հռչակելով և այլն:

Անդրադառնալով այն հարցին` արդյո՞ք Արցախի Չանրապետության երիտասարդության շրջանում առկա է իրավունքի նկատմամբ ժխտողական վերաբերմունք, կարելի է ասել, որ, այո` կա, բայց ոչ մեծ չափերով: Այն հիմնականում դրսևորվում է ժողովրդի իրավական անիրազեկվածությամբ, արդարադատության նկատմամբ անվստահությամբ (խոսքը վերաբերում է ոչ թե Արցախի Չանրապետության ողջ բնակչությանը, այլ` որոշակի հատվածին), օրենսդրական դաշտի անկատարությամբ և իրավագիտակցության ոչ բարձր մակարդակով: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել մի ուրախալի փաստ, որ այստեղ իրավական ժխտողականությունն իր դրսևորման ծայրահեղ ձևերով չի հանդիպվում, ինչում կարող ենք համոզվել` ուսումնասիրելով երիտասարդների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները:

ՎԵՐՋԱԲԱՆ

Աշխատության վերջաբանը պայմանականորեն բաժանել ենք երկու մասերի. առաջին մասում ներկայացված է հետազոտության իրականացման ժամանակահատվածում թեմայի ղեկավար Ավետիք Չարությունյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ գործնական բնագավառում կատարված աշխատանքների մասին ամփոփ տեղեկատվություն, իսկ երկրորդ մասում՝ կոնկրետ առաջարկություններ:

Այսպես, երկամյա ժամանակահատվածում իրականացվել են՝ աշակերտների շրջանում՝

- 2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արցախի Չանրապետության 35 դպրոցների ավագ դասարանների 475 աշակերտների շրջանում հարցաթերթերի միջոցով անց է կացվել սոցիոլոգիական հարցում և ամփոփվել արդյունքները,

- Չափի առնելով այն հանգամանքը, որ աշակերտների 52,2%-ը դրական է պատասխանել **«Ասացեք, խնդրեմ, կցանկանայի՞ք մասնակցել իրավունքի թեմայով օլիմպիադայի»** հարցին, 2017թ. փետրվարի 28-ին կազմակերպվել է «Սահմանադրություն և իրավունք» դպրոցականների հանրապետական առաջին օլիմպիադան, որին մասնակցել են Ստեփանակերտի և բոլոր շրջկենտրոնների 55 աշակերտ, իսկ հաղթողներն ու բարձր արդյունքներ ցուցաբերած աշակերտները պարգևատրվել են օլիմպիադայի հովանավոր Կարեն Սարգսյանի կողմից,

- 2017թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին թեմայի ղեկավար Ա.Չարությունյանն այցելել է Մարտակերտ, Մարտունի, Բերձոր շրջկենտրոններ և Ստեփանակերտի թիվ 11 ավագ դպրոց՝ 2016թ. անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները ներկայացնելու և «Քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի բարձրացումը որպես Արցախի Չանրապետության սահմանադրաիրավական զարգացման նախադրյալ» թեմայով դասախոսությամբ հանդես գալու նպատակով:

ուսանողների (երիտասարդների) շրջանում՝

- 2016թ. մարտ-ապրիլ ամիսներին կազմակերպվել է երիտասարդների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված ուսուցողական դասընթացների շարք, որին մասնակցել են 18-30 տարեկան երիտասարդներ, ինչի շրջանակներում տպագրվել է «Իրավագիտակից երիտասարդ» տեղեկատվական գրքույկը,

- 2017թ. փետրվարի 10-ին Մերգեյլանի ակումբի հրավերով Մեսրոպ Մաշտոց Համալսարանում հանդես է եկել «Իրավագիտակցության հիմնախնդիրն Արցախում» թեմայով դասախոսությամբ,

- 2017թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արցախի Հանրապետության թվով 239 երիտասարդների շրջանում անց է կացվել առցանց սոցիոլոգիական հարցում և ամփոփվել արդյունքները,

- Նրա ղեկավարությամբ Մեսրոպ Մաշտոց Համալսարանի մագիստրանտներից մեկը գերազանցությամբ պաշտպանել է «Անչափահասների հանցավորության մակարդակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում» վերտառությամբ մագիստրոսական թեզ,

- «Facebook» սոցիալական ցանցում ստեղծվել է «Իրավագիտակից Արցախցի» էջ, որտեղ պարբերաբար տեղադրվել են Արցախի իրավական կյանքին ու հիմնախնդիրներին վերաբերող նյութեր, որի նպատակը քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի բարձրացումն է:

Կատարված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Արցախի Հանրապետության ավագ դասարանների աշակերտներն ունեն միջինից բարձր իրավագիտակցության մակարդակ, որը երկրի ներկայիս կարգավիճակի և դրանից բխող մի շարք խնդիրների պայմաններում դրական արդյունք է, բայց ոչ բավարար, ինչի բարելավման ուղղությամբ մեր կողմից ներկայացվում են հետևյալ առաջարկությունները.

1. որպես առաջին քայլ՝ ցանկալի է «Հասարակագիտություն» առարկայի 11-րդ դասարանի դասագիրքը դարձնել ավելի մատչե-

լի, դրան զուգահեռ քայլեր ձեռնարկել ավագ դասարաններում առանձին իրավական առարկա (օրինակ՝ «Պետության և իրավունքի հիմունքներ») մտցնելու ուղղությամբ,

2. նշված դասագրքերում ավելացնել նաև Արցախի Հանրապետության իրավական կյանքին վերաբերող նյութեր, առավել ևս, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունն ունեն կառավարման տարբեր համակարգեր,

3. պարբերաբար վերապատրաստել «Հասարակագիտություն» առարկա դասավանդող ուսուցիչներին,

4. աստիճանական անցում կատարել տվյալ առարկան իրավագետ-մանկավարժի կողմից դասավանդմանը,

5. մշակել և կիրառել նշված առարկայի դասավանդման նորարարական, այդ թվում՝ ինտերակտիվ մեթոդներ,

6. կազմակերպել իրավական թեմաներով օլիմպիադաներ, արտաժամյա դասընթացներ, մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, ինչպես նաև ՁԼՄ-ներով ուժեղացնել իրավական քարոզչությունը, մասնավորապես՝ հեռուստատեսությամբ հեռարձակվող իրավական բնույթի հաղորդումները դարձնել ավելի հետաքրքիր ու կիրառական, իսկ Արցախի Հանրապետությունում լույս տեսնող թերթերի էջերում ստեղծել իրավական անկյուններ և հարց ու պատասխանի միջոցով ներկայացնել քաղաքացիներին հուզող իրավական հարցերի լուծման ուղիները: Ընդ որում, օլիմպիադայում առաջին մրցանակային տեղ զբաղեցրած աշակերտին կարելի է անվճար հիմունքներով ընդունել Արցախի Հանրապետությունում գործող համալսարան՝ վերջինիս ընտրությամբ,

7. կազմակերպել իրավական թեմաներով հեռուստատեսային բանավեճեր և դրանց մասնակից դարձնել հատկապես ավագ դասարանների աշակերտներին,

8. բոլոր դպրոցներում ստեղծել իրավական անկյուններ, պատրաստել իրավական թեմաներով պատի թերթեր, ինչպես նաև օրենքը հարգելու և նրա պահանջները կատարելու վերաբերյալ պաստառներ,

9. ծնողների համար պատրաստել ձեռնարկներ՝ իրենց երեխա-

ների հետ իրավական թեմաներով զրույցներ ունենալու նպատակով, ներառելով նաև այնպիսիք, որոնք կվերաբերեն ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութի բացասական հետևանքներին,

10. Արցախի Չանրապետության ոստիկանության անչափահասների գործերով տեսուչները, որոնք այցելում են դպրոցներ, պետք է պարբերաբար վերապատրաստվեն, կատարելագործեն սեփական գիտելիքներն ու մոտեցումները, իսկ աշակերտների հետ հանդիպումների ժամանակ քննարկեն արդիական ու պետության համար կենսական նշանակություն ունեցող հարցեր,

11. Արցախի Չանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում և բոլոր շրջկենտրոններում ստեղծել մանկապատանեկան իրավական դպրոցներ, ուր աշակերտները կարող են հաճախել փոքր տարիքից ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված մեթոդներով ստանալ իրավական գիտելիքներ,

12. տեսական գիտելիքները գործնականում ամրապնդելու և պետական մարմինների գործունեությանը ծանոթանալու նպատակով ցանկալի է որոշակի պարբերականությամբ այցեր կազմակերպել պետական իշխանության, մասնավորապես՝ իրավապահ մարմիններ,

13. անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները վկայում են, որ Արցախի Չանրապետության Սահմանադրության արժեհամակարգի ընկալունակության աստիճանը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է պատրաստել Չիմնական օրենքի մեկնաբանությունների վերաբերյալ գիտահանրամատչելի աշխատություն, որից կօգտվեն ինչպես ուսուցիչները, այնպես էլ աշակերտները:

Վերլուծության ենթարկելով Արցախի Չանրապետության երիտասարդության իրավագիտակցության մակարդակի բացահայտման նպատակով անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ կարելի է եզրահանգել, որ՝

1. Երիտասարդների մոտ առկա է ընդգծված ցանկություն դեպի իրավագիտություն առարկան, ինչի ուղղությամբ անհրաժեշտ է

իրականացնել գործնական քայլեր ինչպես դասաժամերի ավելացման, այնպես էլ՝ դասավանդման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ,

2. քանի որ հարցվողներն ունեն սեփական իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու տրամադրվածություն, ցանկալի է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, փաստաբանական պալատի և նման ուղղվածությամբ այլ կառույցների հետ համատեղ կազմակերպել ուսուցողական դասընթացներ և արտաժամյա պարապմունքներ ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ, որը կնպաստի, որպեսզի երիտասարդներն ավելի խորությամբ ու նորովի ընկալեն ինչպես երկրի իրավական համակարգը, այնպես էլ տարբեր կառույցների կենսագործունեության հետ կապված նրբությունները,

3. սեփական իրավագիտակցության մակարդակի վերաբերյալ երիտասարդներն ունեն մի փոքր չափազանցված կարծիք, քանի որ հարցվողների 48,7%-ն այն գնահատել է բարձր, իսկ 43,9%-ը՝ միջին, այսինքն՝ ստացվում է, որ հարցվողների 92,6%-ն ունի առնվազն միջին ու բարձր իրավագիտակցության մակարդակ, ինչի հետ համամիտ չենք այն հիմնավորմամբ, որ որոշ դեպքերում նույնիսկ բակալավրիատի կամ մագիստրատուրայի ուսանողը հստակ պատկերացում չունի, թե Արցախի Չանրապետությունում կառավարման ինչ մոդել է, որո՞նք են իշխանության ճյուղներն ու նրանց լիազորությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, տեղական ինքնակառավարման դերն ու խնդիրները և այլն:

Արցախի Չանրապետության բուհերում իրավաբանական կրթության հիմնախնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել որոշակի քայլեր.

1. անհրաժեշտ է վերանայել ու կատարելագործել բուհի իրավաբանական ֆակուլտետ կամ բաժին ընդունվելու համար սահմանված պահանջները, մասնավորապես՝ դիմորդը պարտադիր

կերպով պետք է հանձնի քննություն «Հասարակագիտություն» առարկայի իրավագիտության բաղադրիչից, դրանով իսկ՝ բուհ ընդունվելուց առաջ ստուգելով նրա իրավական գիտելիքների մակարդակը,

2. բուհերի դասախոսները պետք է պարբերաբար վերապատրաստվեն, արտասահմանում մասնակցեն գիտաժողովների, գոնե տարին մեկ անգամ հողված հրապարակեն ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում, ինչպես նաև կատարելագործվի դասավանդման մեթոդաբանությունն ու ուշադրություն դարձվի դասախոսների վարձատրությանը,

3. անհրաժեշտ է առաջնորդվել դասախոսների նեղ մասնագիտական ուղղվածությամբ դասավանդման սկզբունքով, որի դեպքում պետք է բացառվի այն ընդունված պրակտիկան, որ, օրինակ, քաղաքացիական իրավունքի մասնագետը դասավանդի քրեական իրավունք կամ պետության և իրավունքի տեսության մասնագետը՝ միջազգային իրավունք կամ էլ՝ հակառակը,

4. ուսանողների ստացած տեսական գիտելիքները պետք է ներդաշնակել գործնական հմտությունների հետ,

5. բուհերի գրադարանները պետք է համալրել ինչպես էլեկտրոնային, այնպես էլ ժամանակակից տպագիր մասնագիտական գրականությամբ,

6. Հաշվի առնելով հասարակության ու պետության կյանքում իրավաբանի մասնագիտությունը կարևորելու և գնահատելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է Արցախի Հանրապետության տոնացույցում մտցնել իրավաբանի օր և այն նշել մայիսի 13-ին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ
ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ**

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Իրավական պետության զարգացումը և քաղաքացիական հասարակության ձևավորումն Արցախի Հանրապետությունում պահանջում են իրավական բարձր մշակույթ, առանց որի չեն կարող ամբողջությամբ իրացվել հասարակական կյանքի այնպիսի հիմնարար արժեքներ և սկզբունքներ, ինչպիսիք են մարդու՝ բարձրագույն արժեք լինելը, իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների և ազատությունների անքակտելիությունը, հանրային շահերի հուսալի պաշտպանությունը: Իրավական մշակույթի մակարդակի բարձրացման շրջանակներում առանձնակի կարևորություն ունի իրավական դաստիարակության և իրավական կրթության բարձր մակարդակի ապահովումը: Ընդ որում, իրավական մշակույթի մակարդակի բարձրացումն առանց հասարակության իրավագիտակցության բարձրացմանն ուղղված միջոցառումների չի կարող լինել ամբողջական և արդյունավետ:

2. Քաղաքացիների իրավական իրազեկվածության, իրավական գրագիտության և իրավագիտակցության բարձրացման հայեցակարգում (այսուհետ՝ Հայեցակարգ) նախասահմանվում են տվյալ ոլորտում Արցախի Հանրապետության պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, հիմնական ուղղությունները և բովանդակությունը:

3. Սույն Հայեցակարգն ուղղված է բնակչության իրավական մշակույթի մակարդակի բարձրացմանը, օրենքի, արդարադատության և դատարանի, ազնվության և կարգապահության՝ որպես սոցիալական վարքագծի տիրապետող մոդելի նկատմամբ բացարձակ հարգանքի դրսևորմանը, ինչպես նաև հասարակությունում իրավական ժխտողականության հաղթահարմանը, որը խոչընդոտում է Արցախի Հանրապետության՝ որպես ժամանակակից քաղաքակիրթ երկրի զարգացմանը:

4. Հայեցակարգն իրականացվելու է Արցախի Հանրապետության ժողովրդի, առանձին սոցիալական խմբերի և յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ: Ընդ որում, հատուկ ուշադրություն է դարձվելու մատաղ սերնդի իրավագիտակցության և իրավական գրագիտության մակարդակի բարձրացմանը:

5. Հայեցակարգի իրականացմանը պետք է մասնակցեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակական կազմակերպությունները: Հայեցակարգը պետք է իրականացվի կրթության ոլորտի շահառուների լայն ներգրավմամբ և աջակցությամբ, ինչպես նաև կրթության ոլորտում ծրագրեր ֆինանսավորող պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

6. Հայեցակարգն իրականացվելու է քաղաքացիական հասարակության կառույցների հետ սերտ համագործակցելով:

7. Հայեցակարգն առաջնորդվում է Արցախի Հանրապետության ժողովրդի պատմականորեն ձևավորված բարոյական նորմերով և համընդհանուր բարոյական արժեքներով, որոնք ուղղված են քաղաքացիների իրավաչափ և բարեխիղճ վարքագծի ապահովմանը:

8. Հայեցակարգն իրականացվում է Արցախի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի կատարելագործմանն ուղղված ծրագրերի, մասնավորապես՝ պետական և համայնքային կառավարման ու իրավապահ գործունեության

արդյունավետության բարձրացման հետ համատեղ:

9. Սույն Չայեցակարգը հիմնված է այն հիմնարար գաղափարի վրա, որ երկրի բնակչության մոտ օրինապահության գաղափարի արմատավորումը և իրավաչափ վարքագծի խթանումը հասարակական զարգացման գրավականներից են, իսկ որակյալ իրավաբանական կրթությունն ու իրավական դաստիարակությունը պետական կառավարման արդյունավետության բարձրացման, իրավական մտածողության զարգացման և իրավական պետության կայացման կարևորագույն նախադրյալ են:

II. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՅԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

10. Իրավական պետության պայմաններում, սոցիալական կարգավորիչների շրջանակներում մեծանում է օրենքի դերակատարությունը, մարդկանց վարքագծում, հասարակության և պետության կյանքում գերակշռում է իրավական սկիզբը: Իրավական մշակույթի և իրավագիտակցության ցածր մակարդակը, Արցախի Չանրապետության քաղաքացիների իրավական ժխտողականությունն իրավունքի գերակայության սկզբունքի իրացման լրջագույն խնդիրներից է:

11. Իրավական ժխտողականության տարածման պայմաններից են Արցախի Չանրապետության օրենսդրության և դրա իրացման պրակտիկայի անկատարությունը, իրավունքի նորմերի կիրառման ընտրողականությունը, օրենքի պահանջների անխտիր իրականացումը երաշխավորող ինստիտուցիոնալ կառուցակարգերի բավարար չլինելը և այլն: Իրավական ժխտողականությունն արժեզրկում է հոգևոր-բարոյական իրական արժեքները, հիմք է հանդիսանում սոցիալական բազմաթիվ բացասական երևույթների համար:

12. Իրավական մշակույթի և դրական իրավագիտակցության ու իրավական վարքագծի վրա ազդում են հետևյալ գործոնները.

1) ընտանիքում դաստիարակության ու բարոյական մթնոլորտի բնույթը, ծնողների օրինապահ վարքագիծը,

2) տարբեր տեսակի ուսումնական հաստատություններում դաստիարակության և կրթության մակարդակը, այդ թվում՝ սովորողների իրավագիտակցության հիմքերի ամրապնդումը և զարգացումը,

3) բնակչության իրավական գրագիտությունը և իրավագիտակցությունը կազմավորող՝ ընկալման համար հասանելի տեղեկատվական նյութերի՝ տպագիր, էլեկտրոնային, տեսալսողական և այլ ձևերով, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով տարածումը և օգտագործումը,

4) պետական և համայնքային ծառայությունների համակարգում բնակչությանը մատուցվող ծառայությունների հասանելիությունը և թափանցիկությունը, արդարադատության, խախտված իրավունքների դատական պաշտպանության, դատարանների և դատական ակտերն իրականացնող մարմինների գործունեության կատարելությունը և արդյունավետությունը, պետական և համայնքային ծառայողների կողմից օրենքների և մասնագիտական էթիկայի նորմերի խստիվ պահպանումը,

5) օրենսդրության թափանցիկությունը, հասանելիությունը և արդյունավետությունը, նրա համարժեքությունը երկրում տիրող տնտեսական և հասարակական-քաղաքական իրավիճակին, արդարության և հավասարության սկզբունքների իրացումն օրենսդրությունում, իրավունքի նորմերի՝ տարբեր սոցիալական խմբերի շահերին և պահանջարկներին համապատասխանության ապահովումը,

6) Արցախի Չանրապետության օրենսդրության վիճակի նկատմամբ համակարգված և որակյալ հսկողությունը՝ այն օպտիմալացնելու, նրանում առկա բացերն ու իրարամերժ դրույթները վե-

րացնելու, այն ինկորպորացնելու և կողիֆիկացնելու նպատակով, ինչպես նաև՝ իրավակիրառման, օրենքները ոչ ճիշտ հասկանալու և կիրառելու հետևանքով առաջացող խնդրահարույց իրավիճակների բացահայտման և վերլուծության նկատմամբ վերահսկողությունը,

7) իրավապահ և իրավասու այլ մարմինների արդյունավետ, արհեստավարժ ու օրինական գործունեությունը՝ կապված հանցագործությունների և օրենքի այլ խախտումների բացահայտման ու խախտման հետ, օրենքի խախտման համար համաչափ և արդար պատասխանատվության անխուսափելիության ապահովումը,

8) քաղաքացիների մեծամասնության համար կենսական առավել կարևոր ոլորտներում իրավակարգի ապահովումը, բնակչությանը ծառայություն մատուցող և ապրանքների իրացում ապահովող կազմակերպությունների կողմից նորմատիվ պահանջների կատարումը,

9) որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը քաղաքացիներին, իրենց արհեստավարժ գործունեության ընթացքում մասնավոր իրավաբանների կողմից օրենքների և մասնագիտական էթիկայի նորմերի անխտիր պահպանումը,

10) ստեղծագործական մասնագիտություն ունեցող անձանց և նրանց միավորումների, զանգվածային լրատվության միջոցների, հեռահաղորդակցության կազմակերպիչների, տպագրական կազմակերպությունների, հասարակական գիտակցության մեջ իրավապահ վարքագծի մոդելը որպես հասարակական ընդունելի օրինակ ակտիվ քարոզող ստեղծագործությունների ձևավորմանը և տարածմանն ուղղված գովազդային կազմակերպությունների գործունեությունը:

III. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

13. Հայեցակարգն իրականացվելու է հետևյալ սկզբունքների հիման վրա.

- 1) օրինականություն,
- 2) ժողովրդավարություն,
- 3) մարդասիրություն,
- 4) հայրենասիրական, աշխատանքային, բնապահպանական և դաստիարակության այլ տեսակների փոխկապակցվածությունն ընդհանուր հայրենասիրական հիմքի վրա,
- 5) քաղաքացիական հասարակության հետ պետության փոխկապակցվածության ապահովումը,
- 6) իրավական պետության և քաղաքացիական հասարակության զարգացման օրինաչափություններին համապատասխանումը:

IV. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Հայեցակարգի նպատակներն են.

- 1) օրենքի նկատմամբ հարգանքի ձևավորումը, իրավական ժխտողականության հաղթահարումը,
- 2) Արցախի Հանրապետության քաղաքացիների իրավական մշակույթի, իրավական իրազեկվածության և իրավաբանական գրագիտության մակարդակի բարձրացումը,
- 3) գործող օրենսդրության պահանջների պահպանման նպատակով խթանող համակարգի ձևավորումը՝ որպես սոցիալական վարքագծի հիմնական մոդել,
- 4) հասարակական գիտակցության մեջ պարտականությունների բարեխիղճ կատարման և իրավական նորմերի պահպանման գաղափարի ներդրումը,

5) իրավական դաստիարակության և իրավական վարքագծային մշակույթի արմատավորման հանրային համակարգի ձևավորման, իրավաբանական կրթության զարգացման միջոցառումների մշակման և իրականացման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծումը:

15. Հայեցակարգն իրականացվելու է հետևյալ հիմնական ուղղություններով.

1) Արցախի Հանրապետության քաղաքացիների իրավական դաստիարակություն ու իրավական իրազեկվածություն,

2) ուսումնական գործընթացում իրավունքի բնագավառի գիտելիքների ստացումն ապահովող ուսումնական ծրագրերի, ուսումնամեթոդական նյութերի ներդրում՝ ուսումնական հաստատություններում ուսում ստացող մատաղ սերնդի իրավական կրթության և դաստիարակության զարգացումն ապահովելու նպատակով,

3) իրավաբանական կրթության կատարելագործում և որակյալ իրավաբանների ու իրավունքի բնագավառի կադրերի նախապատրաստում,

4) մշակույթի, գանգվածային լրատվամիջոցների, գովազդների, հրատարակչական գործունեության բնագավառների վերափոխում՝ ուղղված քաղաքացիների իրավական մշակույթի և իրավագիտակցության բարձր մակարդակի արմատավորմանը,

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավապահ մարմինների գործունեության կատարելագործում՝ ուղղված օրինականության ու պետական և համայնքային ծառայողների իրավագիտակցության բարձրացմանը,

6) որակյալ իրավաբանական օգնություն տրամադրելուն ուղղված գործունեության կատարելագործում, այդ թվում՝ Արցախի Հանրապետությունում անվճար իրավաբանական օգնության արդյունավետ համակարգի ներդրում:

**V. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱՎԱՆԱՑՎԵԼԻՔ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ**

16. Իրավակիրառման բնագավառում իրականացվելիք միջոցառումներից են.

1) քաղաքացիների կողմից իրենց իրավունքներն ու ազատություններն իրականացնելու, պարտականությունները կատարելու, ինչպես նաև քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանության իրավական մեխանիզմների կատարելագործումը,

2) Հայեցակարգի հիմնական ուղղությունների իրացման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական բազայի ստեղծումը, նորմաստեղծ գործունեության կատարելագործումը, նորմատիվ իրավական ակտերի որակի բարձրացումը,

3) Արցախի Հանրապետության օրենսդրության և իրավակիրառման համակարգված մշտադիտարկման կազմակերպումը՝ օրենսդրության թերությունների, բացերի և իրարամերժ դրույթների բացահայտման նպատակով,

4) իրավական տեղեկատվության մատչելիության ապահովումը, քաղաքացիների իրավական դաստիարակության և տեղեկացվածության համակարգի զարգացումը, ներառյալ՝ տեղեկատվական-իրավական ռեսուրսների զարգացումը և համապատասխան տեղեկատու համակարգերի արդյունավետ գործունեության ապահովումը,

5) հասարակության բոլոր շերտերին իրավաբանական օգնության, այդ թվում՝ փաստաբանների և նոտարների կողմից տրամադրվող իրավաբանական օգնության հասանելիության ապահովումը,

6) քաղաքացիների իրավական դաստիարակության գործում իրավաբանների մասնակցության պրակտիկայի զարգացումը, ինչպես նաև բնակչության իրավագիտակցության զարգացումը,

7) իրավական դաստիարակության ոչ պետական ձևերի զարգացումը, պետական աջակցությունն այդ գործընթացին:

**VI. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ,
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԻՐԱՎԱՊԱՅ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ**

17. Պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց, պետական և համայնքային ծառայողների, իրավապահ մարմինների աշխատակիցների անհրաժեշտ իրավաբանական գիտելիքներ ունենալուն, նրանց իրավական մշակույթի բարձրացմանն ուղղված միջոցառումներից են.

1) մասնագիտական կրթություն ստանալու միջոցով իրավունքի ոլորտի համապատասխան գիտելիքների ստացմանը և կատարելագործմանը նպաստելը, պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական ծրագրերով վերապատրաստելը, նրանց մասնագիտական գիտելիքների կատարելագործելը,

2) պետական և համայնքային ծառայողների պատրաստման և վերապատրաստման համակարգերի կատարելագործումը, իրավական մշակույթի կատարելագործման նպատակով նրանց մասնագիտական ունակությունների կատարելագործումը և հավելյալ ուսուցանումը,

3) պետական և համայնքային ծառայողների գործունեության շրջանակներում անպատասխանատվությանը և իրավական ժխտողականությանը նպաստող գործոնների վերացումը, իրավապահ գործունեության օրինախախտումների և ծառայողական էթիկայի կանոնների խախտումների նախականխումը,

4) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, բնակչությանն իրավաբանական օգնություն

տրամադրելու տեսակների և ձևերի մասին տեղեկատվությունը բնակչությանը տրամադրելու միջոցների մշակումը և կատարելագործումը, վերոգրյալ մարմինների իրավասությանը պատկանող հարցերի վերաբերյալ քաղաքացիներին բանավոր և գրավոր իրավաբանական խորհրդատվություն տրամադրելը, տվյալ մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հանրամատչելիությունը, այդ թվում՝ պաշտոնական կայքէջերում համապատասխան նյութեր տեղադրելու միջոցով,

5) իրավապահ մարմինների փոխազդեցության ընդլայնումը հասարակության, զանգվածային լրատվամիջոցների, հեռահաղորդակցության կազմակերպությունների, ստեղծարար մասնագիտությունների ներկայացուցիչների հետ՝ նպատակ ունենալով ցուցադրել իրավապահ գործունեության դրական դրսևորումները և հակազդել քրեական մշակույթին ու սոցիալական վարքագծի հակաիրավական դրսևորումներին:

**VII. ՀԱՅԵՑԱՎԱՐԳԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

18. Մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներից են.

1) նախադպրոցական և տարրական հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ծրագրերում ներառելու համար երեխաների՝ իրենց հասակակիցների և մեծերի հետ շփվելու համընդունելի տարրական նորմերին և կանոններին հաղորդակից դարձնելու նպատակով համապատասխան առաջարկությունների նախապատրաստումը, ինչպես նաև անհատի արժեքային-հմաստային զարգացումը,

2) տարբեր տիպի և ձևի ուսումնական հաստատություններում իրավունքի հիմունքների դասավանդման պրակտիկայի զարգա-

ցումը, իրավական կրթության տարբեր տարածաշրջանային մոդելներին աջակցելը, կրթական ծրագրերին, ուսումնամեթոդական ծրագրերին համապատասխանող իրավական թեմատիկայով ուսումնական դասընթացներ մշակելը, կրթական գործընթացի բոլոր մասնակիցների՝ ուսումնական հաստատությունների կառավարմանը ներգրավված լինելու պրակտիկայի զարգացումը,

3) կենսական դժվար պայմաններում գտնվող երեխաների, խնդրահարույց դեռահասների և անչափահաս հանցագործների նկատմամբ իրավական դաստիարակության և կրթության հատուկ ծրագրերի կիրառումը,

4) Արցախի Յանրապետությունում իրավական դաստիարակության լրացուցիչ ծրագրերի տարածումը մեծահասակների շրջանում,

5) ուսուցիչների իրավական գրագիտության բարձրացումը, «Յասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստումը, ինչպես նաև իրավունքի այս կամ այն ճյուղը դասավանդող ուսուցիչների մասնագիտական և մեթոդական նախապատրաստումը, իրավական կրթության գիտամեթոդական ապահովման նպատակով փորձնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացումը:

19. Մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումները պետք է ընթանան հետևյալ մակարդակներում.

1) նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրավական կրթության, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրավունքի ուսուցման և հասարակության իրավական համաուսուցման համակարգի կատարելագործում.

Նախադպրոցական և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պետության քաղաքականության կարևորագույն խնդիրներից է բարձր իրավագիտակցությամբ օժտված քաղաքացիների դաստիարակության ապահո-

վումը: Այս առումով, թե՛ նախադպրոցական, թե՛ հանրակրթական ծրագրերն ունեն վերանայման և իրավական կրթությանը նվիրված դասընթացների ընդլայնման կարիք:

Հաջողված բարեփոխումներ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է, մասնավորապես, Արցախի Հանրապետության նախադպրոցական կրթության համակարգում ներդնել իրավական կրթության ու դաստիարակության նոր սկզբունքներ:

Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան ռազմավարական ծրագրերում երեխայի ֆիզիկական, հոգեկան, բարոյական, մտավոր զարգացման հիմքերի ստեղծումից բացի անհրաժեշտ է նախադպրոցական կրթության հիմնական խնդիր ճանաչել նաև երեխայի իրավական դաստիարակությունը: Դրանից ելնելով՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը և ծրագիրը մշակելիս պետք է հաշվի առնել նաև նախադպրոցական կրթության առաջարկվող նոր խնդիր-նպատակը՝ իրավական դաստիարակության ապահովումը: Հաջորդ քայլը նախադպրոցական կրթության համար ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի ծրագրային փաթեթի մշակումն ու կիրառումն է:

Չափորոշիչների, ծրագրերի վերանայված համալիրը և դրանց կիրառությունը կարևոր նշանակություն կունենան երեխայի վաղ մանկության շրջանում օրենքի և, ընդհանրապես, օրինականության նկատմամբ հարգանքի ձևավորման համար:

Կարևոր է հանրակրթական տարրական, միջին և ավագ մակարդակների կրթական ծրագրերում կատարելագործել իրավական համաուսուցման և դաստիարակության համակարգի կատարելագործումը:

Իրավական կրթությունը և դաստիարակությունը պետք է դառնան ուսումնական առանձին բնագավառ և դրանից բխող անհրաժեշտ փոփոխություններ կատարվեն հանրակրթության պետական չափորոշիչում:

Նման հայեցակարգային-ծրագրային փոփոխությունը կբարձ-

րացնի սովորողների իրավագիտակցության աստիճանը և իրավական մշակույթ կձևավորի հանրակրթության բոլոր մակարդակներում՝ տարրական (1-4-րդ դասարաններ), միջին (5-9-րդ դասարաններ), ավագ (10-12-րդ դասարաններ) դասարաններում, նախադրյալներ կստեղծի կրթական հաջորդ աստիճանում իրավաբանական կրթության համար պահանջվող կրթական մակարդակի ապահովման համար:

2) միջին մասնագիտական իրավաբանական կրթության համակարգի ձևավորում և զարգացում.

Իրավունքի ոլորտում միջին մասնագիտական իրավաբանական կրթության նախատեսումն ու զարգացումը կնպաստեն պետական համակարգի առանձին մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Խոսքը վերաբերում է աշխատանքի այն տեսակներին, որոնց համար միջին մասնագիտական իրավաբանական կրթությունը կարող է բավարար լինել:

Միաժամանակ, շարունակում է արդիական լինել միջին մասնագիտական իրավաբանական կրթության համակարգի կատարելագործումը և դրա արդյունավետ կիրառությունը գործնականում: Այս նպատակով անհրաժեշտ է՝

ա. միջին մասնագիտական կրթության ոլորտում իրավունքի բնագավառի նոր մասնագիտությունների (օրինակ՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման, ոստիկանության պարեկապահակային ծառայության, քրեակատարողական ծառայության և այլ ոլորտներում) վերհանում և այդ մասնագիտություններով պաշտոն զբաղեցնելու համար միջին մասնագիտական կրթության առկայության պահանջի սահմանում,

բ. իրավունքի ոլորտի միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի և դրանց համար պետական կրթական չափորոշիչների սահմանում,

գ. իրավունքի ոլորտի միջին մասնագիտական կրթության կրթական ծրագրերի մշակում և կրթական ծրագրերի ներդրմանն

ուղղված պետական աջակցության ապահովում,

դ. կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով ուսանողների շարժունակության ապահովում միջին մասնագիտական կրթական համակարգի ներսում, ինչպես նաև միջին մասնագիտական համակարգից դեպի բարձրագույն մասնագիտական կրթության համակարգ և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգ՝ միջին մասնագիտական կրթական համակարգ:

3) բարձրագույն իրավաբանական կրթության համակարգի վերափոխում.

Բարձրագույն իրավաբանական կրթության հասարակական կենսունակության և նպատակային կիրառության ապահովման նպատակով անհրաժեշտ է այն ենթարկել հետևողական կատարելագործման:

Արցախի Յանրապետությունում իրավաբանական կրթության կազմակերպման թերություններն են, օրինակ՝ պրակտիկայի կարիքներին կրթության բովանդակության անհամապատասխանությունը, դասավանդման ոչ արդյունավետ մեթոդաբանությունը և ավելորդ ձևականությունը, ուսումնական հաստատություններում իրավաբանական կրթությանը ներկայացվող հատուկ պահանջների բացակայությունը և այլն:

Ըստ այդմ, բարձրագույն իրավաբանական կրթության ոլորտում բարեփոխումները պետք է ուղղված լինեն հետևյալ հիմնական խնդիրների լուծմանը.

1) որակյալ իրավաբանական կրթության ապահովում և գործնական հմտություններով օժտված մասնագետների պատրաստում,

2) պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործում և գիտական ներուժի լիարժեք օգտագործում,

3) իրավաբանական կրթության միջազգայնացման, միջազգային չափորոշիչներին դրա համապատասխանության ապահովում:

20. Իրավաբանական կրթության և իրավաբանական անձնակազմի նախապատրաստմանն ուղղված միջոցառումներից են.

1) հետազայում այս կամ այն պաշտոնը համալրելու նպատակով որակյալ իրավաբաններ նախապատրաստելու համար անհրաժեշտ միջոցների գործադրումը,

2) Արցախի Յանրապետության տնտեսական պահանջարկի հաշվարկումը բարձրագույն իրավաբանական կրթությամբ մասնագետների բնագավառում՝ միաժամանակ նախապատրաստելով պրակտիկ գործունեությանը միտված մասնագիտական նախապատրաստմանն ուղղությունները,

3) Արցախի Յանրապետությունում բարձրագույն մասնագիտական այնպիսի կրթական հաստատությունների դրական փորձի տարածումը, որոնք ուղղված են իրավաբանական կադրերի նախապատրաստմանը, ինչպես նաև բնակչությանն ուսանողների կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով իրավաբանական կլինիկաների կազմավորմանը և գործունեությանը:

**VIII. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ,
ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ,
ՅԵՌԱՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ, ԳՈՎԱԶԴԻ ԵՎ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ**

21. Հայեցակարգի միջոցառումները մշակույթի, զանգվածային լրատվամիջոցների, հեռահաղորդակցության, գովազդի և հրատարակչական գործունեության բնագավառներում հետևյալն են.

1) Արցախի Յանրապետության զանգվածային էլեկտրոնային և տպագիր մամուլում, հեռուստատեսությամբ ու ռադիոյով, սոցիալական գովազդներում, համացանցում ներկայացված իրավական տեղեկատվություն պարունակող նյութերի, ինչպես նաև քաղաքացիների իրավական գրագիտության և իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը նպաստող, ինչպես նաև օրինապահու-

թյուն, իրավունքների և պարտականությունների ազնիվ կատարումը, իրավունքների և օրենքով պաշտպանվող շահերի նկատմամբ հարգալից վերաբերմունք սերմանող (այդ թվում՝ մշտական թողարկումների և թեմատիկ ծրագրերի միջոցով) տեղեկատվության տարածմանն աջակցելը,

2) Արցախի Յանրապետությունում ոչ մասնագիտական ընկալման համար մատչելի ստեղծագործական ծրագրերի, իրավաբանական հիմնարար գիտելիքներ պարունակող և քաղաքացիների իրավական մշակույթն ու իրավագիտակցությունը կազմավորող տեղեկատվական նյութերի նախապատրաստումը և տարածումը, ինչպես նաև նման ծրագրերին ու նյութերին պետական խթանող աջակցության համակարգերի նախապատրաստումը և իրականացումը,

3) նպատակային հանրահայտ իրավաբանական գրականության մշտական համալրումը հանրամատչելի գրադարանային ֆոնդեր:

**IX. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒՆ**

22. Քաղաքացիական հասարակության ինստիտուտներին աջակցելուն ուղղված ծրագրի միջոցառումներից են իրավագիտակցության և իրավական մտածողության ոչ պետական ձևեր կազմավորող ու զարգացնող, սոցիալական համագործակցության շրջանակներում, սեփական միջոցներով, իրավական օգնություն և տեղեկատվություն տրամադրող, քաղաքացիների իրավական մշակույթի զարգացման և իրավագիտակցության կազմավորման հարցերում հայեցակարգի իրականացմանն աջակցող հասարակական կազմակերպություններին պետական աջակցություն ցուցաբերելը:

**Ճ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

23. Հայեցակարգի՝ կազմակերպչական և մեթոդաբանական բնույթի միջոցառումներից են.

1) գործադիր իշխանության մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխհամագործակցության համակարգման ապահովումը հայեցակարգի իրականացման շրջանակներում,

2) պետական և համայնքային մարմինների խնդիրների և իրավասությունների, ինչպես նաև նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակի ստանդարտների, այս բնագավառում հսկողության մեխանիզմների բացահայտումը,

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ հայեցակարգի իրականացման համար ծրագրերի մշակումը և իրականացումը,

4) հայեցակարգի իրականացման գիտական և մեթոդաբանական ապահովումը՝ օգտագործելով հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի, զանգվածային հաղորդակցության տեսության, կրիմինոլոգիայի և այլ գիտությունների բնագավառներում ունեցած ձեռքբերումները:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՎԱԳ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ
ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՆՄՈՒՇ**

Ամսաթիվ __ / __ / 2016

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ № _____

Հարգելի հարցվող,

ԼՂՀ հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների իրավագիտակցության մակարդակը բացահայտելու նպատակով անցկացվում է սոցիոլոգիական հարցում: Ձեր մասնակցությունն այս հարցմանը և անկեղծությունը շատ կարևոր են, ուստի խնդրում ենք մի փոքր ժամանակ տրամադրել և պատասխանել հարցերին: Հարցումն անանուն է, այսինքն՝ Ձեր անունը ոչ մի տեղ չի նշվելու և Ձեր մասին որևէ տեղեկություն չի տարածվելու: Տվյալներն օգտագործվելու են միմիայն ընդհանրացված տեսքով: Հարցերին պատասխանելիս Ձեր կարծիքին մոտ տարբերակը վերցրեք շրջանակի մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում գրեք Ձեր սեփական տարբերակը:

1. Ասացեք, խնդրեմ, երբ է ընդունվել «ԼՂՀ հռչակման մասին» հռչակագիրը:

1. 1988թ. փետրվարի 20-ին
2. 1991թ. սեպտեմբերի 2-ին
3. 1991թ. դեկտեմբերի 10-ին
99. Դժվարանում եմ պատասխանել

